



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

893

205

9-27

1861

2010

ԱՌՍՔԻՆԻ

ՈՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

1m

1847-1848

1847-1848



205
9-27

37

պ.

ԱՌՍՔԻՆԻ

66
87

ՈՒՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

ՅՕՐԻՆԵԱՑ

ԿԵՍԱՐ ԳԱՆԴՈՒ

1880.



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՂԱԶԱՐՈՒ

1861



2001

100

Handwritten scribbles and marks in the top right corner.

Handwritten mark in blue ink, possibly "B1".

Handwritten text in red ink, possibly "МАССА".

30106-Ц. н.



(249)
41

13322-58



5003


Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ահա Գանդու Իտալիոյ կենդանի հեղինակաց մէջ նշանաւորներէն մէկն է, ծնեալ Միլանու սահմաններուն մօտ Պրիզիոյ աւանը, 1805ին: Իր մտաց յաջողակութեամբը շուտ մը մանկութեան հասակին մէջ ուսման ընթացքը կատարելով, 18 տարուան Սոնտիոյ քաղքին դպրոցին մէջ մատենագրութեան դասատու եղաւ: Ահապէս մեծ մասը Միլան անցուց, և ազատականաց կողմը բռնելով գրեց Խորհրդածոն-Լիւն+ զպապճոն-Լենէ Լոմպարդիոյ յժէ դարու անունով գիրք մը, որուն համար տարի մը բանտարգուեցաւ Աւստրիոյ վարչութեանէն. և այն բանտարգելութեան օրերուն մէջ շարադրեց Մարգարիտա Բոստերլա անունով պատմական վիպասանութիւն մը, որ ըստ ոմանց Մանձօնիի Խօսեալն կոչուած վիպասանութեան փառացը կը մերձենայ: Բայց աւելի Գանդուի անունը հրու-

չակողներն եղան իրեն ժողովրդական ու բարոյա-
կան գրքոյկները, որոնց մէկն է նաև Առաքիլի ու
Կաղապարի պատանիքն, որ բնական ու պարզ ոճով
մը քայլ առ քայլ կ'ընտանեցընէ պատանեաց ի-
րենց պարտքերը, և առաքինութիւնը դիւրին և սի-
րելի կ'ընէ: Երեսունէն աւելի տպագրութիւն է-
ղած է իր այս և ուրիշ այսպիսի բարոյական գրուա-
ծոց հատորիկներուն:

Գանդու այս գրուածքներէս զատ դեռ շատ ու-
րիշ երկասիրութիւններ ալ ունի, ինչպէս են Աւ-
ճիկօ կամ Լոմպարպիական Գաշնահոյութիւն, և այլևայլ
օրագրաց համար գրած յօդուածները. բայց իր այս
ամէն գրուածոցը մէջ բնաւ մէկը բազմահատոր Տիե-
զերական պատմութեան արդիւնքն ու յարգը չունի. և
այս բանիս կը վկայեն քիչ ատենուան մէջ այնպի-
սի հատորաւոր գործքի մը եւրոպական խել մը լե-
զուաց թարգմանութիւնները:

Եթէ հաճոյ անցնի ազգերնուս առաքինասէր պա-
տանեաց հեղինակին ոճը այս հատորիկովս որ ա-
ռանձինն հիմա 'ի լոյս կ'ընծայենք՝ յետ Բաղճալի-
պի՞ն էջերուն մէջ հրատարակելու, կը խոստանանք
հետզհետէ իր ուրիշ բարոյական գրուածքներն ալ
առանձին տպագրելու, յօդուտ և 'ի դիւրութիւն
դաստիարակաց և դաստիարակելոց:



ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

Ա.

Գրուածքիև վախճանը :

Ասկէ քիչ տարի առաջ դեռ մանուկ էինք , վերջը մեծցանք տղայ եղանք . հիմա պատանի ենք ու քիչ ատենէն երիտասարդ պիտի ըլլանք , ու վերջը մարդ . ալ պիտի չունենանք , ոչ հայր , ոչ մայր , ոչ դաստիարակներ որ մեզի համար յոգնին քրտընին , կարօտութիւննիս հոգան ու ամէն բանի մէջ մեզի առաջնորդեն . մարդկանց ընկերութեան մէջ պիտի մտնենք , որպէս զի մենք ալ աշխատինք ու մենք մեզմէ բանի գործքի ետեւ ըլլանք :

Նրդեօք ինչ բանի աւելի պիտի փափաքինք ան ատեն . միթէ ազանտ ըլլալ և կամ թէ մեր վրայ աչք ունեցող մը չունենալ . բայց ընդհակառակն ան ա-

տեն կապերնիս աւելի սաստիկ պիտի ըլ-
լան . ուրիշ մեծեր պիտի ունենանք ու-
րոնք հօր մը ու մօր պէս գթած ու
քաղցր պիտի չըլլան . մեր սխալմունք-
ներուն պիտի չներեն՝ ինչպէս տղայոց
կ'ընեն , և ոչ ալ խրատով կամ թեթեւ
ու անցողական պատժով մը պիտի խա-
լըսինք անոնց ձեռքէն :

Արդեօք հարստութեանց պիտի փա-
փաքինք . ո՛հ , հարստութեանց փափաքն
ալ մեզի նորանոր ձանձրութիւններու ,
խռովութեանց , իղձերու ու տհաճու-
թեանց պատճառ պիտի ըլլան , եթէ
ուրիշներուն հետ և եթէ մենք մեզի
հետ . և վերջը վերջը , միթէ կարենանք
պիտի անոնցմով ուրիշներուն սիրելի
ու մեծարոյ ըլլալ : Այլ ոչ իսկ զուար-
ճութիւնները պիտի ըլլան մեր վախ-
ճանը . վասն զի կը տեսնամ անոնք
որ ժամանակնին այնպէսով կ'անցընեն ,
ոչ միայն պատիւ չունին , այլ և ոչ ոք
անոնց աղէկութիւնը կ'ուզէ : Աայց մենք
կ'ուզենք որ ուրիշները զմեզ յարգեն ,
կ'ուզենք որ մեր նմանները զմեզ սի-
րեն . վասն զի ասկէ աւելի աղէկ և
ցանկալի բան մը չկայ աշխարհիս մէջ :

Ասոր հասնելու համար ի՞նչ պէտք է
որ ընեմ :

Պէտք է որ ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱ-
ՔԱԿԻՐԹ ՄԱՐԴ մ'ըլլամ:

Իսկ Ղաքինի ու քաղաքակիրթ մարդ
մ'ըլլալու համար ինչ պէտք է ընեմ:

Պէտք է որ իմ պարտքերս գիտնամ ու
հասարեմ. ասոր համար պէտք է որ ես
չիս ու չորիշները լաւ ճանչնամ:

Հայկա ուրեմն, սիրելի պատանիներ,
աս ուսման տանք զմեզ, ու լաւ մը մեր
սրտին խորը թափանցենք, և չորս կող-
մերնիս մէջ մը նայինք. ո՛հ, բնութիւ-
նը ամենուն աչքին առջևը բացուած
գեղեցիկ պարտէզ մըն է, բայց վայ ա-
նոր որ աս պարտիզիս մէջ միայն ծաղիկ
կը փնտրուէ ու պտուղ չուզեր: Չորս կող-
մերնիս ունեցած տեսարաններնուս վը-
րայ նայելով՝ ու մեզի և մեր նմաններուն
վրայ մտածելով սրտերնիս զուարթա-
ցած՝ հարցընենք մէջ մը մենք մեզի.
Ի՞նչ է մարդս. ուսկից կու գայ, և ո՞ր
կ'երթայ. ասկից կը սովորինք որ ԼԱՒ
ՈՒ ԵՐԶԱՆԻԿ ԱՊՐԵԼՈՒ ՄԻ ՄԻԱԿ
ՀՆԱՐՔՆ Է ԲԱՐԻ ԸԼԼԱԼԸ:

Բ

Ստորոշում :

Աչքերս կը բանամ ու մէյ մը որ երկրնքին ու երկրիս երեսը կը նայիմ, ո՛հ, ինչ զարմանալի տեսարան : Արևն անշարժ իր տեղը կեցած՝ չորս կողմէն լուսոյ ու ջերմութեան անսպառ հոսանքներ կը սփռէ . լուսինն անթիւ աստեղաց բազմութեանը մէջէն կը գեղեցկացնէ ու կը լուսաւորէ գիշերները . վարդագոյն արշալոյսը ոսկիի փայլունութիւն մը տալով բլուրներու ծայրերուն՝ կարծես թէ զմարդիկ աշխատութեան կը կանչէ . ու իրիկուան թրթռուն վերջալոյսն ալ կամաց կամաց ամէն առարկաներու վրայէն իրենց գոյնը վերցնելով՝ քաղցր կերպով մը զմեզ հանգչելու կը հրաւիրէ : Արբեմն երկնքի ջինջ պայծառութիւն մը սրտերնիս կը զուարթացնէ, ու երբեմն ալ վախերնէս կը սարսափինք՝ երբոր որոտմունքի գոռում գոչումը ու կայծակներուն շառաչմունքը կը լսենք : Արկրիս վրայ

տեսակ տեսակ կենդանիներու ցեղեր
կան և ամենուն ալ տեսքն ու բնութիւնը
տարբեր է : ՄՏ, ինչ սիրուն ու գեղեցիկ
ծաղիկներ կան, և ինչ անուշահամ
սլոտուղներ : Հոս՝ տեղ մը ընդարձակածաւալ
դաշտավայր մը կը տեսնաս, անդին՝ նեղ
նեղ հովիտներ . լեռները մէկ
դիէն ինչուան երկինք կը բարձրանան,
և վերջը սիրուն բլրակներով ու
արգասաւոր սարահարթներով կը
խոնարհին ու կը վերջանան :
Ըն լեռներուն գլուխներէն աղբերաբար
ջրեր կը բխեն և առուակ առուակ
կ'երթան կը միանան՝ գետեր լճեր ու
ճահիճներ ձևացընելով, ինչուան որ
ծովուն անհունութեանը մէջ երթան
ընկղմին :

ՄՏ, ո՞վ է ըրեր այսչափ գեղեցիկ
բաներ :

Ըսոնք ամէնքն ալ յաւիտենական
կանոնաւոր շարժմունք մը ունին մէջերնին .
աստղերը միշտ կարգով արևուն չորս
կողմը իրենց շրջաննին կը կատարեն :
Մեր երկիրն ալ փոխադարձ և անփոփոխ
կերպով իր ամէն կողմը նոյն աստղին
կ'երևցընէ՝ գիշերն ու ցօրեկը կարգաւորելով,
անանկ որ և ոչ վայր

կեանս մը կը խոտորին արշալոյսը կամ
իրիկունն իրենց կարգէն : Արբոր գարու-
նը կը սկսի ծիծաղիլ , դաշտերը կը կա-
նաչնան ու հազարումէկ գեղեցիկ գոյ-
ներով կը նկարուին . վարդերն ու մանի-
շակները կը բացուին , հողոյն մէջ ցա-
նուած հունտերն ալ կը սկսին ծլիլ ,
դեղձենին ու ծիրանենին ծաղկով ու տե-
րևով կը զարդարուին . վերջը ամառը
գալով՝ ծաղիկները կ'անցնին ու պտուղ-
ները կը սկսին հասուննալ . ցորենը եր-
կրագործին աշխատութիւնը կը վարձա-
տրէ , տղու մը պէս՝ որ իրեն բարի բարի
գործքերովը կ'ուրախացընէ իր հայրն ,
որ զինքը մեծցուցեր ու դաստիարակե-
ր : Աշունը զուարճալի կ'ըլլայ այգեկու-
թով ու ձմեռուան հարկաւոր եղած պա-
շարը պատրաստելով , որ միջոցին կարծես
թէ բնութիւնը կը հանգչի , որպէս զի
ըստ ժամանակին նորէն սկսի իր պարտ-
քը կատարել : Ասանկ՝ կենդանիներն ալ
կը ծնանին , կը մեծնան , կը մեռնին . ինչ
պէս նաև տունկերը կը բողբոջեն , կ'ուռ-
ճանան , պտուղ կու տան , կը ծերանան
ու կը կորսուին . բայց ասոնց երկուքն ալ
որդիքներ կը թողուն , որոնք նորէն նոյն
կեանքը կը սկսին ընել : Աերջապէս ,
ամէն բան կանոնաւոր շարժմունք մըն է :

ՄՏ, ով տուաւ ամէն բանի առջի
շարժմունքը . ով է որ կը կարգաւորէ
աս ամէն շարժմունքները , որ ասանկ
տարբեր՝ բայց միանգամայն աս աստի-
ճան ալ կանոնաւոր են :

Կեղեցնայ մէջ ան տեսած գեղե-
ցիկ արձանդ , առաջ կոչտ ու տձև
քարի զանգուած մըն էր : Ըն հրաշալի
պալատը՝ աղիւսի , կրի , աւազի , գե-
րաններու , քարերու ու կղմինտրներու
կոյտ մըն էր : Եւամացոյցն ողորմելի
մետաղի մը կտոր էր՝ ուսկից ձևացան
անիւները , զսպանակները , բոլորակ-
ներն որոնք ժամանակը կը չափեն : Թէ
որ մէկը քեզի ըսէր որ Այդ քարի կտորը
ի՞նչիւրէն արձանի իոխու-եցաւ . ան նի-ւերը
ի՞րէնք ի՞րէնցմէ քովէ քով գալով մայան , բայց
անանկ կէրպով որ հանգիստ ու գեղեցիկ պա-
լատ մը չեացուցին . ան մտաւորները պատահ-
մամբ մէկմէկու հետ մանաւոր՝ այդ ժամացոյցը
չեացուցին , թէ որ մէկը քեզի ասանկ
ըսէր , խենթի տեղ չէիր դնէր այնպի-
սին : Մըչափ աւելի խենթ պէտք է սե-
պենք այն մարդը որ կ'ըսէ , թէ՛ աս աչ-
խարհքս ասանկ գեղեցիկ , լայնածա-
ւալ , ասանկ կարգաւորեալ , ասանկ կա-
տարեալ , ինքիւրեն եղած է :

Բայց ո՞վ ուրեմն կազմեց ասիկայ ,
ո՞վ կարգաւորեց :

Ես ծնայ : Ուսկից . իմ հօրէս . իմ
հայրս , պապէս . պապս , իր հօրէն . ինքն
ալ ուրիշ հօրէ մը , և այսպէս առաջ կ' եր-
թանք ինչուան որ հասնինք առջի մար-
դուն . բայց ասիկայ ուսկից կրնայ առաջ
եկած ըլլալ . ուրիշ մարդէ մը չէ , վասն
զի ան ատեն ինքն առջինը չէր ըլլար . ու-
րեմն անանկ էակէ մը՝ որ մարդէ մը ան-
համեմատ աւելի վեր եղած ըլլայ , և
ինքն անսկիզբն ըլլալով ուրիշ ամէն
բաներուն սկիզբն տուած ըլլայ :

Ես ամէն բաներուս հեղինակը , աս
առաջին շարժողը , աս կարգաւորողը ,
աս առաջին պատճառը , աս ընդհան-
րական հայրն է ԸՍՏՈՒԱԾ :

Գ

Պարտք առ Աստուած :

Ո՞վ է ինձի կեանք տուողը , ո՞վ է որ
իմ կեանքս կը պահէ ու այնչափ մխի-
թարու թիւններով կը լիացընէ : Տկար

ու անգոր ծնանելով գտայ մայր մը որ
ամենայն սիրով զիս ընդգրկեց, սնոյց
ու մեծցուց. այսօրուան օրս զիս սիրուն
եղբայրներու, բարի ընկերներու և ազ-
գականներու մէջ կը տեսնեմ, ու կ'իմա-
նամ թէ որչափ քաղցր է զուրիշը սի-
րելն և ուրիշէն սիրելի ըլլալը: Ար տես-
նամ որ երկինքը բարեխառն պայծա-
ռութեամբ մը իմ դիմացս կը ծիծաղի.
առողջարար ու անոյշ օդ մը իմ չորս բո-
լորս կը պատէ, ծաղիկներն ու պտուղ-
ներն ալ զիս կը սնուցանեն ու կը զուար-
ճացնեն. կենդանիք կը ծառայեն ու
զիս կը կերակրեն: Ա՛յ տուաւ ինձի
այս ամենայն պարգևները. Ա՛ստուած:

Ալ ես ի՞նչ արդիւնք ունէի:

Ի՛նչաւ և ոչինչ:

Արեւմն Ա՛ստուած բարի է: Թէ որ
ես ինձի ո՛ր և իցէ բարիք ընողը կը սի-
րեմ, ուրեմն որչափ աւելի պէտք է սի-
րեմ զ՛Աստուած որ ամենայն բարու-
թեանց աղբիւրն է. որչափ ուրեմն ա-
մէն օր շնորհակալ ըլլալու եմ իրեն:

Ի՛նչ մը չկար ամենեւին. Ա՛ստուած
խօսք մը միայն ըսաւ, ու ամէն բան ե-
ղաւ. թէ որ մէկ խօսք մըն ալ նորէն
ըսէ, ամէն բան կ'ոչնչանայ: Ի՛նքն է

ինծի էութիւն տուողը, ու երբոր ուզե-
նայ կրնայ առնուլ ինծմէ . ուրեմն ըսել
է թէ մեծ ու ամենակարող Մատուած
մըն է, և ես պէտք է վախնամ ու մե-
ծարեմ զինքը :

Մատուած ամէն տեղ է . իմ քովս է,
'ի ներքս յիս է ու ան ալ ամէն ատեն .
ամէն բան գիտէ, ամէն բան կը տես-
նայ . ուրեմն բան մը չեմ կրնար ընել
որ ինքը չտեսնայ, և ոչ բան մը մտա-
ծել որ ինքը չիմանայ . ըսել է թէ ա-
մէն գործողութեան մէջ պէտք է յի-
շեմ որ Մատուած զիս կը տեսնայ, ու
անանկ իմ ըրածներս կարգաւորեմ՝ որ
իրեն անհաճոյ չըլլամ, որպէս զի չպատ-
ժուիմ :

Մէն նման իրեն նմանը կը սիրէ, և
Մատուած որ կատարեալ է, բարութի
ու արդարութիւն միայն կը սիրէ, ու կը
գարչի մեղքէն ու ստութենէն . իրեն
հաճոյ ըլլալու համար պէտք է որ իրեն
պէս ես ալ բարի, գթած ու բարեսէր
ըլլամ :

Յրտէն պահելու համար Մատուած
դառնուկին բուրդ կու տայ . երկու ճրնճ-




զուկ դանկ մը հաղի կարծեն, բայց
 Մատուած և ոչ զանոնք առանց կերա-
 կուրի ու առանց բունի կը թողա-
 ինչպէս ուրեմն կարելի բան է որ զմարդ
 չհոգայ՝ իր ազնուականագոյն արարա-
 ծը. այսու ամենայնիւ թէ որ ձախորդու-
 թիւն մը գլխուս գայ՝ մէկէն կը սկսիմ
 գանգըտիլ. ինչ անիրաւութիւն է ը-
 րածս :

Կթասիրտ մարդուն մէկը մուրաժ
 կուրի մը առջև ինկած տուն կը տանէր
 զինքը, բայց անանկ ճամբէ մը հարկ
 էր անցնիլ որուն երկու կողմն ալ ան-
 դունդ էր. և որպէս զի կոյրը անոնց
 մէջ չկնայ՝ մէջտեղէն կը տանէր, որ քա-
 ըի կտորներով ու կոճղերով լեցուն էր.
 բայց քարի կտորներն ու կոճղերը
 կոյրին նեղութիւն կու տային, ուստի
 կը գանգըտէր իր քարերարին դէմ և ա-
 նիրաւ ու անգութ կը կանչէր զինքը, ու
 չէր ըմբռնէր որ անանկով զինքը վտան-
 գէն կը խալըսէր ու ողջ առողջ տուն
 կը տանէր :

Այն գթածն որ կը տեսնայ՝ Մ-
 տուած է, կոյրերն ալ մենք ենք. ճամ-
 բուն վրայի արգելքները աշխարհքիս
 չարիքներն են. տունը՝ երջանկութիւնն
 է, որուն Մատուած գմեղ կ'առաջնորդէ :

3322-82
 249
 134



Չախորդու թեանց մէջ պէտք է ուրեմն
որ ես զինքը օրհնեմ ու համակամ ըլ-
լամ իրեն կամացը, ու ամենայն վստա-
հու թիւն ունենամ իրեն բարու թեանն
ու նախախնամու թեանը վրայ :

Կարօտու թեանցս մէջն ալ պէտք է
որ իրեն դիմեմ. վասն զի ինքը իմ զգա-
լէս առաջ կ'իմանայ իմ ինչ բանի կարօ-
տու թիւն ունենալս. բայց կ'ուզէ որ
ես իրեն դիմեմ, որպէս զի վարժիմ կա-
րօտ ըլլալս ճանչնալ, որպէս զի իմ հպա-
տակու թիւնս իրեն ցուցընեմ, երախ-
տագէտ ըլլամ իրեն ու անով աւելի ալ
սիրեմ զինքը :

Ուրեմն պարզ 'ի ներքուստ միայն սի-
րելով պէտք չէ գոհ ըլլամ, հապա ինչ-
պէս որ ծնողացս ու մեծերուս բարիք-
նին ուզելս միայն բաւական չէ՝ այլ
հարկ է որ իրենց ալ ըսեմ, առջևնին
զլուխս բանամ, ձեռքերնին պագնեմ,
այսպէս նաև մարմնով ալ պէտք է որ
պաշտեմ զՆստուած, մեծարեմ զին-
քը և աղաչեմ իրեն : Եւ օրինակովս ու-
րիշներն ալ կը յորդորուին զինքը յար-
գելու ու մեծարելու, և ասանկով աւե-
լի լաւ կը տարածուի իր թագաւորու-

Թիւնն ու անունն ալ կը փառաւորուի :

Բայց ամենէն ազէկ պաշտօնը որ կրնանք տալ Մատուծոյ՝ իրեն կամաց հնազանդիլն է :

Դ.

Յայտնուորիւն :

Սատուած իր կամքը յայտնեց մարդ կանց, այնպիսի զգացմունք մը տպաւորելով սրտերնուս մէջ՝ որով իւրաքանչիւր ոք իրաւացի կը սեպէ ուրիշներուն հետ անանկ վարուիլ, ինչպէս որ կ'ուզէ որ ուրիշները իր հետը վարուին : Բայց առաջին մարդը մեղանչեց, որով աս օրէնքն ալ սկսաւ աղօտանալ . իրեն սերունդները արդարութեան ճամբէն հեռացան, և փոխանակ իրարու բարիք ընելու փոփոխակի՝ ջանացին ուժով և բռնութեամբ յաղթել և իրարու տիրել . իրենք զիրենք կրից տուին, և ալ անկէ վերջը չէին պաշտէր, ինչպէս որ պէտք էր, սիրոյ և արդարութեան ճշմարիտ Մատուածը :

Ըն ատեն բարեգութն Մատուած

զմարդիկ նորէն ուղիղ ճամբան հանե-
լու համար, խօսեցաւ և տուաւ իրենց
օրէնք մը՝ որ անկէ աւելի յարմար չէր
կրնար ըլլալ զիրենք երջանիկ ընելու
համար: Իմ հաւատքս զիս կը վստա-
հացընէ որ աս օրէնքը Մատուածաշուն-
չին մէջ գրուած է, ուր որ դուն, ո՛վ
պատանեակ, կրնաս գտնալ ամենէն
հին ընկերութեան պատմութիւնը,
սուրբ անձանց վարքերը, մարգարէու-
թիւններ, բանաստեղծներու երգեր
ու սաղմոսներ՝ որոնցմով յաջողու-
թեանդ ատեն կրնաս օրհնել զՄատուած,
ու ձախորդութեանդ մէջն ալ մխիթա-
րուիլ ու քաջալերուիլ: Իմաստութեան
և Մուսկաց գրքերը, (Սողովողն ու Սի-
րաքը ամենահարկաւոր խրատներով լի
են, թէ ինչպէս կրնայ մարդ Մուսքիւնի
ու քաղաքակիրթ ըլլալ ու այնպէս յա-
րատել. կ'ուզե՞ս, քանի մը հատը կար-
դանք մէկտեղ:

Մէն իմաստութեան անէպէր Աստուծոյ
վախն է: Իսկն զքեզ իմաստութեան մ'էարժէր
էնքերմէր: Իմաստութեանը շար սրտի մէջ
զմտնար՝ վասն զի անոր ոգին բարի է: Ո՛վ
որ իմաստութեան մտիչ է՝ ընէ՝ ասելէ իմաստութեան
է՛րլլայ: (Ո՛վ որ խոհեմ մարդ մը գտնաս,

աշարհո-Բեաճ Երեւելի, առ արեւոր
 երեւն ասե՛ր Տաշեցիներն : Անխել Տարրը
 էր հարժե որ մշտ լաւ է ըրածը . Բայց Իճաս-
 ասե՛ր որ ընդերսն հարժեքին ալ ահանջ
 էր հանել :

Քանի որ երեսասարդ էս՝ չաւ Բանէր
 որո՛րս որ ընդ Բանի Վրայ մ' Խօսիր . շատ ան-
 գամ չգիտեալ յեացոր, Տարի ըրէ լաւ-
 Բեաճ, Խ հարցոր : Նեղութեաճ Երեւել
 ըէ, Բէ որ հ'աղէս լաւ հասկընալ . ընկե-
 րով Տարցորցած Բանին պատասխան ասոր
 Բէ որ գիտեա . ապա Բէ ոչ լաւ, որպէս զի
 շըլըս Բէ ախալ Բաներ զարցեա առ աճօ՛րն Վ
 Բան : Ստիտոր գիտին Խ որ արտա-Բի-նը
 էր հենդանացիներն Տարրոսս սերպը, Բայց ա-
 նանցէ ալ աւելի Իճասար-Բեան սերը : Սո-
 Բանն որ դա՛ր ախորժելի ներդաշնակո-
 Բի-ն Տը էր հաղձին, Բայց անանցէ աւելի՝
 անուշ լեզու Տը :

Այսպէս Բեաճ Երեւելի ընտրեալ
 շարախօս Բանասրհոնն ապելութեան որ
 հասարհութեան արժանի է . Վեց Բան հ'ապել
 Աստուած, որ Եօ՛նեբորդէն էր գարշի ո-
 էր զգուի . հպարտ աչքերը, պատիտ լեզուն,
 Տարրասպան յեռեբը, որ ընդին շարիք նի-
 Բող սերպը, Տեղաց արագ Վազող արեբը,

աստ և զհան և ո՛վ որ հասկանաւորութիւնն իւր
 ցանկէ եղբարց ԴՂ: Եւստիցը հորստեցան
 սրով, Բայց շատ ատելի էն լեզուով հարստող
 ները: Եւստիցը պատասխանն իւր Բարհոնութիւնը
 է՛նչեցընէ ու խեղճը իւր Բարհոնէ: Եւստի
 ցտատար որ ընկերովը իւր Գեղ իւր Խօսին,
 նայէ որ լսածդ քովդ պահէս: Եւստիցը Գովե-
 լեդ ատաւ խօսեցոր. Տարդ իւր Խօսելէն իւր
 Տանկցոր. անխելիներուն օրացը Բերան
 նունն ԴՂն է, խելացիներուն Բերանը սրտեր-
 նունն ԴՂ:

Եւստիցը որ երեսասարդութեանդ աստն ըստ
 ծողլած՝ Եւստիցը է՛նչպէս է՛նչպէս ծերութեանդ ԴՂոյ
 Գովեալ: Եւստիցը որ շատ քունն է՛րլլաւ, աշտա-
 րտութիւնը զիտեալ Գովե իւր պէս էրեւեդ իւր
 հասանի: Եւստիցը որ ԴՂոյ աշտարտ-
 րտութիւնը Դարդ Բեր: Եւստիցը՝ ցորս է ըստ-
 լով ընկեց արօր լարել, որբէն աստար պէտք
 է որ Տարաց: Եւստիցը արեսան արեսան իւր ճե-
 րով իւր անանի, ու Բարդ օրը Գովեալներէ զատ
 որբի իւր Բան ընկեր: Եւստիցըն այգիէն քովէն
 անցայ ու իւր ճով և իւր ճով ծածկունած էր,
 ու պատն ալ իւր էր: Եւստիցըն ԴՂ
 ու Տար Տարհանց հարգին ԴՂ պէտք է որ
 նայի: Եւստիցըն աստն ծանր շարժիս ու
 Գովեալն ԴՂ երազ ըլլաւ:

Արձանն գլուխը վայ, արձանն հօրը վայ,
 արձանն հետք հախ, արձանն վերք, արձանն Տա-
 հացոսցճանախներ. անոր որ շատ գինի կը կուճի :
 Արհեստը երեկոտները կը հաչէ, կը ցատ-
 ու Բարկո-Ռեաճի կը լեցուի. Իսկ ասկանա-
 պէտք Տարդը պոտարը ու ասոր շարտը քանն
 կ'ըլլայ : **Օ** գաստ Տարդ ճը եր հեանքը կ'եր-
 կընցընէ : **Վ**ինի ու հանապա ասէնէն ԻՏա-
 սոտներն ալ Տալարցոցին :

Այս Ժեհուպինն հետք շնորհանիս, եւ ոչ անոր
 հետք որ գաղտնիքներ դուրս կը հանէ : **Ս**ճանչ-
 ցած Տարդոտ ասըն խորհուրդ մ'ընէր :
Վրացիէր քով շատ մ'յաճախէր, շըլլայ որ
 ճանչրանայ :

Անէն է երկոտ ըլլալ քան Ռէ Ռէ. վասն
 զի Ռէ որ մէկը էյնայ, մէկալը զինքը կրնայ
 Բանէլ : **Ա**ս է անասպատ ճը մէջ կէնալ քանն
 Ռէ հոտարարներն ու Բարկացողներն մէջ :

Անիւտարէ լացողը, ու ընկերակից եղեր
 Վշտացեալներն : **Ո՛վ** որ ընծայ կ'ընէ աղ-
 քապին, վաշխով Աստուծոյ գոխ հոտայ :
Օ ոտարը ու Բարկեհասանն դէճով ճը պոտ :
Տալէր ետքը երեան մ'զարներ : **Օ** օրասո-
 բն ճեռքն խալըսէ Ռշնասանեալ խեղճը :
Անն քամէ մ'շարժեր : **Վ**Տաստոտնը անիո-

ժողովուրդն է արեւմտեան պէս, անխելքը լուսնիս պէս
ժողովուրդն է: Սէ որ ըշտ-առաւ-ընտան օրե-
րուդ ճշ յո-սահաստիս՝ ո-ժոք հը պահատ:

Ս' արհամարհեր աշխատ արդարը, և ճի-
գովեր անիրաւ-հզօրը: Օ օրա-որներէն հե-
ռո-հեցիր - ըէ որ հանչէն զքեզ՝ քաշու-է,
անանկով ա-եւլի հը հանչէն: Ս' ը Բարձր
շէնք հը շէնք՝ ըսել է ըէ հոգը շէ անոր շո-
տով հորժանելուն Վրայ:

Համբերող ճը ո-ժովէ ճը ա-եւլի արժէք
ունի: Մ-եւլի լա- է սպեպդէն ո-սել հան-
դարտութեամբ, քան ըէ հո-ո-ով պե-սահ պե-
սահ հերահո-րնէր:

Մշտեցրդ քայլերէդ առ-սը քար: Իմաստ-
տունիս աշխերը գլխուն Վրայ էն: Տգեպը
ճո-ընի ճշ հը քաշէ: Ս' ը որ պարզտութեամբ
հը քաշէ՝ Վասահո-ընտան առ-սը հ'երընայ:
Ս' -ը որ շատ ճե-քեր հան, նայէ որ ճե-քդ
գոյ պահէս - էնչ որ հո- քաս ճիշտ հաշու-ե-
լով ո- հշտով քո-ը, ո- առ-սո-դ ալ քո-սո-դ
ալ նշանէ:

Մայէ որ Բարի անուն սքանաւ - ստիհայ
Բի-ը գանձերէ ա-եւլի հը քե-է:

Իճաստատանը հիներումն իճաստատանը էանը հը
պատաստի, երեւելի ճարտիւնն պատաստանիւնն
ըը ճարտը հը պատհէ, առաւելներումն իճաստը
հը քնարուէ, օրատը աշխարհքնէր հը քալէ, ու
ճարտիւնն Բարի ու շար Գործքը հը հընէ :

Մի ըսեր, Մեղայ, ու ինչ վնաս է
ղաւ ինծի անկէ. վասն զի Աստուած Ժանը
հը շարժի արդարումննը հաստատանէլու Ժա-
ճանակ :

Ո՛վ որ Բարեհաս ճը Գրաստ՝ Գանջ ճը Գրաստ :
Իճարեհասինն յանդիճանումննը աւելի աղէկ
է, քան ըէ ըշնասաննն հասճեոյրը : Սարօր Բա-
րեհասիդ, Վնաս, ու վաղը եկուր որ տամ,
Մի ըսեր. ըէ որ հինաստ՝ այսօր արուր :

Արդեան, Տարի ըրէ քո հօրդ խրատին.
պատուէ զինքը խօսքով, Գործքով ու առե-
նայնն հասճեւրումնն : Ո՛հ, վնայ անոր որ հը
Ըողում էր հայրը, և անիծեալ՝ որ էր ճայրը հը
Բարեհասընէ : Ո՛վ որ հօրնն ու ճօրնն Բան
ճը հը Գործնայ ճեղք չէ ըսելով ճարտաստանի
պէս է :

Իճէք Բան հայ որ հոգիս հ'ապէ. հոգարտ
աղքատը, ագակ հարումարը և անխելք ծերը :
Իճէք Բանով անբար առաւելուցս, ճարտ-

նոր-ընտանիք եղբայրս, սիրով ընկերացի եւ հար-
սին ու գեւայտն ճշտերաք ըլլալովը: Արանե-
լի է ան երեկը որ լաւ հին ճը ունի - եր քա-
րեքին ըն-ը հրհին է:

Աստուած եր՛ի վախճանը Բարի հնչան ճը
հանդիպեցնելով հը վարձաբարէ: Վախճանը է
ժրագլուխ հին ճը գործաւը - երհանը սիրաբ
անոր վրայ վարան հ'ըլլայ ու հը ջանայ ան-
օր զինքը որաւանցընելու, եւ երբէք չարաճեցը-
նէր: (Ը) Ե որ Բորդ ու վաւ յեւքը անցնի
եր յեւքովը հը Բանի, վաճառանհանի նաւո-
ճը պէս որ հեւանոր քեղերէ հայ հը Բերէ:
Աստուածանց հանոխ հ'ըլլէ ու ծառանե-
րուն ուսելիքը հը Բաժնէ: Արհե՛մ-ընտանիք
հը խօսի ու քաղցր-ընտանիք խորհորդ հո-
րայ: Շնորհքը ու գեղեցիկ-ընտանիք քիչ հը
պիւն, Բայց աստուածավան հինը Ռչա հը
Գովորի:

Արբ դեւ պարանի էի, սխալելէս աստուած,
աղօթքներուս ճը իճաստու-ընտանիք խնդրեցի,
եւ ինչո՞ւն որ Ռանի՛մ պիտոր խնդրե՛մ: Ասով
լաւ Բան վաստընէցայ - քիչ աշխատեցայ ու
լաւ հանգիստ գորայ, եւ գետնի հոս քամ թ-
նոր որ ինձի իճաստու-ընտանիք քոտուս: Վախճան
որ զիս հը քեանս անո՞ր նայեցէք որ լաւ անվրի՛ք
ու լաւ ոսկի հը գորնէք - աշխատեցէք քա-

նի որ Չամբանայ ունի ու Վարչութեանի Թեմ
է'ըլլայ :

Ե

Յիսուս Գրիստոս :

Բայց Մատուած օրէնքը լրացնելու
համար խաւրեց աշխարհք զՅիսուս
Վրիստոս, որ ոչ եթէ փառաւորու
թեանց ու ճոխու թեանց՝ այլ աղքատ
ներու մէջ ծնաւ . ամբարտաւանու թիւ
նը յանդիմանելու համար՝ խոնարհա
բար ապրեցաւ, ու բռնու թեան դէմ
կենալու համար՝ ինքը հեզ եղաւ . հա
լածանքներ քաշեց, որպէս զինեղեալնե
րը մխիթարէ ու ցուցնէ որ առաքինու
թեան վարձքն աս աշխարհքիս վրայ
է : Եւ զձ արհեստաւորներ ժողովեց ու
զանոնք ասդիս անդին խաւրեց, որ նոյն
ատենուան աշխարհքիս վարդապետու
թեանը հակառակ վարդապետութիւն
մը քարոզեն : Աւ ըսաւ անոնց և մեզ
ամենուս .

Ի՞նչ ասուի պատուէրս ան է որ ԴէզԴէն սե
րէս՝ Ինչպէս որ էս զՅէզ սերեցե, որով էն

շրանն հեանքս աս յեղի հասար արտի - անով
 ասլիարհիս զՅեղ ճանչնաց որ իճ ասլիերպնէրս
 էր՝ Թէ որ ճեղչէի սերէր : Ի՛նչ որ հ'ոպէր որ
 ճարդիկ յեղի ընէն՝ դոռտ աս իրէնց ըրէր , Վասն
 զի Բան ասոր Վրայ հը հայանան օրէնքնէրն և
 ճարդարէնէրը : Ի՛նչպէս որ դոռտ զոպիշնէրը
 հը դասուէր , նոյնպէս դոռտ աս պիտի դասուէր :
Սէրը հընոպէս , Վասն զի ասլիարհիս անի-
 բանութեան ճը հը լողաց - Բայց ո՛վ որ ասոր
 հ'անոռ - սրով աս հը ճեռնի : Թէ որ իտեղճ
 ողորմելի ճը հաւել ճը ջոռ աստ Երան-ճոյ
 սերոյն հասար , ասանց Վարձի չէր Գար - Բայց
 չախ Թեւրնիդ չգիտնաց ի՛նչ որ Բարի Գործ
 ճը հ'ընէ ասլերնիդ : Երանի խոնարհաց , Երան-
 նի հեղոյ , Երանի ողորմածնէրուն , Վասն զի
 ողորմութեան պիտի գտնեն - Երանի անոնց որ
 հոլան , Վասն զի պիտի ճոխարտեն - Երանի
 անոնց որ խաղաղութեան հը սերեն , և արդաս-
 րութեան հը Գագագին աս անոր հասար հալա-
 ճանիս հը քաշեն : Ի՛վ որ նեղութեան հը քաշի
 ինճի Գայ ու էս զիտքը հը ճոխարէճ : Երան-
 բանութեանց ու ընասանաց սերով հաճե-
 րէցէր , ու սովրէցէր ինճի Թէ ի՛նչպէս խո-
 նարհ ու հեղ էճ , և անով խաղաղութեան հը
 Գտնատ : Երանայարտ է ո՛վ որ Եղօրը դէճ
 հը Բարհանաց : Բո՛ւ ասլիդ Գերանը չէս պէս
 նար ու Եղօրտ ասլին շեղը հը ասանաս :
Թէ որ Եղօրտ զիտք Վրայընէ նախասպէ-

լով ըստ ընդհանուր, ոչ թէ էօ՛րը հասարակ
 էօ՛րանաստանն և էօ՛րն անգամ ալ նախաստե
 ղիչն՝ անհանգամ ալ դրանն ներքէ : (Թ) Է որ խո
 բանին ճօրհանաս ու յիշես որ էղբայրդ տե՛ս ու
 նի չեղի հետո՛ գնանախ անոր հետ հարչարուէ :
 (Թ) Նախնիդ սերեցէ՛ք, ասելիքն էրնոր բա
 րերարձան ըրէ՛ք ու աշօ՛րք ըրէ՛ք զՅէզ հա
 լածողներուն ու լլկողներուն համար, թէ որ
 է՛ր ուղէ՛ք արժանաստոր որդի՛ք ըլլալ ան Մասնա
 ծայն, որ շարերուն ու բարիներուն վրայ ալ
 հասաստարաստե՛ս նոյն արեւը էը ծագէ : (Թ) Է
 որ զիս էը սերէ՛ք՝ ի՛մ պատուէրքնէրս պահե
 ցէ՛ք : Մշօ՛րքնէրնոր ՌՂ Մասնածայ արտայ
 ունիւնն ու իրեն արդարունիւնը խնդրե
 ցէ՛ք, և ուրիշ անհն հարչաստոր բաները էը
 արտախն յէզի :

Մ Զամարտութիւններս քարոզողն
 անկրօն ու ապստամբ մէկը սեպուե
 ցաւ . բռնեցին զինքը, ամբաստանեցին,
 դատապարտեցին, և ինքն իր սպանող
 ներուն համար աղօթելով մեռաւ . ա
 սանկով առաքինի ու քաղաքակիրթ
 մարդու մը օրինակ տուաւ մեզի :

Սկզբան իրեն կրօնքը խենթութիւն
 կարծուեցաւ . իրեն հետեւողներն այ
 պանուեցան, հալածուեցան՝ բայց կար
 ծիքնին չփոխեցին, ու ընդհակառակն

յարատեցին բարին քարոզելու ունոյ-
նը արդեամբ 'ի գործ դնելու : Օ իրենք
հալածողները կ'օրհնէին . ամէնքը զի-
րենք կը փնտռէին ու սպաննել կ'ուզէին ,
և իրենք աշխարհքէ աշխարհք հալա-
ծական կը պտրտէին . տանջանաց մատ-
նուելով՝ կը մեռնէին , ներելով իրենց
տանջողներուն : Ղշմարտութիւր իրենց
արեամբը պարարտացած յաղթանակեց,
և ան աստուածային կրօնքը մնաց 'ի
մխիթարութիւն և 'ի փրկութիւն աշ-
խարհի :

2

Մարդ :

Մահկանացու արարածոց մէջ մարդս
ամենէն կատարեալն է , բաղկացեալ 'ի
հոգւոյ և 'ի մարմնոյ ու ընկերական վի-
ճակի համար ստեղծուած , որով խոհուն
է ու կատարելութեան դիմող :

Է

Հոգի :

Ես կամ ու կը զգամ որ մարմին մը
ունիմ՝ այլ և այլ անդամներէ բաղկա-
ցած, որ ախորժ ու ցաւ, ուժ ու լքումն
կը զգայ, կը գիրնայ ու կը նիհարնայ .
բայց ասոնցմէ դուրս ուրիշ բան մ'ալ
կը զգամ՝ ի ներքս յիս :

Ես կը մտածեմ . մտածողը միթէ
թէն է, արդեօք գլուխս, կամ չէն է
սիրտս . չէ . կ'իմանամ որ բոլոր ան-
դամներէս աւելի գերազանց բան մը
ունիմ :

Մերկայ եղած բաները կը ճանչնամ,
անցածները կը յիշեմ, ապագան կը գու-
շակեմ, կ'երևակայեմ, կը գտնամ, կը
սիրեմ, կը վախնամ, կը յուսամ :

Ես կ'ուզեմ . ո՞վ է աս Եսը . մարմինը
չէ . վասն զի մարմինը կը հնազանդի,
անանկ որ թէ որ ես ուրիշ տեղ մը ու-
զենամ երթալ, մարմինը կը շարժի .
թէ որ ուզենամ գլուխս ծռել կամ շի-
տակ կենալ, գլուխս ու մարմինս կը
հնազանդին ինձի :

Մօ եսն է հողին : Նիւթէ բաղկա-
ցած չէ՝ ուստի ոչ կրնամ տեսնալ և ոչ
ալ շօշափել, ինչպէս որ չեմ տեսնար ու
չեմ կրնար շօշափել զՄօտուած ու հրեշ-
տակները . ինչպէս որ կամք ունիմ, փա-
փաք կը զգամ՝ բայց չեմ կրնար տես-
նալ և ոչ ալ շօշափել զիրենք : Մօ հո-
գին՝ ես իրեն յատկութիւններէն կը
ճանչնամ . արթուն է, զգաստ է . մար-
մնոյն ամէն շարժմանցը վրայ կը հսկէ,
կը խորհի, կը յարմարցընէ, անանկ
գործքեր կ'ընէ որ նիւթը չկրնար ընել :
Եւ իրաւցընէ, տեսեր ես որ քար մը
կամ փայտ մը բան մը մտածէ, կամ ու-
զենայ :

Ը

Ազատ կամք :

Քարին վար իյնալուն պատճառը ի-
րեն ծանրութիւնն է որ զինքը վար կը
քաշէ . ծուխը կը վերանայ իր թեթեւու-
թեամբը որ զինքը օդէն վեր կը հա-
նէ : Բայց ես երբոր բանի մը ձեռք կը
զարնեմ՝ կը զգամ որ կրնամ ընել ու կըր-
նամ ալ չընել, և ինքիրենս կ'որոշեմ ա-

զէկ է՝ չէ նէ գէշ, կը յարմարի՝ չէ նէ չէ, կը տարակուսիմ ու կը լուծեմ: Աւրեմն հոգիս որ մարմինս կը կարգաւորէ ազատ կամ ունի, այսինքն իրեն ձեռքն է բարին ընելը կամ չընելը, չարիք գործել կամ անկից զգուշանալը: Աւրեմն իմ ամէն գործողութիւնս կամ իմ աղէկութենէս է, կամ իմ գէշութենէս. ուստի իրաւացի է որ ես վարձք կամ պատիժ ընդունիմ:

Խելքը, ինչպէս նաև կրօնքն ալ կը սովորեցընեն որ աս վարձքն ու պատիժը աս կեանքիս մէջ ալ կրնամ ունենալ. բայց ստուգապէս անդին պիտի ունենամ որ անվախճան է. աս վարձքս պիտի ըլլայ գերազոյն ճշմարտութիւնը ճանչնալս՝ որ է Վստուած. զինքը կատարելապէս սիրելն, իրեն ուզածն ուզելը, ու բարիներուն հետ կատարեալ սիրով զինքը յաւիտեան ժառանգելը:

Ս՛հ, կ'ուզեմ որ ես ալ ասանկ վարձքի մը արժանի ըլլամ:

Բայց ինչպէս կրնամ զայն ձեռք բերել: — Վաքիւնի ու քաղաքակիրթ պատանիի մը պէս ապրելով:

Թ

Մարմին :

Մարմինը հողւոյն կամացը կը հնազանդի, որ զգայարանաց ձեռքով կ'ազդէ հողւոյն առարկայից արտաքին երևոյթը : Օգայարանքներն են . լըտելիք՝ որ ականջին ձեռքով կը գործէ . տեսանելիք՝ աչքերով, ճաշակելիքը՝ քիմքով, հոտոտելիքը՝ ունգամբ, իսկ շօշափելիքը բոլոր մարմնով՝ բայց մասնաւորապէս ձեռքերով : Մտնցմէ դուրսներքին զգացմունքներ ալ կան անօթութեան, ծարաւի և ուրիշ ախորժակներու :

Մենէ մէյ մը մարդուս մարմինը, ուլ պատանեակ, ո՛հ, իրօք հրաշալիք մըն է Մարարչին իմաստութեանն ու բարութեանը : Ուրիշ անբան կենդանեաց պէս հողոյն վրայ սողոսկելով չքալեր, այլ շիտակ կանգուն՝ հրաման տալու դիրքի մը մէջ : Մը ազատ ու լայն ճակտին վրայ կը տեսնաս խորհելու յատկութիւնը, գէմքին վրայ հողւոյն կնիքը, երեսին վրայ ամօթ, ու շրթանցը վրայ ծիծաղ : Մչքերը գէպ 'ի հորիզոն ուղ-

ղուած են, անանկ որ մի և նոյն միջոցին կը տեսնէ երկինքը որ զինքը կը լուսաւորէ՝ և երկիրս որուն վրայ կեցած է։ Այն աչքերուն մէջ մղոն մը տարածութեամբ տեղը մէկ բթաչափի հինգերորդ մասին մէջ կը բովանդակուի. դարձեալ այն աչքերը կը յայտնեն սէր և ատելութիւն, գթութիւն ու զայրոյթ, ուրախութիւն և տրտմութիւն։

Արծիւներուն աչքերը անանկ սուր են, որ ինչուան ամպերուն մէջէն կը տեսնան իրենց յափշտակելու վառեակը. ամենանուրբ է շան հոտառութիւն, ու ամենազգայուն է խլուրդներուն լսելիքը։ Նայց որ կենդանին անանկ կատարեալ աչք մը ունի որ կարենայ ճանչնալ գունոց աստիճանը՝ որով կը ձեանայ պատկերի մը գեղեցկութիւնը. որը անանկ կատարեալ շոշափելիք մը ունի որ կարենայ իմանալ կերպասուց ու մետաքսէ հիւսուածքներուն զանազանութիւնը։ Անդանիք կամ խորիս հագած են՝ ինչպէս օձերն, կամ թեփ ինչպէս ձկները, կամ կաշի՝ ինչպէս եզները, կամ մազ՝ ինչպէս վայրի գազանները, կամ բուրդ՝ ինչպէս ոչխարները, կամ փետուր՝ ինչպէս թռչունները, կամ պատեան՝ ինչպէս խեչափառ.

ներն ու խխունջները: Մարդուս մօրթը
փափուկ է, ու ձեռքը զարմանալի կեր-
պով մը կանոնաւորեալ. իսկ ընդհակա-
ռակն կենդանեաց թաթը կարծր է ու
թեփոտ՝ եղունգներով, սանդալներով
ու ձիրաններով:

Մրդեօք ուշադրութիւն դրեր էս,
ով պատանեակ, ձեռքիդ ճարտարու-
թեանը:

Մնանկ ճկուն է, որ ինչ և իցէ ձե
ունեցող մարմին մը կրնայ ձեռքին մէջը
ամփոփել. ուստի անոր համար մատե-
րը անհաւասար են ու շատ մը յօդուած-
ներ ու ոսկորներ ալ ունին. ծայրերնին
ալ եղընգով մը պաշտպանուած է, որ
ըստ բաւականին կակուղ է՝ որով մատե-
րուն յօդուածները ուղածին պէս կրնայ
խաղցրնել, և նոյնպէս բաւական ամուր՝
որ հարկ եղած ատեն մատերուն ուժը
կը կրկնապատկէ: (Ս) է որ իյնամ՝ ձեռքս
դէմ կը դնէ. թէ որ ջրի մէջ ըլլամ՝ զիս
ջրին երեսը կը բռնէ. թէ որ լեռնէն վեր
ելլամ՝ կ'օգնէ ինձի ճանկուտելու: Ար-
բեմն ճանկի տեղ կը ծառայէ, երբեմն
սլաքի, երբեմն ազցանի ու երբեմն ալ
ուրազի տեղ. նետելու աղէկ պարսա-
տիկ մըն է, զսպանակ մը կ'ըլլայ երբ
հրացան մը պարպեմ. խմելու համար

ալ աղէկ թաս մը կ'ըլլայ : Մարդս՝ եղ-
ջիւր, ժանիք ու ճիրաններ չունի, և ոչ
ուրիշ բնական զէնքեր • բայց ձեռքերը
որոյ ու վահանի տեղ կը ծառայեն :
Վառին, ողնիին ու կրիային պէս չու-
նի զգեստ մը օդոց անբարեխառնութե-
նէն զինքը պաշտպանելու համար, և ոչ
ալ պատսպարութիւն մը յարձակմանց
դէմ • բայց իր ձեռքովը վայելուչ ու
հանգիստ զգեստներ կը շինէ, նոյնպէս
նաև տուներ ու բերդեր : Մնով զձին
կը սանձէ վազելու ատեն • եզը կը լծէ
ուժը գործածելու համար • ցանց և ուռ-
կան կը հիւսէ ձկներ ու թռչուններ որ-
սալու համար : Ձեռքով կը մանէ, կը
կարէ, նուագարան կը զարնէ, կը նկա-
րէ, կը քանդակէ, կը գրէ, թի ու առա-
գաստ բանեցրնելով ծովուն անհուն ըն-
դարձակութեանը մէջ կը թռչի : Թէ որ
համր է, ձեռքով կը խօսի¹ • Թէ որ կոյր

¹ Տը-Լ-Էբէ քահանան (ծնեալ 'ի Վերսայլ
Քաղղիոյ 1712ին նոյեմբ. 25ին, և մեռեալ 1783ին
դեկտ. 23ին) խուլ-համրերը դաստիարակելու
հնարքը գտաւ : Աս դժբաղդ անձինքը մեզի պէս
իրենք ալ խօսելու յարմարութիւն ունին, բայց
բնաւ չլսելովնին, չեն կրնար խօսիլ : Տը-Լ-Է-
բէ խօսակցութեան ձայնին տեղ, ինչպէս որ յայտ-
նի է, նշաններով ու ձևերով խօսիլը ձեռք առաւ,
ու ասանկով կրնայ ըսուիլ որ շատ համրերու խօ-
սիլ սովորեցուց, որոնք հեազհետէ իր սձովը ին-

է, թէ որ մուծի մէջ, աչքին տեղ ձեռքը կը գործածէ: Ձեռքով իր զգացմունքը կ'արտայայտէ, խօսելու ատեն կը շարժէ, ձեռքերը երկնցընելով զզուանք կամ սէր կը յայտնէ. ծափ ծափի զարնելով կը գովէ, կը գգուէ, կը մերժէ, ինքզինքը կը պաշտպանէ. վերջապէս ինչէր չզուրցեր ո՛վ որ իր աջը բարեկամի կամ դժբաղդի մը երկնցընելով անոր աջը կը բռնէ:

Ժ

Խօսք:

Բայց մարդուս աւելի զարմանալի գործարանը որով կենդանիներէն մեծապէս կը տարբերի, լեզուն է: Մէկալ կենդանիները պուռալով իրարու մտքերնին կ'իմացընեն. թխամայրը երբ ցին կը տեսնայ կամ ցորենի հատեր կը գտնայ՝ վառեակները կը կանչէ, որոնք կը հասկընան ու կը վազեն կու

չուան ցայսօր կը դաստիարակուին: — Նոյնպէս նաև կուրերն ալ հազարումէկ տեսակ բան կը սովորին, ինչուան կարդալ գրել ալ, վեր ցցուած սառերով:

գան . առիւծը կը մռնչէ , շունը կը հա-
ջէ , կատուն կը մլաւէ , օձը կը շչէ ,
ճնճողուկները կը ճռուողեն , սոխակնե-
րը կ'երգեն , խոզերը կը խանչեն , գրաս-
տը կը զռնչէ , ձին կը խրխրնջայ , գոր-
տը կը կռնչէ , բայց բնաւ մէկը մեզի
պէս շարունակեալ խօսակցութիւն մը
չընեն , չկրնար բոլոր զգացմունքները
բացատրել և գտածն ու մտածածը
յայտնել : Անչ որ չորս կողմերնիս կը
տեսնանք ամէնն ալ բառ ունին . չկայ
մտածութիւն մը որ չկարենանք բառե-
րով բացատրել , և ոչ յօժարութիւն մը
որ անկարանանք յայտնել : Աւ ըստ այլ
և այլ գաւառաց ալ այլ և այլ լեզուներ
կան , անանկ որ 2000 լեզու կը համ-
րուի . բայց ամէնն ալ վեց կամ եօթը
ձայնի կը վերածուին որոնք ձայնաւոր
կ'ըսուին , և գրեթէ 20 եղանակաւոր
հնչման որ բաղաձայն կը կոչուին :

ԺԱ.

Մարդս ներակայ է կատարելոքեան :

Քանի որ աշխարհքս աշխարհք է
թռչունները նոյն երգը երգած են , մե-
ղուները մի և նոյն կերպով շիներ են

իրենց փեթակը և բէշկ մշկոյն ալ իր
բնակարանը: Թէ որ մարդս հօբալ¹
թռչնոյն խօսիլ սովրեցրնէ, դեղձանի-
կին ալ թեթեալ ու պարզ դաշնակներ,
չներուն ու կապիկներուն ալ խաղալ ու
պարել, ասոնք չեն կրնար սովրածնին
իրենց որդւոցն ալ փոխանցել, այլ ան-
տառներու մէջ ծնածներուն պէս տգէտ
կը մեծնան. ասոր համար է որ անբան
կենդանիք բնաւ կատարելագործուած
չեն:

Մեղհակառակն մարդս սովրածը միտ-
քը կը պահէ և ուրիշներուն ալ կը հա-
ղորդէ: Մշխարհքիս սկիզբէն սկսեալ
երթալով իրեն գաղափարները միշտ ա-
ւելի ընդարձակած են. մարդ մը իր
գիտցածը ուրիշի կը հաղորդէ. ամէն
սերունդ ալ իրեն յաջորդին կը սովրե-
ցրնէ՝ որ կը սովրի, կը շատցրնէ ու յա-
ջորդաբար կը հաղորդէ: Մ. յսպէս մենք
մեր ծնողքէն ու վարպետներէն կը սով-
րինք քիչ ատենի մէջ ինչ որ շատ դա-
րերու միջոցով գտնուած են. ինչպէս
կարդալն, գրելը, տպագրութիւնը և ու-
րիշ ասոնց նման մեր կենաց և դիւրու-
թեանը համար հարկաւոր եղած բանե-
րը, որոնց դիւտին համար մենք ամենևն ին

¹ ՏՃ. ՍԵՂԵՃԵԳ:

չենք աշխատած : Ուրեմն ամէն սե-
րունդ իր գիտցածներէն զատ կը սովորի
նաև ինչ որ իրենց նախորդները գի-
տէին . ուստի ընկերութիւնը իբրև մէկ
անձ մըն է , որ որչափ տարիքը կ'առնէ՝
այնչափ աւելի բան գիտէ ու այնչափ
ալ աւելի լաւ կը գործէ : Ասիկայ է կա-
տարելութեան ենթակայ ըլլալ ըսել-
նիս :

ԺԲ

Մարդս կը խորհի :

Ո՛րչափ անգամ , ո՛վ պատանեակ ,
քանի մը կենդանեաց խելքին ու ըմ-
բրունմանը վրայ զարմացեր ես . ինչպէս
չներուն , ձիոց ու մասնաւորապէս փղե-
րուն : Աայց թէ որ լաւ դիտես , իրենց
ուշադրութիւնը միայն իրենց զգայա-
րանացը տակ ինկնող բաներուն վրայ
կեցած է : Ա՛ենք ընդհակառակն հե-
ռաւորին ու անցելոյն վրայ ալ կը խոր-
հինք . ինչպէս երբոր հիմակուան տե-
սած տղադ կը համեմատես անցեալ
տարի գեղը տեսածիդ հետ : Այսև ա-
պառնիին վրան ալ կը խորհինք . ինչ-

պէս երբոր կը մտածես թէ ինչ ախորժ
պիտի զգայ հայրդ երբ իմանայ որ լաւ
կը սովորիս ու աղէկ ես . և ինչ համա-
րումն ու գովութիւն կ'ունենաս ուրիշ-
ներէն թէ որ առաքինի ու քաղաքա-
կիրթ մարդու մը պէս ապրիս : Մանա-
ւանդ կը խորհինք նաև բնաւ չտեսած
բաներնուս վրայ ալ , ինչպէս երբոր զԱ՛ս-
տուած կը պաշտենք , ինչպէս երբոր
մեր պահապան հրեշտակին կը դիմենք ,
առաքինութեան կը փառաբանենք : Աս
խորհիլը կ'ուսուցանէ մեզի զգացմունք
նիս , ճանաչմունքնիս ու կամքերնիս լաւ
ուղղել . չընել ինչ որ չենք ուզեր որ ու-
րիշները մեզի ընեն . միայն վայրկենական
հաճոյք մը չփնտռել՝ այլ արդարութիւնն
և պարկեշտութիւնը . մեր ամէն գոր-
ծոցը մէջ խոհեմութեամբ վարուիլ .
զգուշանալ փառասիրութեան , անբա-
րեխառնութեան , ազահուութեան երեք
ախտերէն , որպէս զի կարենանք ետևէ
ըլլալ շափաւորութեան , բարեխառնու-
թեան ու վեհանձնութեան առաքինու-
թիւններուն :

ԺԳ

Բարոյական զգացմունք ու խղճմտանք :

Երբոր դուն գեղեցիկ պատկեր մը
կը տեսնաս, անուշ երաժշտութիւն մը
կը լսես, թաւիշ մը կը շօշափես, վարդ
մը կը հոտուրտաս, շաքարէ անուշ մը
կ'ուտես, ախորժ մը կը զգաս : Բնդհա-
կառանկն ախորժ բան մը կը զգաս երբ-
որ տհաս պտուղ մը կը խաճնես, կրակ
կտրած երկաթի մը կը դպչիս, աղտե-
ղութիւն մը կը տեսնաս, խարտոցի մը
կըճտելը կը լսես կամ աղբիւսի մը գար-
շահոտութիւնը կ'առնես, աս ախորժեւե-
ու ախորժեւե մենք զգայարանաց ձեռ-
քովը կը զգանք :

Ղամբան բարի տղայ մը կը տեսնես
որ խեղճ կուրի մը ձեռք կու տայ . կը
տեսնաս դարձեալ որ մէկը գրպանէն
թաշկինակը կը կորսնցընէ և տղայ մը
կը շտապէ վերցընելու զայն ու տիրոջը
դարձընելու . աս բաները քեզի ախորժ
մը կը բերեն : Արթած մը կը տեսնաս
որ ծերու մը զարնուելով զինքը գետին
կը ձգէ . նոյնպէս ուրիշ մէկ մը կը տես-

նաս որ օտարականի մը սխալ ճամբայ
կը ցուցընէ, և անախորժ բան մը կը զգաս :
Ըստ ախորժելուդ ու չախորժելուդ պատ-
ճառն է Բարոյական զգացմանս . ներքին
զգացմունք մըն է որով նախ և առաջ
զբարին և զչարը , մեր կամ ուրիշներուն
գործքին արդարութիւնը և անիրաւու-
թիւնը կ'ըմբռնենք , նոյն իսկ մտածել-
նէս առաջ թէ արդեօք օգտակար է
թէ չէ . իսկ երբոր ասիկայ մեր յա-
տուկ գործողութեանցը կը վերաբերի ,
Խեղճ կ'ըսենք :

Թերևս հանդիպած է երբեմն ու
տեսած կ'ըլլաս որ անզգամ չարաճճիին
մէկը՝ ուրիշի զարկեր է և ան ալ դար-
ձեր ըսեր է իրեն Մե՛նէ Կե՛ղէ Կարե՛՛ Տը Ը-
րէ՛ր Ե՛՛ Ես : Նոյնպէս երբոր մէկը քեզի
հետ գէշ վարուի , քու առջի հարց-
մունքդ ան կ'ըլլայ թէ Ի՞նչ բան ըրեր Ե՛՛ Կե-
ղէ : Արե՛մն բարոյական զգացմունքը քե-
զի կ'իմացընէ որ պէտք չէ տհաճեցը-
նել ոչ զոք առանց պատճառի :

Խղճմտանքը , յանցանք մը ընելէդ
առաջ , զքեզ կը դրդէ որ ետ կենաս .
թէ որ ականջ չես կախեր կը պատժէ
զքեզ ամօթով , զղջումով ու խղճմտան-
քով : Բու հետդ և 'ի քեզ է միշտ .
գիտես որ մէկը զքեզ չտեսաւ ու կ'ա-

մընաս . գիտես որ մէկը պիտի չպատ-
ժէ ու կը վախես : Ո՛հ , անզգամ ես
թէ որ խղճմտանքիդ ձայնին մտիկ չես
ըներ . ո՛հ , անզգամ ես թէ որ անոր
յորդորանացը դէմ կը գործես :

Ինչ որ ընելէն առաջ ուրեմն պէտք
է խղճմտանքիս հարցընեմ և միշտ բա-
րին գործեմ . վասն զի կ'ուզեմ գոհ ըլ-
լալ ինծմէ , վասն զի երջանիկ ըլլալ կը
փափաքեմ ու միշտ աւելի լաւ կերպով
ապրիլ :

ԺԴ

Մարդս կ'ուզէ միշտ աշուի նրջանիկ ըլլալ :

Որովհետեւ ինչ որ մենք կ'ընենք ա-
մէնն յալ աւելի հանգիստ ըլլալու հա-
մար կ'ընենք : Մնօթի եմ . ասիկայ ան-
ախորժ զգացմունք մըն է , ու կ'ուտեմ
որ աղէկ ըլլամ . յոգնած եմ նէ , կը
հանգչիմ : ձանձրացեր եմ նէ բանի մը
կը զբաղիմ . վասն զի ասանկ ընելով ա-
ւելի հանգիստ կ'ըլլամ : Գիտուն ըլլա-
լը տգէտ ըլլալէն աւելի աղէկ է , ուստի
կը սովորիմ : Մերելի ու յարգելի ըլլալը
անարգեալ ու ատելի ըլլալէն աւելի ա-

խորժելի է, ուստի առաքինի ու քաղաքակիրթ անձի մը պէս կ'ապրիմ:

Բարե կ'ըսենք ան ամէն բանին որ մեր վիճակը կը լաւցընեն. և ընդհակառակն չար ան ամէն բանին որ մեր վիճակը կը յուեցընեն. Էրջանի-Բի-ն կը կոչենք մեծագոյն բարիք ունենալը, և կարելի եղածին չափ նուազ չարը:

Բայց երկրիս բարիքն ալ չարիքն ալ շատ անգամ առերևոյթ են: Օրս ախորժահամ կերակրէ մը կը զըկեմ սովեալ մը կշտացընելու համար. ասիկայ բարիք մըն է ու խղճմտանքս ինձի կը սովըեցընէ՝ զիս ըրածիս վրայ գոհ ընելով: Իմ ընկերս աղուոր գիրք մը, սիրուն մեքենայ մը ունի ու ես կը յափըշտակեմ զայն. թէպէտ և ուզածս ձեռք ձգելով կարծեմ թէ աղէկ բան մը ըրի, բայց քիչ մը վերջը խելքը կը սովըեցընէ թէ գէշ ըրի. վասն զի ուրիշին բանը գողցայ, զինքը տհաճեցուցի, և անհրաւուր թիւն մը ընելով գէշ մարդ եղայ: Ինչ որ ըրած չարութիւնս խոստովանիմ, հայրս զիս կը պատժէ. թէ որ ժխտեմ, բան մը չեմ քաշեր. բայց սուտ խօսիլը գէշ է, վասն զի ինչ կ'ըլլար աշխարհք թէ որ ամէնքը սուտ ըսէին: Արեմն ստելով՝ զիս աւելի կը

գէշցընեմ ու չար չարի վրայ կ'եւել-
ցընեմ. ուր ընդհակառակն ճշմարիտը
զուրցելով, թէ որ նաև պատիժ ալ ըն-
դունիմ, խրատ կ'ըլլայ ինձի որ ուրիշ
անգամ զգուշանամ անանկ բաներ ընե-
լէն որ չեմ կրնար խոստովանիլ, ու այս-
պէսով աւելի լաւ կրնամ ըլլալ :

Ուրեմն ասով կ'իմանաս որ ճշմարիտ
Բարիք անոնք են միայն որ մարդ բարի
ապրելով կրնայ ձեռք ձգել, և թէ երջան-
կութիւնը առաքինւոյն վարձքն է :

Բայց ի՞նչ բանի վրայ կը կայանայ
առաքինի ըլլալը .

Բարտար ու Բարեօէր ըլլալուն վրայ :

Ի՞նչ ըսել է արդար ըլլալ .

Ըսել է, ՉԸՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ
ԱՆ ԲԱՆՆ, ԻՆՉ ՈՐ ՉԵՄ ՈՒՋԵՐ ՈՐ
ԻՆԾԻ ԸՆԵՆ :

Ի՞նչ ըսել է Բարեօէր ըլլալը .

Ըսել է, ԸՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ԱՆ
ԲԱՆՆ, ԻՆՉ ՈՐ Կ'ՈՒՋԵՄ ՈՐ ԻՆԾԻ
ԸՆԵՆ :

Ի՞նչ բան է առաքինութիւնը .

Առաքինութիւնը միշտ ուրիշներուն
օգտակար բաներ ընելու վարժութիւն
մըն է՝ Վստուծոյ կամացը յարմարելու
համար :

Թէ որ ասանկ ընեմ ի՞նչ բանի կըր-
նամ յուսալ .

Միշտ լաւ ու հանգիստ ապրիլ թէ
ասդիս և թէ անդին :

ԺԵ

Մարդս ընկերակասն է :

Բայց որպէս զի մարդ կարենայ միշտ
լաւ ապրիլ և աւելի խօսք ու բան հաս-
կըցող ըլլալ, հարկաւոր է որ ընկերու-
թեան մէջ ապրի իր նմաններուն հետ :

Ո՛հ, ինչպէս խեղճ ու տկար ենք
նոր ծնած ատեննիս : Ընք կրնար ոտ-
քի վրայ կենալ, պէտք է զմեզ մայ-
րերնիս քալցընէ, կերակրէ ու մեր ան-
կողինը պատրաստէ : Տարուան մը ու
աւելի կ'ըլլանք և գրեթէ չենք կրնար
ծամել, և հազիւ թէ ոտքերնիս կրնանք
շարժել. չենք կրնար ոչ բան մը հասկը-
նալ և ոչ ալ մեզի հարկաւոր եղածը
յայտնել : Թէ որ մինակ ըլլայինք, մեզ
մէ աւելի ուժով բիւրաւոր կենդանեաց
ոտնակոխ պիտի ըլլայինք ու կերակուր.
Թէ որ ծնողքնիս զմեզ չպաշտպանէին,
չհազուեցընէին ու չկերցընէին, սովէ,
ցրտէ ու նեղութենէ կը մեռնէինք :
Հրաշալի՛ Նախախնամութիւն, որ իրա-

րու ձեռնտուութեանը կարօտ ըլլանուս
համար մէկզմէկ կը սիրենք : Արուհե տե
ծնողք կը սիրեն իրենց տղաքը , մտա-
ծելով թէ որչափ օգտակար կրնան ըլ-
լալ . տղան ալ զծնողքը կը սիրէ իրենց-
մէ ընդունած բարեացն համար . և եր-
բոր աս պիտոյքը կը դադրի , սէրն ու ե-
րախտագիտութիւնը անոր տեղը կը
բռնեն : Տղուն ուժը կ'աւելնայ երբ
ծնողք կը ծերանան , կը տկարանան և
կարօտ են որ տղան զիրենք հոգայ , ինչ
պէս որ իրենք զինքը հոգացեր են : Այս-
պէս աս հա ընտանիքներ կը ձևանան , ու
անոնց աճելովն ալ կը կազմուին ցեղեր ,
գեղեր , քաղաքներ , տէրութիւններ ու
ազգեր :

Եւ որ մարդս առանձին ասրէր՝ բոլոր
օրը ուտելիք փնտուելու և դազաններէն
զինքը պաշտպանելու պիտի զբաղէր . ի-
րեն տկար ըլլալովը զօրաւորներէն պի-
տի յաղթուէր . կենակցութեան , բարիք
ուզելուն , ուրիշին օգնելուն , կարեկցու-
թիւն գտնալուն համը պիտի չառնէր . իր
ամէն կարօտութիւնը ինքնիրմէ պիտի
հոգար , անանկ որ իրեն տուն ու զգեստ
չինելու համար ամբողջ տարիներ պիտի
աշխատէր ու ժամանակ պիտի չաւելնար
բնաւ արհեստի մը մէջ յառաջադիմե-

լու և ոչ ուրիշներուն գիտցածը սովորե-
լու . մէկ խօսքով նեղութեամբ , գէշ
ու քիչ պիտի ապրէր :

Բայց Նստուած տեսաւ որ մարդուս
միայն ըլլալը աղէկ չէր , ուստի տպա-
ւորեց սրտերնուս մէջ աս փափաքն , ըն-
կերական վիճակին հարկը և փոփոխա-
կի մէկմէկու օգնելու ճիգնը : Վեզի
տղայութեանդ միջոց , ո՛վ պատանեակ ,
ի՞նչ պատիժ ամենէն աւելի ծանր կու
գար . արդեօք ընկերներէդ բաժնուե-
լով մինակ մնալը չէր մի . միտքդ պահէ
ասիկայ , ու երբ մարդկանց մէջ եղած
միջոցդ նեղութեան ու մաղձոտութեան
վայրկեաններ ունենաս , ու քեզի անա-
խորժ ու գէշ երևնայ ընկերութիւնը ,
մտածէ թէ ի՞նչ կ'ըլլայիր եթէ ընկե-
րութենէ զուրկ մնայիր :

ԺԶ

Մարդիկ հաշտուար ևն :

Ո՛վ թագաւորդ աշխարհի , ո՛վ դիւ-
ղականդ , ո՛վ որ տարին հարիւր հազար
սրբերէն լերայով ալ շէտ կրնար ձանձրու-
թեան ձեռքէն խալըսիլ , և դուն որ օրն

ի բուն աշխատելով հազիւ կրնաս քիչ մը հաց ձեռք ձգել, դուք պատասխան տուէք ինծի, Ո՛վ է ըրեր զձեզ :

Օ ամէնն ալ Մտուած . ամէնքն ալ նոյնպէս բաղկացեալ են անմահ հոգիէ ու նիւթական մարմնէ մը , և հաւասարապէս ամէնքն ալ երջանկութեան կը փափաքին : Ար տեսնաս սա գերեզմանն . նոցր . ինչ տարբերութիւն կայ հոն տիրոջ ու ծառային մէջ , մեծ կալուածատիրոջ ու խեղճ աղքատին մէջ : Իրեք թիզ փոս մը բաւական է հաւասարապէս ամենուն դիակին համար , և հոգինին Մտուածոյ առջևն է՝ միայն իրենց գործքերովը :

Սեռը , վիճակը , դաստիարակութիւնը , կորովութիւնը զմարդիկ կը զանազանեն , այլ այս զանազանութիւնները վիճակի են միայն և ոչ բնութեան . խանձարրոց մէջ եղող տղան և հասունացեալ մարդ մը նոյն իրաւունքն ունին ապրելու . բայց առաջինին քիչ մը կաթ բաւական է , իսկ երկրորդին ուրիշ շատ բաներ ալ պէտք կ'ըլլան . առաջինը անկարող է ինքնիրեն գտնելու իր ուտելիքը , և ուրիշներէն պէտք է որ սպասէ , ուր երկրորդը ինքնիրեն կը ճարէ :

Աւ ոչ իսկ հարստութեան ու կարո-

զուժեան զանազանութիւնը տարբե-
րութիւն մը կը պատճառէ բնութեան,
այլ մանաւանդ թէ ամենուն հաւասար
ըլլալէն առաջ կու գայ: Մարկոս, Աի-
րակոս, Թորոսը վաճառականութեան
համար ստակ դրին. առաջինը դրաւ
հազար դահեկան, երկրորդը հինգ հա-
րիւր, երրորդը երկու հարիւր. երբոր
հաշիւնին տեսնան, իրաւացի է որ
Մարկոսը՝ Աիրակոսին կրկինը առնէ
վասն զի աւելի մեծ դրամագլուխ դրաւ.
Թէ որ ամենուն ալ նոյնչափ տրուէր՝
Մարկոսը իրաւունք ունէր գանգըտելու:
Ըստ աստի ալ ընկերութեան մէջ ո՛վ որ
շատ կ'աշխատի, ո՛վ որ աւելի բարի է,
ո՛վ աւելի արդիւնք ունի, իրաւունք ու-
նի մեծամեծ դիւրութիւններ ալ վայե-
լելու, և ուրիշներուն ալ աւելի սիրելի
ու մեծարոյ ըլլալու, որոնք ստոյգ բա-
րիքներ են:

Ըստ ըսելով, չենք հասկընար որ ամէն
մարդիկ նոյն սկիզբն և նոյն վախճանը
չունենան, և կամ թէ ամէնքն ալ՝ որ
ըստ ինքեան այլ և այլ ճամբով առաջ
կ'երթան, մի և նոյն տեղը չեն ելլար.
այլ ընդհակառակն ամէնքն ալ մի և նոյն
պիտոյքներն ունին, և ասոր համար
պարտական են և կրնան իրենց պիտոյքը
լեցընել:

ԺԷ

Իրաւունք և պարտք :

Պարտաւան էն և հրնան . բուն տանց վրայ կեցած են մարդուս պարտքերն և իրաւունքները : Ամէն մարդ ստեղծուած է Աստուծմէ միշտ լաւ ապրելու համար . ընկերութեամբ կ'ապրինք զմեզ պահպանելու , մեր վիճակը լաւցրնելու ու կատարելագործուելու համար . ուրեմն ամէնքն ալ իրաւունք ունին ան ամէն միջոցներուն ձեռք զարնելու՝ որ իրենց բարեպէս ապրելուն համար հարկաւոր են : Ինկերութիւնն ամենուն բարւոյն համար եղած է , և ամէն մէկուն բարին՝ հասարակաց բարին ըսել է . ուրեմն իւրաքանչիւրին պարտքն է իր բարւոյն ետեւէ ըլլալ , այսինքն ըստ վախճանին գործածել իրեն ունեցած իրաւունքները : Ամէն մարդ հաւասար է . ուրեմն ամէն մարդ ալ նոյն իրաւունքն ունի , և հետեւաբար ամեննուս ալ պարտքն է ուրիշին իրաւունքը մեծարել , թէ որ կ'ուզենք որ ուրիշներն ալ մեր իրաւունքները մեծարեն : Կնած

գիրքդ կամ մէկէն ընծայ առածդ քու
իրաւունքդ է . ուրեմն ես ալ պարտա-
կան եմ զանիկայ քեզմէ չյափշտակել :
Սւտի այսպէսով ամէն մէկ իրաւուն-
քի հակառակ պարտք մը կը յառնէ .
պարտք մը 'ի մեզ՝ այսինքն մեր իրա-
ւունքը ինչ վախճանաւ որ տրուած է ,
նոյն վախճանին համեմատ բանեցնել-
լու . և պարտք յայլս՝ ուրիշին իրաւուն-
քը մեծարելու :

Հիմա քննենք թէ ինչ կերպով մենք
պէտք է գործածենք առ իրաւունքներն
ու պարտքերը :

ԺԸ

Իրաւունք և պարտք պահպանութեան :

Կիրակի օրը ներկայ դտնուեցայ ժո-
ղովրդապետի մը քրիստոնէական վար-
դապետութիւն բացատրելուն ժամա-
նակ , որ ասանկ կ'ըսէր .

“Մի սպանաներ ,” . Նստուած մեզի
ասանկ հրամայեց . բայց դուք երբոր
խղճերնիդ կը քննէք իմանալու համար
թէ արդեօք Նստուծոյ կամքը կատա-
րեր էք թէ չէ , մտքերնիդ կը դնէք թէ

աս սրատուիրանքիս դէմ զանցառու-
թիւն մը ըրած չէք, որովհետեւ բնաւ
մէկը չէք սպաննած և ոչ ալ մէկուն մա-
հուանը փափաքեր էք. բայց ասիկայ
արդեօք միայն բաւական է: Աստուած
ձեզի իբրև պարգև մը տուած է կեան-
քերնիդ, պարգև մը առանց որոյ չէք
կրնար ոչ աս աշխարհքիս բարիքը վայե-
լել, և ոչ ալ յաւիտենական բարեաց
արժանի ըլլալ. ուրեմն իրաւունք ունիք
կեանքերնիդ պահելու և պարտքէն
էք յարդելու զայն ՚ի ձեզ և յայլս: Աւ-
րեմն ամէնքը կրնան ու սրտորկան ալ
են իրենց կերակուր, զգեստ ու բնակա-
րան հայթայթելու, իրենց ուժն և ան-
դամները պահպանելու, և կարելի եղա-
ծին չափ անանկ բանեցնելու որ իրենց
բարւոյն պատշաճ ըլլայ:

“Ձեր և ուրիշներուն կեանքին կը
փնասէք ոչ միայն դանակով վիրաւորե-
լով, այլ նաև կռիւ ընելով, զարնելով,
բռնադատելով որ ծանր աշխատութիւն,
ներ յանձն առնուն: Անաց պահպա-
նութե պարտքն օտքի տակ կ'առնու այն
սուտ բժիշկը որ սխալ դեղեր կու տայ.
ինչպէս նաև անիկայ որ հոտած կամ
աւրուած կերակուրներ, քացիած գի-
նիներ ու տհաս պտուղներ կը ծախէ:

դարձեալ ո՛վ որ փոխադրական հիւանդու-
թեանց շտարածուելուն համար կա-
րևոր զգուշութիւնները չընենք . ինչպէս
օրինակի համար ըսենք, բորոտութեան,
ծաղկի, մաղձախտի և այլն : Առաջ ալ,
ո՛վ մարք, աս պատուիրանիս դէմ կ'ը-
նէք, երբոր ըստ ձեր պարտուցը ուշա-
դրութիւն չէք դնեն որ տղաքնիդ կրա-
կի կամ ջրերու քով յաճախելով չը-
մնասուին . չէք պատուաստեր զիրենք .
երկար ժամանակ իրենց գլխուն կը թո-
ղուք ու չէք մտածեր որ անկից ինչ գէշ
բաներ կը հետեւին . չէք արգիլեր որ
կառքերու ետեւէն չվազեն, գէնք չգոր-
ծածեն, ծառերու վրայ չելլան ու սան-
դուխներէ վար չվազեն : Աթէ ստիպես
մէկը որ շատ գինի խմէ՝ անոր ըրած գէ-
շութեանց յանցանքը քուկդ է . եթէ
ստիպես կին մը որ իրեն կարողութե-
նէն աւելի աշխատի, իրեն և նաև տը-
ղուն մահուանը պատճառ դուն կ'ըլլաս :
Տհաճութիւններն ալ կրնան զմարդ
հիւանդացնել ու մեռցընել . թէ որ
գէշ վարք անցընես՝ անով հօրդ կեան-
քը կը կարճեցնես . եթէ բռնութիւն
ու խստութիւն բանեցընես ընկերոջդ
դէմ, զինքը կը տրտմեցնես՝ ու հոգւոյն,
և թերևս առողջութեանն ալ կը մնա-
սես, որով մեծապէս կը մեղանչես :

“Մտանց առողջութեան ստակ մը
չեն արժեր զուարճութիւնները : Մէկն
որ առողջ է, այնպիսին նաև հարուստ
է իրեն կարծածէն աւելի : Հիւանդու-
թիւնները ժամանակի ու ստրկի կո-
րուստ են ու զուարճութեանց արգելք
կ'ըլլան : Վայեցէք ուրեմն ամենայն կեր-
պով առողջութիւննիդ չկորսնցընէք, ո-
րուն մի միայն հնարքն է բարեխառնու-
թիւնը : Վուրք ձեզմէ պէտք չէ վտանգ-
ներու մէջ ձգէք զձեզ . բայց երբոր դի-
մացնիդ վտանգ մը ելլայ՝ քաջասիրտ
պէտք է ըլլաք : Վեղութիւններէ խա-
լըսելու միակ միջոցը քաջասրտութիւնն
է : Վաւակոծութեան մէջ վախկոտը
կը խղզուի, իսկ քաջասիրտը տախտա-
կի մը ապաւինելով կը խալըսի : Վթէ
իժը կամ կատղած շունը վախկոտ մը
խածնելու ըլլան, ողորմելին յուսահա-
տաբար լալով ու ողբալով կը մեռնի .
բայց քաջասիրտ մարդը կը թողու որ
խածուած տեղը հրացեալ երկաթով
տաղէն ու այնպէսով կ'առողջանայ :

“Այ երբէք կրնայ մէկն անհող ըլ-
լալ ու փոյթ չընել իր կենացն ու առող-
ջութեանը վրայ . միայն թէ զօրաւորա-
գոյն պարտք մը կամ հասարակաց բա-
րին նոյնը չպահանջէ իրմէ, կամ թէ

որպէս զի պատուոյն և սպարտուցը դէմ
չգործէ : () րհնեալ ըլլայ այն մարդն որ
տղայ մը խղզուելու վտանգէն խալըսե-
լու համար , ջրին մէջ կը նետուի ու ի-
րեն կեանքը վտանգի մէջ կը դնէ , որ-
պէս զի տղան յայտնի մահու ընէ խալը-
սէ : (Վժիշկներն ու քահանաները հի-
ւանդաց քով կ'երթան՝ թէպէտ և վը-
տանգ ըլլայ որ իրենք ալ նոյն ախտէն
բռնուին , որպէս զի հիւանդին մարմինն
առողջացրնեն ու հողւոյն բարիք մը ը-
նեն : Արբոր թշնամիները ձեր հայրե-
նիքն ընկճել կը սպառնան՝ ուրիշներուն
հետ դուք ալ կը զինուորիք , ու հասա-
րակաց հանգստութիւնն ապահովելու
համար , դուք զձեզ վտանգի մէջ կը
դնէք . սուրբերն ալ , որոնք որ մենք հի-
մա կը յարգենք , աւելի յանձն առին
մարտիրոս ըլլալ՝ քան թէ հաւատքնին
ուրանալ :

“ (Վ) Է որ հիւանդութեամբ անկողին
իյնաք , ձեր սպարտքն է ամէն հնարք
բանեցրնել , թէպէտ և անախորժ ըլ-
լան , որպէս զի նորէն վրայ դնէք առող-
ջանաք : (Վժիշկին ըսածներուն սիրով
մտիկ ըրէք . քաշած ցաւերնուդ ու ձեր
վրայ եղած դարմաններուն սիրով համ-
բերեցէք , ու ձեր վրայ աշխատողները

մի ճանճրացնէք . նեղութիւնը մի ար-
համարհէք, բայց միանգամայն նայեցէք
որ անով ոգեսպառ չըլլաք : Իսկ երբոր
մահը մօտիկնայ, հանդարտ սրտով ի-
րեն գալուն սպասեցէք : ()ը մը, ինչ-
պէս որ իմ պարտքս է, հիւանդի մը քով
գացեր էի, ու հարցուցի իրեն թէ մեռ-
նելուդ վրայ կը ցաւիս . նայեցէք ինչ
պատասխան տուաւ ինձի . Ո՛հ, հայր,
ըսաւ, ինչո՞ւ համար պիտի ցաւիմ . ինչ մէկ
մեռնելը մեղք է մի . ես ալ էի գիտէի որ մեռ-
նելու համար ծնած էմ . եւ մէկ ինձ մե
ուսջ եղող ճարդիկը բոլորն ալ շնորհ : Ինչ
նի որ ծածականալ որեւէ մեռնելու ճարձեւով
բարե գործքեր ընել կը ջանայի, ու կը նայէի
որ անանկ ըլլած ինչպէս որ աս կէտիս կ'ու-
ղէի ըլլաւ : Երբ հիմա լսեցիք բայց նաեւ
լսեցիք որեւէ կ'ըլլաւ Լսեցիք որ աս ջան,
լսեցիք զի ինչը բարե է :

“ Իայց ձեր մարմնոյն առողջութե-
նէն աւելի պէտք է, սիրելի որդիքս, որ
ձեր հոգւոյն առողջութիւնն հոգաք .
ուրեմն ձեզմէ հեռու ըլլան չափազանց
հաճոյքներն ու ցաւերը : Թէ որ Լս-
տուած ձեզի յաջողութիւն տայ, ամե-
նեւիս մի հպարտանաք . եթէ ուզէ նե-
ղութիւններով փորձել զձեզ, զգուշու-
թեամբ ու խոհեմութեամբ զձեզ ա-

նոնց պատրաստեցէք. երբ ձեր վրայ
նեղութիւնները կը զօրանան, արիութեամբ
կրեցէք ու անոնց հետեանք.
ներուն համբերութեամբ տարէք:

“Բայց որովհետեւ ամէն բարիք Աստուծոյ կողմէ կու գան, աղաչեցէք որ ձեզի
առողջ մարմնոյ հետ տայ նաև առողջ
միտք մըն ալ.”:

Ասանկ կը քարոզէր այն ժողովրդապետը
անցեալ կիրակի:

ԺԹ

Իրաւունք և պարտք կատարելագործութեան:

Աստուած սիրուն հօր մը պէս երջանիկ
ստեղծեց զմեզ. մեր կամքը իրեն
կամացը հետ մէկ պիտի ըլլար ու մտքերն
իս ամէն բան պիտի կարենար ըմբռնել.
բայց մարդս մեղանչեց, և իրեն պատիժն
եղաւ միշտ երջանկութեան փափաքիլ
և ոչ երբէք ամբողջապէս անոր հասնիլ:
Ա՛ռ զէ բարին գործել և միանգամայն
դէպ 'ի չարն կը դիմէ. ամէն բան
կ'ուզէ գիտնալ, և ամենէն հարկաւոր
բաներու մէջ ալ տգէտ է. ասոր համար
կատարեալ երջանկութի

Երկրիս վրայ չկրնար ըլլալ: Վայց այն-
չափ աւելի երջանկութեան կը մօտե-
նանք՝ որչափ որ մեր միտքը անանկ կը
մշակենք որ կարելի եղածին չափ շատ
բանի խելք հասցընէ, ու որչափ որ մեր
կամքը՝ ի բարին կը վարժեցընենք ու կը
նայինք որ նաև մարմիննիս արգելք չըլ-
լայ մեր բարի դիտաւորութեանցը: Վն-
դառար երջանկութեան փափաքելով
իրաւամբ պէտք է ետևէ ըլլամ այն բա-
նին որ զիս կը կատարելագործէ. և ո-
րովհետև ընկերութեան մէջ կ'ապ-
րիմ, պէտք է որ ընկերութեան բար-
ւոյն համար եթէ իմին և եթէ ուրիշ-
ներուն ճարմիք, մտքն ու կամքը լաւցը-
նեմ:

Ի

Կատարելագործել զմարմին:

Արիստոտեմ թագաւորը երբոր կու-
մացւոյ յաղթեց, որպէս զի մէյ մ'ալ
իրեն բռնաւորական լուծէն չկարենան
խալըսիլ, այն խաղերը որ մարմինը կը
զօրացընեն բոլորն ալ արդիլեց. ու զեց
որ ինչուան քսան տարուան հասակնին

միայն զեղխութեանց ետևէ ըլլան,
կառք նստին, սանտրուին ու կանանց
պէս զարդարուին: Ասան զի բռնաւորը
գիտէր որ եթէ մէկը մարմնով մեղկ
ըլլայ, այնպիսին նաև մտքով ու կամ-
քով ալ տկար ու խեղճ կ'ըլլայ. ուր
ընդհակառակն ո՛վ որ չարքաշութեան
կը կըթէ մարմինը, անիկայ հոգևով ալ
կայտառ ու զուարթ կ'ըլլայ, և բնակա-
նապէս արիութիւն մը կ'ունենայ զբա-
րին գործելու ու չարէն խորշելու: Քա-
նի որ ատեննիդ է, ո՛վ պատանեակք,
ջանացէք որ մարմիննիդ առողջ, կայտա-
ռ ու արագաշարժ սնուցանէք ու պահպա-
նէք:

Առողջ ըլլալու համար պզտիկուց հի-
մակուրնէ զձեզ մաքրութեան վարժե-
ցուցէք, շարժմունք ըրէք, ձեզի հա-
մար ախորժելի ըլլան բնութեան ե-
րևոյթներն, ու սիրեցէք լուսոյ պայծա-
ռութիւնն ու գեղերու ազատ օդը.
մտածեցէք որ ձեր մարմինը Աստուծոյ
ամենէն գեղեցիկ գործքն է: Արնաք
արդեօք մարմիննիդ այնպէս աղտեղել
ու նուաստացրնել, գարշութեց ետևէ
ըլլալով, որ ինչուան դուք ալ ամբը-
նաք. կ'ուզէք որ կենդանեաց նմանիք
որկրամուլութեամբ ու խառնակեցու-

Թեամբ : Արկրամոններուն ու գինով-
ներուն վրայ մէյ մը նայեցէք, ինչ խեղճ
արարածներ են : Վեղեցկու թիւննին
կը կորսնցընեն, ու ժերնէն կ'իյնան,
շունչերնին գարշահոտ, խելքերնին ցըն-
դած, հաղարումէկ նեղու թիւն կը քա-
շեն : Իրենց ամօթալի ախորժակը գոհ
ընելու համար զիրենք անկարգու թիւն-
նեց ընելու վտանգի մէջ կը դնեն : Բա-
րեկիրթ մարդկանց դիմացն ելլալու կ'ա-
մրչնան, կամ թէ ամենեւին ընդունե-
լու թիւն չեն գտնար . և այսպէս ահա
կը կորսնցընեն ուրիշներուն սէրը, ի-
րենց յարգն ու խելքերնին : Այսուանգը-
նաց մարդու մը ո՞վ բան մը կը վստահի,
կամ աղջիկը հարսնու թեան կու տայ,
կամ վաճառականու թեան ընկեր կ'առ-
նու զինքը . վասն զի եթէ մնաս մը հան-
դիպելու ըլլայ՝ ամէնքը իրեն վրայ կը
կասկածին . որովհետեւ այնպիսին քիչ
կը վաստըկի, կարօտու թիւնը կը շատ-
ցընէ, ազատու թիւնը կը կորսնցընէ,
ուրիշներէն մուրանալու կը ստիպուի,
որպէս զի իրեն ախտերը կարենայ պա-
րարել : Ամենէն ու միշտ լսեր եմ որ
կ'ըսեն . Ախա ճը երկուս զաւելէ աւելի ճար-
գաս առնի կը նստի :

Նեղհասկառակն բարեկեցիկ մարդը՝

առողջ, զուարթ ու մեծարոյ է. քիչ
ծախք կ'ընէ ու շատ կը վաստըկի. եր-
կար կ'ապրի ու ամէն տեղ զինքը ովսան-
նայով կ'ընդունին :

Նոյնպէս չափաւորութիւն բանեցու-
ցէք նաև աշխատութեանց, հանգրս-
տեան, հաճոյից ու սիրոյ մէջ. մաղձո-
տութիւնը, նախանձը, բարկութիւնն
և բոլոր ախտերը մարդուս առողջու-
թիւնը կը խանգարեն. իսկ ընդհակա-
ռակն չափաւոր շարժումն ու աշխատու-
թիւնը աւելի կը զօրացնեն : Նոյլ ու
պարապորդ մարդիկ անգործածական
կըղպանքներու կը նմանին որոնցմով
երբէք բանալ գոցելու հարկ չըլլայ, ու
երբոր ուզես գոցել կամ բանալ՝ ժան-
գոտած ըլլալովսին չեն դառնար. ո՛հ,
աշխատութենէն ետքը որչափ քաղցր է
հանգիստը : Վ՛ի որ զբաղած է, այնպի-
սին բաց 'ի մարմինը զօրացընելէն, եթէ
գլխուն դժբախտութիւն մը հանդիպե-
լու ըլլայ, ինքզինքը սփոփելու կերպը
կը գտնայ. ժամանակ չունի գէշ ըլլա-
լու, և ձանձրութիւն ըսածդ չգիտեր.
Իսկ ընդհակառակն, ո՛վ որ ինքզինքը
գրգանաց կը վարժեցընէ՝ որ և իցէ
պզտի բան իրեն գէշ կու գայ, համ մը
չառներ, կը ձանձրանայ. ու երբոր բա-

նի մը կարօտ ըլլայ՝ անդամները թուլ-
ցած ըլլալով չեն ծառայեր, ու այնպէ-
սով կը մեռնի :

Վերջապէս կը տեսնանք աչքդ . եթէ
միշտ շարունակեալ սաստիկ լուսոյ մէջ
ըլլայ, լոյսը անանկ սաստիկ աչքդ կ'առ-
նու որ ետքը կը կուրնայ . ընդհակա-
ռակն, միշտ խաւարն ու մթութիւնն
ալ նոյնպէս կը կուրցընէ . ասանկ կ'ըլ-
լայ նաև բովանդակ մարմնոյն ալ . հա-
ւասարապէս կը մնասեն մարմնոյն եթէ
բնաւ չաշխատիլը, և եթէ չափազանց
աշխատիլը :

Վարժեցուցէք զձեզ ամէն բան շուտ
մը և մէկէն ընելու . այսինքն՝ ոչ կատա-
ղաբար, այլ առանց ժամանակ կորսընցը-
նելու և առանց տատամսելու : Այլը
քիչ մը աս բանիս կը տընտընայ, քիչ
մ'անոր, ու բնաւ բան մը գլուխ չհա-
ներ : Մնցեալ օր տասնապետ մը տե-
սայ որ նորաժողով զօրքերը կը կըր-
թէր, ու կը յանձնէր իրենց որ երկու-
վայրէնի գործողութիւնը երէ՛ք վայրէնի
մէջ շէնէն . ասիկայ ինծի խիստ գեղեցիկ
խորհուրդ մը երևցաւ ժրութեամբ գոր-
ծելու, մարդկային ճարտարութիւնը
զարգացընելու, ու մեր կարևորագոյն
գրամագլխին խնայելու՝ որ է ժամա-
նակը :

Արհեստի մը մէջ որ մանաս՝ նախ և
առաջ կը սարսափիս, վախնալով որ չըւ
լայ թէ մարմինդ պէտք եղած չարքա-
շու թեան չկարենաս վարժեցընել. բայց
չե՞ս գիտեր որ առած մը կայ, թէ Ոչ ոք
վարպետ էր ծնանի. չե՞ս գիտեր թէ կրթու-
թիւնն որչափ զգայարանքը կը կատա-
րելագործէ: (Եւ որ հիւսը, դերձակը,
դարբինը շուտ մը ու աղէկ կերպով կ'ը-
նեն կը լմնցընեն, ինչ որ անվարժ մը
երկար ժամանակի մէջ ու գէշ կերպով
կ'ընէ նոյն բանը, ասով ըսել չէ թէ
մարմիննին տարբեր է. հապա թէ առ-
ջինները նոյն բանին մէջ կրթուած
են: Առջի անգամ որ դպրոց դացիր՝
աչքդ և ոչ իսկ Ա՞բ Բէն կրնար զա-
տել. քիչ քիչ վարժութեամբ՝ նայէ
հիմա ինչպէս շուտ շուտ թղթերը կը
դարձընես: Նայէ թէ վարժութեամբ
ու կրթութեամբ ինչ աստիճանի խա-
ղունութիւն կ'առնու երգիչներուն ձայ-
նը, պատկերահաններուն աչքը, որ-
սորդներուն ականջն ու նուագարան
զարնողներուն մատերը. կ'ուզե՞ս տե-
սութիւնդ, թւերդ ու սրունքներդ կա-
տարելագործել. կրթէ ու վարժեցուր
զքեզ:

ԻՍ.

Կատարելագործել զմիտու :

Կրթութեամբ նաև միտքն ալ կը կատարելագործուի : Ազգբան երկու տողբան մը միտքդ պահելու համար որչափ կը տանջուէիր, հիմա դիւրաւ առանց նեղութեան ամբողջ երեսներ բերնուց կը սերտես, ու այնչափ բանի խելք կը հասցընես, որ մէկը չկրնար եթէ կրթութեամբ չըլլայ. և աս ինչո՞ւ, վասն զի կրթուեր ես :

Ճամարտութիւնը ճանչնալու համար, իրաց իրարու հետ ունեցած վերաբերութիւններն հարկաւոր է գիտնալ, հետևանքները գուշակել, որով ըսել է թէ պէտք է կրթութեամբ միտքը կատարելագործել ու իրեն պակսութիւններէն զինքը բուժել : Մտաց պակսութիւններն են Տգիտութիւն և Սխալմունք : Տգիտութիւնն է ճամարտութիւնը չըճանչնալ. իսկ սխալմունքն է սուտ բանի հաւատալ : Աստիարակութիւնը երկուքին ալ կը յաղթէ՝ որով ապագայ տհաճութեանց առջևը կ'առնու և ախորժ կը

պատճառէ : Մտեն մը կը կարծուէր որ զի
աւարտները դժբաղդու թիւններու գու-
շակ ըլլան . ուստի անոնց երևնալուն
պէս կը կարծէին որ ամէն տեսակ ձա-
խորդութիւն գլխունուն պիտի հասնի .
դարձեալ կը կարծէին որ զանգակներն
հնչեցընելով՝ մըրիկը կը դադրի , բայց
ընդհակառակն անով աշտարակներու և
զանգակատուններու վրայ կայծակ կը
զարնէր , ինչուան շատ անգամ նաև զան-
գակահարը սպաննելով : Մըաջ մարդիկ
չէին ուզէր որ տղոց պատուաստ ըլլուի ,
որով շատերը կը մեռնէին կամ մեծաւ
մասամբ այլանդակ ու տգեղ կերպա-
րանք մը կ'առնուին : Տգէտը լեցուն է
աւելորդապաշտութիւններով . մեռել-
ներէն կը վախէ , ոգիներէ , խրտուի-
լակներէ ու կախարդներէ կը սարսա-
փի , և անոնց վախէն խալըսելու համար
սուտ ջերմեռանդութիւններ կ'ընէ , ո-
րով կրօնքը աւելի կ'անարդէ ու կ'ան-
պատուէ : Տգէտը հանդիպած բանե-
րուն հետեւանքը մտածելով՝ ապագան
գուշակելու տեղ , մտորակաց ըրած չըր-
ջանէն ու աստղաբաշխներուն ըսածնե-
րէն կ'ուզէ ըլլալիքներն իմանալ . ինչ-
պէս նաև կը կարծէ որ լօրով և ուրիշ
խաղերով բաղդը պիտի շինէ . խաբե-

բաներու և կախարդներու մէջ կ'երթայ կը նստի . ոչ մարդուս իրաւունքները գիտէ, ոչ իրեն իրաւունքները յարգել կու տայ, և ոչ ալ ինքը ուրիշներուն իրաւունքը կը յարգէ :

Մեզ հակառակն որչափ ախորժ կ'ունենայ մարդս բան սովորելով, որչափ նորանոր բաներ կը կարդայ գրքերու մէջ : Հոն, երևելի մարդկանց անուններն ու ըրած գործքերը կը սովորիս, քու երկրիդ պատմութիւնը, ճամբորդութիւնները, գիպուածները, բնութեան ու երկնքին երեսը տեսնուած երևոյթները, և ինչ որ աշխարհքիս մէջ կը հանդիպի ամէնը կ'իմանաս . ուրիշ տեղ մը կը կարդաս նորանոր գիւտեր, որոնք կը հարրստացնեն զմարդ ու գիւրութիւններ կը սովորեցնեն ստակի և ժամանակի խնայութեամբ : Աւրիշ տեղ մը կը սովորի մարդ թէ ինչ պիտի ընէ ու ինչ բաներէ պիտի զգուշանայ առաքինի ու քաղաքակիրթ մարդու մը պէս ապրելու համար . և երբոր բնաւ բան մ'ալ չունենայ ընելու, ուսմամբ կը զբաղի : Այնտեղ կրնար մէկիկ մէկիկ համրել թէ որչափ մարդս կ'օգտուի ու կը զուարճանայ գիրք կարդալով . միայն թէ աղէկ գրքեր ըլլան, այսինքն՝ սովորեցուցած .

նին գիտնալու արժանի բան մը ըլլայ,
ու ըսածնին՝ պարկեշտ ու շնորհքով:

Բռնաւորներ եղան որ ժողովուրդն
ընկճելու և խոնարհեցնելու համար ա-
նոնց կարգալ սովրին արգելեցին: Յու-
լիանոս կայսրը քրիստոնեաներն ընկ-
ճել ուղելով, ո՛հ ինչ անօրէնութիւն,
թող չէր տար որ ուսմունք սովրին. և
թէ որ այսօրուան օրս թագաւոր մը
կարգալ գրել սովրիլը արգելէ՝ ինչպի-
սի անզգամ մը չսեպուիր. և ահաւասիկ
շատերը դաստիարակութեան ետեւէ
չըլլալով՝ իրենց կամօքը այս կերպով զի-
րենք կ'ընկճեն ու կը նուաստացնեն:
Գաղղիա ու Վնգղիա կառավարները
մէկ կողմանէ կը կարդան, ու միւս կող-
մանէ կը սպասեն որ ճամբորդ մը գայ
որ տանին. դռնապաններն ալ նոյնպէս
դուռը սպասած միջոցնին կը կարդան,
և կօշիկ մաքրողները քովերնին օրագիր
ունին, որպէս զի որոնք որ կօշիկնին
փայլեցնել տալու կու գան կարենան
կարգալ:

Բանի որ ատեննիդ է, ո՛վ պատա-
նեակք, սովրելու ետեւէ եղէք. ծնողք-
նիդ հիմա ձեր տեղը կ'աշխատին, որ
դուք ժամանակ ունենաք բան սովրելու.
Բայց օր կու գայ որ դուք ձեզմէ պիտի

սկըսիք վաստըկիլ, և ան ատեն ինչպէս
պիտի ուրախանաք երիտասարդութե
միջոց սովորած ըլլալնուդ վրայ: Չեզմէ
աւելի գիտուններուն հետ ընկերացէք.
պատշաճ համեստութեամբ ուզածնիդ
հարցուցէք իրենց ու ըսածնին մտքեր-
նիդ պահեցէք: Տգէտներուն մի վստա-
հիք՝ որոնք որ առանց զձեզ խաբել ու-
զելու, կրնան սխալ բաներ հասկըցընել
ձեզի:

Թորոսը կարդալ գրել ու հաշիւ
բռնել չսովորեցաւ՝ որն որ ըստ ինքեան
ամէնքը պարտական են գիտնալու. ա-
սով չկրնար փոխ տուածը նշանել, ա-
ռածը տուածը չգրեր, ուստի կը մոռ-
նայ. կուրի մը պէս ուրիշներուն ըրա-
ծին ետեւէն կ'երթայ՝ առանց պատճա-
ռը գիտնալու. իրեն երկրին օրէնքնե-
րուն տգէտ ըլլալով՝ չպահեր զանոնք.
Իրմէ հեռու եղողի մը թէ որ հարկ ըլ-
լայ բան մը ըսել՝ չգիտեր ինչ կերպով
ըսէ. նամակ մ'որ առնէ՝ պէտք է որ
կարդացընել տալու համար ուրիշներուն
վազէ, որով իր ծածուկը ուրիշին կը
յայտնէ. ինչպէս նաև երբոր հրապա-
րակի մը մէջ հրովարտակ մը կամ ծա-
նուցագիր մը կ'պցուած ըլլայ՝ հասկընա-
լու համար ուրիշի կարօտ է. ամէն վայր-

կեանս կը մահանայ, ու հարկ կ'ըլլայ որ
Գրեւ չէ՛ Գեորգ ըսէ: Աթէ վկայ կամ
կնքահայր ըլլայ, և ոչ իր անունը կրնայ
ստորագրել. մուրհակներու և յետկար-
ներու տակ խաչէ մը զատ ուրիշ բան
չկրնար դնել. զինուորութեան մէջ
թէպէտ սրտոտ ու քաջ ալ ըլլայ, բայց
չկրնար աստիճանի մը հասնիլ, և ոչ
տասնապետ կրնայ ըլլալ. թէպէտ ա-
մենավարժ ալ ըլլայ իրեն արհեստին
մէջ, հաշիւ բռնել չգիտնալուն պատ-
ճառաւ պարզ նիւթական արհեստա-
ւոր մը կը սեպուի: () աւկըները դպրոց
կը խաւրէ, ու ինքն անոնց գրքերէն
բան մը չհասկընար, և ոչ իսկ կրնայ ի-
րենց բարին ըմբռնել. տօնի օր մը ե-
թէ ըլլայ, չգիտեր ժամանակը ինչպէս
անցընէ. պանդոկ մը կ'երթայ ստակը
կը փճացընէ ու կը գինովնայ: Արջափ
անդամ շատերէն լսեր եմ որ կ'ըսեն.
Ո՛հ, ո՛ր էր Ռէ փղայո-Ռէանս միջոց երկու
փարէի ճը չափ ուսմանս սովորելու ետեւ
եղած ըլլայի:

Վաթուէոն 1812^{ին}, Վտալիոյ թագա-
ւոր եղած միջոցը, շատ մը իտալացի ե-
րիտասարդներ խաւրեց ինչուան Աու-
սաստան որ երթան պատերազմին. ի-
րենք քաջութեամբ պատերազմեցան,

բայց ցուրտն ու սուլը բոլոր բանակը փր-
ճացուց . մեծ մասը մեռան , շատն ալ
գերի եղան : Մյ խեղճերուն մէջէն ա-
նոնք որ քիչ մը աւելի բան գիտէին ,
փոխանակ անբաններու պէս Սիպերիա
երթալու աշխատելու , ասդին անդին
տներու մէջ սկսան կարգալ գրել սուլ-
րեցրնել , ու ասանկով հանգիստ ու պա-
տուաւոր կեանք մը անցրնելով՝ կրցան
բաւական ստակ ձեռք ձգել , որով ան
խելքէ դուրս մխիթարութիւնն ալ ու-
նեցան նորէն իրենց հայրենիքը վերա-
դառնալու :

ԻԲ

Կատարելագործել գկամս :

Առջի անգամուն որ յանցանք մը ը-
րիր , ինչպի քաշուեցար ու որչափ վեր-
ջէն խիղճդ զարկաւ : Ի՞նչ որ անհոգ
եղար , վայ քեզի . ան առջի սխալմունքդ
քեզի ուրիշ մըն ալ ընելու պատճառ ե-
ղաւ . փոխանակ զի թէ որ այսօր բարի
գործք մը ընես՝ ներսէդ կը մղուիս ու-
րիշ մըն ալ ընելու . և ան դժուարու-
թիւնն որ այսօր կը զգաս բարի գործք

մը ընելու ատեն, վաղը չես զգար՝ թէ
որ այսօր ընես: Այսպէս նաև կամքն
ալ կրթութեամբ կը լաւնայ. եթէ մէ-
կը տեսնաս որ աղէկ է՝ կը վստահիս
իրեն, յուսալով որ միշտ անանկ աղէկ
մարդ պիտի մնայ: Առաքինութիւնն ու-
րիշ բան չէ, եթէ ոչ վարժութիւն մը
միշտ աղէկ ընելու. և ո՛վ որ ինքզինքը
կը վարժեցնէ՝ առաքինի ու քաղաքա-
կիրթ է:

Արեմն ես ալ որ կ'ուզեմ առաքինի
ու քաղաքակիրթ մարդ մը ըլլալ, ինչ
պէտք է ընեմ:

Ահաւասիկ.

Ա. Օգայարանքներդ սանձէ: Մար-
մինը նիւթեղէն արարած մըն է, հողէն
կ'ըլլայ ու հող պիտի դառնայ, և գուն
ինչպէս կրնաս հաւանիլ որ ինքը հո-
գւոյն տիրէ, որ անմահ է և պատկեր
Աստուծոյ. ուրեմն միայն զգայարանաց
հաճոյիցը համար ամենեին բան մը
պէտք չէ որ ընես, հասկա միշտ նայէ որ
ըրածդ արդեօք պարտուցդ ու վախճա-
նիդ համեմատ է թէ չէ: () գտակար
է երբեմն օրինաւոր ու անմեղ բանե-
րէ ալ հրաժարիլ, որպէս զի առաքինու-
թեան հրամայածին, այսինքն է՝ ըզ-
մեզ զրկելու վարժինք, ինչ որ կարօ-

տու թեան մէջ կը ստիպուինք ընելու :

Բ. Միշտ զբաղմունք մը ունեցիր . վասն զի ծո-լո-ւ-ի-ն-ը Տայր է ակապից :

Գ. Ըստ պատահման և ըստ հաճոյից մի գործեր, և ոչ իսկ առանց լաւ ուշ դնելու թէ արդեօք այս գործս արդար ու աղէկ է թէ չէ . ուստի խղճմտանքիդ հարցուր թէ աս ըրածէս ի՞նչ հետեւանք կրնայ ելլալ, թէ ինծի և թէ ուրիշներուն նկատմամբ . և թէ ի՞նչ պէս կ'երևար քեզի թէ որ ուրիշ մը նոյն բանն ընէր, ու ի՞նչ կ'ըլլար թէ որ ամէնքը նոյնպէս ընէին : Արեւելքի իմաստուն թագաւորներէն մէկը լեցուն քսակով ոսկի պարգևեց այն իմաստունին՝ որ աս խրատը իրեն տուաւ, թէ Բան ճշ առեւե-ին մի ընէր առանց նախ անոր հետեւանքը լաւ ճշ կը-ւ-լ-ու- :

Դ. Ստէպ քննէ զքեզ, և ոչ միայն պարզ ըրածդ, այլ նաև ի՞նչ պատճառու ընելդ ալ : Արեւի աղքատի մը ողորմութիւն տուիր, աղէկ է . բայց մտածելով որ տեսնողներ կան ու պիտի գովեն զքեզ :

Ե. Թէ որ վրադ հակամիտութիւն մը կը տեսնաս առ չարն, ջանա՛ հակառակ առաքինութիւններով անոր յաղթելու : Ար տեսնաս որ հպարտ ես՝ խո-

նարհուծեան վարժեցուր զքեզ. թէ որ ենթակայ ես շատ սուտ խօսելու ջանա՛ որ ամենէն ջնջին բաներու մէջ ալ կարգէ դուրս անկեղծութիւն մը բանեցնես. մէկու մը դէմ ատելութիւն մը կը զգաս՝ քովը մօտեցիր, խօսէ ու բարեգործութիւն ըրէ: Ամենայն կերպով փախիր այն առիթներէն որ զքեզ աւելի դիւրաւ կրնան խոտորեցընել քու աղէկութենէդ, ու մի ըսեր թէ այս կամ այն հակամիտութիւնս չեմ կրընար ընկճել, աս փորձութեանս դէմ չեմ կրնար կենալ, չեմ կրնար իմին խառնուածքիս յաղթել: Ամէն բան կրնաս ընել, միայն թէ կամք ունենաս:

2. Ասո՛ ընդ ում կենակցիս եւ ասացից թէ որպիսի ոչ եղես: Առածիս իմաստն է, թէ ինչպէս խօսակցութեան մէջ աւելի անոնց ոճն ու եղանակը կը բանեցընենք որոնց հետ որ ստէպ կը խօսակցինք, նոյնպէս նաև շատ բանի մէջ ալ անոնց կը հետեւինք, որոնց հետ որ ստէպ կը կենակցինք: Արեմն գէշերէն փախիր, աղէկներուն՝ ի խնդիր եղիր ու անոնց հետ կենակցէ, այս կերպով կրընաս ինքզինքդ ուղղել ու բարի անուն ստանալ: Ասի կտոր մը գտայ որ անուշ

կը հօտէր . արդեօք ուրիշ տեսակ կաւ
մըն էր ասիկայ . չէ , այլ վարդենեաց
մէջ կեցեր էր :

է . Մղէկներուն օրինակը կը ստիպէ
զքեզ որ իրենց նմանիս . հակառակէն
փախիր : Աստիւ դատէ քու ըրածներդ ,
իսկ ուրիշներունը բարեսրտութեամբ :

զ . Մարոյական գրեանք կարդա , և
մասնաւորապէս երևելի մարդկանց վար
քերն ու պատմութիւնները . մի և նոյն
դիպուածներն անձիդ յարմարցուր՝ ու
րով առաջուց փորձ կ'ըլլաս , ու իրենց
ըրածներէն սովորէ վեհանձն դործոց
վրայ զարմանալ , առաքինիները սիրել :
Մայց գրքերը կերակուրի պէս են . շատ
ուտելը աղէկ չէ , հապա լաւ մարսել
պէտք է :

թ . Յիշէ որ միշտ Մստուած զքեզ
կը տեսնայ , որուն քիչ ատենէն հաշիւ
պիտի տաս ամէն գործոցդ և ամէն մտա
ծութեանցդ :

ժ . Մտնք են կամքերնիս ուղղադատ
պահելու համար պէտք եղած նախա
զգուշութիւնները . բայց թէ որ դժբաղ
դարբար մեղանչես , ինչ պէտք է որ ընես :
Մաւազոյն դեղը զղջալն է , և առա
ջադրել որ մէյ մ'ալ նոյն սխալանաց
մէջ չիյնաս . պակասութեանդ հակա

ուակ աղէկու թիւններ գործէ և ըրած
ներուդ գէշ հետեանքներուն դարման
ջանա ընել: Թէ որ ուրիշին ընչիցը մնաս
հասուցիր՝ ոչ միայն եղած մնասը հա
տուցանես, այլ նաև վատը կելու դուռ
մը բաց իրեն. մէկուն վրայ գէշ խօսե
ցար՝ ջանա՛ չէ թէ միայն իր վրայ լա
խօսելու, այլ ուրիշ ո՛ր և իցէ մարդու
վրայ ալ ըլլայ: Մարմինդ մեղօք արա
տաւորեցիր. քու պատիւդ մէյ մը մտա
ծէ, և առաջագրէ առաքինութեան
մէջ այնչափ զարգանալ՝ որչափ որ չար
ախտովդ զքեզ նուաստացուցիր: Արա
նի՛ քեզի, վասն զի այնպիսի կրօնքի մը
մէջ ծնած ես, որ չէ թէ միայն անմեղը
կ'որհնէ, այլ և թեւերը բացած կը
սպասէ ու ապաշխարող մեղաւորը կ'ըն
դունի, երբ յանցանքը խոստովանելով
թողութիւն կը խնդրէ:

ԻԳ

Կատարելագործել զայլս: — Այսչա
փով կը կատարելագործես մարմինդ,
միտքդ ու կամքդ. այլ առ միայն բաւա
կան չէ, հապա զուրիշներն ալ կատա
րելագործելու փոյթ պիտի ունենաս:

Արեմն ամենայն կերպով պիտի զգուշանաս այն ամէն բաներէն որ ընկերոջդ ցաւ կամ վնաս և կամ հիւանդութիւն մը կրնան պատճառել. լաւ ու օգտակար խորհուրդներ տուր անոնց որ կարօտ են. իսկ բարի օրինակ ամենուն: Վաստիարակութեան տարածուելուն նպաստէ, զուրիշը մի տհաճեցրնէր, այլ ընդհակառակն ուրախացուր. քաջալերէ ո՛վ որ առաքինութե մէջ կը դեղւի, պակասութե մը մէջ սահողը սիրողաբար ուղղէ, և քու դժկամակութիւնդ ցրցուր ախտաւորներուն դէմ: Ալ ըշտագնեալները միսիթարէ բարի գործքերով եթէ կրնաս, ապա թէ ոչ գոնէ խօսքով. այսպէս ընելովդ ամէնքն ալ կ'ըսեն թէ Աստուծոյ հաղատակերը ճարդ է:

ԻԳ

Իրաւունք և պարտք սեպհակասութեան:

Բայց ի՞նչպէս կրնայի ես իմ վիճակս լաւ ցընել թէ որ տէր չըլլայի իմ անձիս, ուղածիս պէս տնօրինելու իր վրայ. ի՞նչ պէս կրնայի ապրիլ առանց յատուկ բան

մը ունենալու . ի՞նչ ախորժ կրնայի ունե-
նալ ոչխար արածելու , երկիր մշակելու
մէջ՝ երբ ուրիշներն անոնց պտուղը ինծ-
մէ յափշտակէին . ի՞նչպէս ընկերութե
մը մէջ սիրով կրնայի կենալ թէ որ
յարգ ու պատիւ մը չունենայի . մարմինս
իմս է , աս կարասիքն իմս են , պա-
տիւնս իմս է . և այս է որ կ'ըսուի Իրա-
ւորս սէպհահանո-նէան , և ամենուն
պարտքն է ունեցածնին լաւ գործածել
և մեծարել յայլս զնոյն :

ԻԵ

Սէպհահանո-նէան 'ի վերայ Տարժնոյ : —
Աւրեմն ոչ ոք զիս կրնայ ստիպել որ լոկ
իրեն հաճոյիցը համեմատ ծառայութի
մը ընեմ ընդդէմ կամացս և տուժիւք
հանդերձ . դարձեալ ոչ ոք կրնայ ան-
պատճառ տեղ զիս բռնել փակել , կամ
մարմնոյս փնաս մը հասցընել , և ոչ ըստ
իրեն հաճոյիցն և դիւրութեանը հա-
մար անբան անասունի մը պէս ծառայ-
եցընել . միթէ Վստուած զամէնքնիս
ալ հաւասար չի՞ ստեղծած : Վայց ես
մարմնոյս վրայ ունեցած իշխանու-
թեամբս կը զեղծանիմ՝ թէ որ առող-

ջութեանս և կենացս մնասակար բա-
ներ ընեմ, գիտնալով որ աս իրաւուն-
քը ինծի տրուած է միայն իմ և ու-
րիշներուն բարւոյն համար:

ԻԶ

Սեպհանանունն 'ի վերայ պատուոյ: —
Եթէ մէկը յարգի ու մեծարելի է ու-
րիշներուն առջին, անով խիստ շատ հա-
ճոյք և իրական օգուտներ կրնայ ձեռք
ձգել. եթէ դուն զուրիշը զրպարտես,
գիտցիր որ գող ես ու կը յափշտակես
իր հանգիստն ու վաստակը: Քու պա-
տիւղ մտածէ, յիշէ որ բնութեամբ ա-
մենուն հաւասար ես. մտածելուդ և
գործելուդ մէջ պատուաւոր համարձա-
կութիւն մը պէտք է ունենաս՝ բայց ա-
ռանց հպարտութեան՝ որով զայլս նա-
խատելով զքեզ ատելի կ'ընես. ինչպէս
գարձեալ հեռու պիտի կենաս վատա-
ւրտութենէ, որ վատահոլութիւն չունե-
նալովդ քու անձիդ վրայ, չթողուր եր-
բէք որ արժանավայել բան մը մտածես
կամ գործես: Աւրիշներուն համարումն
ու մեծարանքը ստացիր և պահէ, այլ
առաքինութեամբ և իմաստութեամբ,

և ոչ եթէ ծուռումուռ ճամբաներով,
կամ ուրիշները վար զարնելով և կամ
շողոքորթութիւնք: Վարժենկոտութենէ՝
այսինքն քու արդեանցդ վրայ սոնքալէն
զգուշացիր, վասն զի իրօք արդիւնք
ունեցողը խոնարհ կ'ըլլայ. դուն քու
պարծենալովդ կը ստիպես որ ուրիշները
զքեզ արհամարհեն. բայց ամէն բանէ
աւելի փախիր լիրբ անձնագովութենէ,
այսինքն է ունեցած արդիւնքէդ վեր
զքեզ գովելէն. գիտե՞ս ինչ բանի պէտք
է փափաքիս. առաքինի ու քաղաքա-
կիրթ անձի մը համբաւ ստանալու:
Սուտի ո՛վ որ այս մասիս մէջ ուրիշի
վրայ մուր կը քսէ, եթէ առանց պատ-
ճառի կ'ընէ՝ ըսել է թէ անզգամ զըր-
պարտիչ մըն է. իսկ թէ ըսածը հիմն
ունի՝ բայց հարկ մը չկայ ըսելու, ը-
սել է թէ ցած չարախօս մըն է:

Վատիւր տղայութեան կը նմանի,
մէյմ'որ կորսուի՝ ալ չես կրնար նորէն
ձեռք ձգել: Արեմն ամենայն նախան-
ձայուզութեամբ պէտք է որ պատուոյս
վրայ հսկեմ, և անանկ բան մը չգոր-
ծեմ որ կարենայ կորսուիլ. ուրիշի վրայ
չարախօսելէն առաջ պէտք է լաւ մտա-
ծեմ, վասն զի որչափ որ դիւրին է փա-
սելը՝ այնչափ ալ դժուարին է եղած:

Ֆնասուն դարման տանիլը . ինչ բարի
բան որ ուրիշներուն վրայ լսեմ՝ յօժա-
րութեամբ պէտք է որ հաւատամ . իսկ
թէ չար լսեմ՝ պէտք է որ մէկէն հա-
ւատամ , ինչուան որ շատ ապացոյցներ
ձեռքս չունենամ , և ան ատեն ալ պէտք
է որ կարեկցիմ , լռեմ և ձեռքէս եկածն
ընեմ չարն արգիլելու և ուղղելու հա-
մար :

ԻԷ

Սեպհանու-Թի-ն ընչէց : — Երբ դեռ
աշխարհքիս բնակիչքը սակաւաթիւ
էին , ամէնքը իբրև ստացուածք այն-
չափ տեղ միայն ունէին որչափ որ ի-
րենց յատուկ օրական ապրուստին կըր-
նար բաւել , և ինչ պտուղ որ երկիրը
կը բերէր , և որսացած կենդանիներն :

Բայց երկիրը միշտ պտուղ չբերէր ,
և ոչ ալ միշտ կարելի է որսորդութեան
ելլալ . ուստի մարդիկ հարկ սեպեցին
ապրելու համար աւելի ապահով կերպ
մը մտածել , որով այլ և այլ կենդանի-
ներ իրենց ընտանեցուցին , ինչպէս եզ ,
ոչխար , այծ , ձագար , խոզ , հաւ , սագ ,
բազ , աղաւնի՝ զորոնք ժողվեցին ու պահ-

պանելով սնուցին, որպէս զի կարենան
առնել անոնց կաթը, միսը, բուրդն և
հակիթը, և ահա այս կերպով սկը-
սաւ հովուական կամ նահապետական
կեանքը: Ի այց նեղութիւն քաշելով
կենդանեաց ճարակ գտնելու համար
ասդին անդին թափառելէն, սկսան եր-
կիր մշակել, հերկել, սերմանել, հնձել,
պտուղներ հասցընել և այգիներ տնկել.
ան ատեն մարդիկ հաստատուն տեղ մը
կեցան, հնձածնուն մէկ մասը ձմեռուն
պահել սովրեցան, տուներ կառուցին,
ջրոց հոսանքներուն ընթացքը կարգա-
ւորեցին և ճամբաներ բացին. և ո՛վ որ
գաշտ մը հերկեր էր՝ իրաւունք ալ ունէր
անոր հունձքն իրեն և իր ընտանեացը
պահելու, այսինքն անոր տէր ըլլալ և
մեռնելէն ետքն ալ նոյնը իրեն որդւոցը
ժառանգութիւն թողուլ:

ԻԸ

Ճարտարարութիւն: — Պարզ մշակութիւն
միայն մարդս սեպհական ընչից տէր ըլլ-
լար. վասն զի ՚ի բաց առեալ քանի մը
տեսակ պտուղները, մէկալ մնացած
բնութեան բերքերն անգործ են, այս-

ինքն երկայն աշխատութեան կարօտ
են որ զանոնք մեր պիտոյիցը համար կա-
րենանք գործածել. ինչպէս օրինակի
համար ըսենք կանեփը որ դաշտին մէջ
կը բուսնի՝ այրելէ զատ ուրիշ բանի չը-
կրնար ծառայել. երբոր հասուննայ՝
մարդիկ կը քաղեն, և որպէս զի թրմի
ու կակրղնայ՝ դաշտին վրայ կը թողուն
կամ ջրի մէջ կը ձգեն. ետքը երբոր ցօ-
ղուններն արեւուն մէջ լաւ մը կը չորնան,
կը սկսին ծեծել և անանկով կեղևը
կ'իյնայ և կը մնան միայն թելերն ա-
ռանց կեղևի. վերջը անիկայ կ'առնեն
կը գզեն՝ որպէս զի շիւղերն ու թանձր
մասը բաժնուի, ու բարակ և փափուկ
մասը մնայ. ետքը կանայք աղեկատին
վրայ կ'ուրրեն ու կը մանեն. մանուելէն
վերջը ոստայնանկը կ'առնէ կը հիւսէ
կտաւ կը շինէ. յետոյ ան կտաւէն սա-
ւան և ուրիշ ձերմակեղէններ կը շի-
նուին:

Այս պատրաստութիւնները կամ թէ
ըսենք աս աշխատութիւնս քիչ շատ ա-
մէն բերքի հարկաւոր է, որուն ծարարա-
րութի կ'ըսենք. և ո՛վ որ այսպէս կ'ընէ՝
վարձքն ալ կ'ընդունի: Վանող կա-
նայք, ոստայնանկն ու դերձակն իրենց
աշխատած կանեփին վրայ սեպհակա-

հու թիւն կը ստանան, հաւասար ան դե-
ղացիին որ ցաներ ու հնձեր է :

ԻԹ

Արհեստ : — Կրթ ճարտարու թիր դեռ
չէր զարգացած, ամէնքը ստիպուած էին
ամէն բան իրենք իրենցմէ ընելու . եր-
կիր հերկել ու մշակել եղեր է, բահ և
մանգաղ պատրաստել, տներ շինելու
համար փայտ կտրել ու զգեստ կարել
եղեր է . վերջապէս՝ ամէն բան : Բայց
ասանկով մարդս չափէ դուրս կ'աշխա-
տէր ու խիստ շատ բանի զբաղելով՝ բան
մ'ալ չէր կրնար լաւ ընել . հազիւ թէ
ժամանակ կը գտնար իրեն պիտոյքը լե-
ցրնելու, թող թէ արուեստից մէջ կա-
տարելագործուելու, և աւելի քիչ՝ գի-
տութեանց ետեւէ ըլլալու :

Սակայն հետզհետէ շատ մարդիկ
այլ և այլ արհեստներու ետեւէ եղան .
մէկը երկրագործութեան, մէկալը ձե-
ռագործի, միւս մը կերակրեղինաց, ու-
րիշ մը զգեստուց և ազանելեաց, բնա-
կարանի և իրենք զիրենք պաշտպանե-
լու : Ասան զի ընկերութիւն մը որչափ
աւելի բարկընայ՝ այնչափ աւելի ալ աշ-

խատու թիւնները կը բաժնուին , որով
ամէնքը աւելի կը վաստրկին և աշխա-
տու թիւնն իսկ կը կատարելագործուի .
որովհետև միշտ նոյն բանն ընելով
մարդս՝ նաև լաւ ընելու կը վարժի :

Մ. յս է մէջերնիս եղած արհեստից
բազմանալուն պատճառը որ հիմա կը
տեսնաս . մէկն որ արուեստ մը ունի
ձեռքը՝ իրաւամբ վարձք ալ կ'ընդունի ,
և տարակոյս չկայ որ վաստրկածին վրայ
արդարապէս իշխանութիւն ունի :

Լ

Վաճառահանութիւն : — Իմ դաշտս լաւ
ցորեն կը բուսցընէ , քուկդ ալ խաղող .
մէկ մաս մը ցորեն ես քեզի կու տամ ,
դուն ալ փոխադարձ գինիէդ մաս մը
ինձի կու տաս , որով երկուքնիս ալ թէ
հաց կ'ունենանք և թէ ըմպելիք : Ի՞նչ
պարտիայէն շատ մետաքս կ'ելլայ , Գե-
նուայէն ալ աղէկ ձէթ . ուստի Ի՞նչ
պարտացիք մետաքս կու տան ու Գե-
նուացւոցմէ տիկ տիկ ձէթ կ'առնուն :
Եւ ոչխարներուս բուրդը կը կտրեմ՝
բայց մաքրելու կերպը չգիտնալով քե-
զի կը յանձնեմ որ մաքրես , գզես , մա-

նես, հիւսես և երկու վերարկու շինես,
մէկն ինձի՝ մէկալը քեզի:

Եւ փոխանակու թիւնները վաճառա-
կանու թեան ամենէն սրարզ կերպերն
են. դուն ալ նոյնը կ'ընէիր տղայու.
Թեանդ միջոց, երբ որ խնձորդ ընկերոջդ
կու տայիր որպէս զի իրեն խաղալիքը
քեզի տայ. հիմա խնձորին տեղ ստակ
կը գործածես, վասն զի աս փոխանա-
կու թիւները դիւրացնելու համար մար-
դիկ ստակը հնարեցին՝ որոնք մետաղի
կտորուանքներ են որոշեալ ծանրու-
թեամբ, ձևով ու նշանով, որոնք իրենց
չափովն ամէն աշխատու թեանց և որ և
իցէ նիւթի արժէքին տեղ կը բռնեն:
Ի՞նչ որ ասուեղէնի կարօտու թիւն ու-
նիմ, ստակը ձեռքս կ'ելլամ վաճառա-
կանին կ'երթամ որպէս զի իրմէ գնեմ.
Գէնը կը յարմարցընեմ և ինքն ալ ինձի
չը ծախե: Եթէ հարկ է որ մէկը ա-
ռանց պարտրկան ըլլալու ինձի ծառայ-
է, վարչք կը խոստանամ իրեն. ուստի
ինքը կը ծառայէ ինձի, ես ալ չը վճա-
րեմ իրեն. ասուեղէնը ծախողն և ան
ծառայու թիւնն ընողը իրենց առած գը-
նոյն և վարձքին վրայ սեպհականու թե
իրաւունք մը կը ստանան. թէ որ ես այն
ասուին առնելէս, կամ ան ծառայու-

Թիւնն ընդունելէս ետքը խոստացածս
չտամ՝ գող կ'ըլլամ. թէ որ վաճառա-
կանը վաճառքին որպիսու թեանն և ար-
ժէքին մէջ զիս խաբելու ըլլայ՝ ըրածը
գողու թիւն է. դարձեալ գող է անիկայ
որ ծառայողին աշխատու թեան համե-
մատ վարձք չտար :

ԼՍ.

Այն անձանց անուններն : — Ընկերու թէ
մէջ դեռ ուրիշ պարապմունքներ ալ
հարկաւոր են, ինչպէս բժիշկը զմեզ
առողջացրնելու համար, փաստաբանը
մեր իրաւունքները պաշտպանելու հա-
մար, վարժապետը դաստիարակելու
համար, քահանան հաւատոյ կարեւոր
բաները սովորեցրնելու համար, դատա-
ւորը մէկուն իրաւունք ունենալը չունե-
նալը որոշելու համար, զինուորը մեր ա-
պահովու թէ վրայ հսկելու համար, և
այսպէս դեռ ուրիշ շատ զբաղմունքներ¹.

¹ Ասանկ կրնանք բաժնել ան ամէն զբաղմունք-
ները որոնցմով արհեստից և պարապմանց մէջ
սեպհականութիւն մը կը ստացուի : Արհեստներն
իրեք դաս կը բաժնուին .

Յ. Անոնք որ բարեբերութիւն կը պատճառեն .
զոր օրինակ . Արս, Ձկնորսութիւն, Երկրագոր-

ասոնք բոլորն ալ ուրիշներուն օգտին
համար չե՞ն մի աշխատիր . ուրեմն իրա-
ւացի է որ վարձք մը ունենան :

ԼԲ

Անհասարակութիւն հարստութեան : —
Տեսար թէ որչափ տեսակ վաստակի
դուռ կայ եղեր . ուստի ո՞վ որ իր դաշ-
տը աւելի լաւ կը մշակէ ու պաղաքեր
կ'ընէ , ո՞վ որ աւելի ազնիւ գործուածք-
ներ կը շինէ , ո՞վ որ աւելի ուժ և աւելի
խելք կը բանեցընէ օգուտ քաղելու հա-
մար , ո՞վ որ աւելի փութաջան է աշխա-
տութեան մէջ , և խոհեմութիւն կը

ծուծիւն և հանքաբանութիւն՝ այսինքն քարերու ,
աղերու , գետնածուխի և մետաղաց հանելուն հա-
մար եղած աշխատութիւնները :

Բ . Պիտոյից , հանգստեան և հաճոյից համար ե-
ղած արուեստները :

Գ . Վաճառականութիւն՝ որուն հետ կ'իմա-
ցուին ծախելը , փոխադրութիւնն և վճարելը :

Ազնուական արհեստ կամ պարապմունք ը-
սուածներէն ոմանք կ'ընեն , ինչպէս Արթուրի ,
Իրաւագիտութիւն , Անդաշափութիւն և հաշուե-
գրութիւն : Ոմանք ալ կ'օգնեն , ինչպէս Բժշկու-
թիւն , Վիրաբուժութիւն , Գեղագործութիւն :
Ոմանք ալ կը սանջեն , ինչպէս Արդարութիւն և Զի-
նուորութիւն : Իսկ ասոնց ամենուն գերագոյն
գլուխն է Արօնքը իր պաշտօնեաներովը :

բանեցրնէ, իր առածին ու տուածին
մէջ, աւելի կը շահի՝ այսինքն աւելի
հարուստ կ'ըլլայ: Աւ որովհետեւ մար-
դիկ ամէնքն ալ հաւասար են՝ իրաւունք
չունի քիչ բան ունեցողը շատ ունեցո-
ղէն յափշտակել: Անպէնք թէ ծովու
կամ լճի մը ափունքը կեցած կը դի-
տենք թէ հոն եղած ձկնորսներէն ո՛վ
աւելի խեղեփար կը բռնէ. երբոր ցան-
ցերնին դուրս կը քաշեն՝ կը տեսնենք
որ մէկը հարիւր որսացեր է, միւսը
հազիւ թէ յիսուն, երրորդ մըն ալ
աւելի քիչ. որովհետեւ անանկ տեղ մը
կեցեր է ուր շատ չկան եղեր. իսկ չոր-
րորդ մ'ալ ոչինչ՝ վասն զի բռնածը կոր-
սընցուցեր է. հիմա աս վերջինս կրնայ
ըստ ինքեան աղաչել մէկալնոնց որ ի
րենցինէն քիչ մը իրեն տան՝ բայց չկըր-
նար պարտաւորել. վասն զի ամենուն
որսացածն իրենն է, որով հարիւր որ-
սացողը՝ իրաւունք ունի տունը տանելու
զանոնք, բարեկամներուն ու ազգական-
ներուն ընծայ տալու, ծախելու, վայել-
լելու: Թէ որ մէկը իրեն ըսէ, թէ Դոն-
հարիւր խեղեփար ունիս՝ իսկ ասիկայ եւ ոչ
մէկ մը, եւ Դոնիէնէր յիսունը իրեն հոս աստ
որպէս չի հաստատար ըլլատ. ինքը կրնայ
պատասխան տալ, թէ Ինչո՞ւ պիտի աս-

նէս, ես ալ իրեն հասասար չէ՛մ. ուրէ՛ն իրեն
պէս ես ալ իրաւունք ունի՛մ վասարչածս ին-
ծի պահելու. և ըսածն իրաւացի է: Աս
առակը քեզի լաւ կը բացատրէ թէ աղ-
քատն ու հարուստը ինչպէս կը համե-
մատին իրարու հետ. անհաւասար ՚ի
հարստութեան և հաւասար ՚ի բնու-
թեան: Արդ ո՛վ որ ունի՛ կրնայ ունե-
ցածը ծախել, ընծայ տալ ու ժառան-
գութիւն թողուլ:

ԼԳ

Սեպհահանո-Ռի-նն ինչպէս կը գործա-
ծուի: — Թէ որ ես ինծի ստացուածք
մը չհայթայթեմ, եթէ զիս և եթէ
ուրիշները վնասելու վտանգի մէջ կը
դնեմ. զիս՝ որովհետեւ կատարելագոր-
ծութեան միջոցները չեմ ունենար.
ուրիշները՝ վասն զի թէ որ կարօտու-
թե՛ մէջ իյնամ, հարկ կ'ըլլայ որ ուրիշի
օգնութե՛ր դիմեմ. ուրեմն անհրաժեշտ
պարտք մըն է որ իւրաքանչիւր ոք ար-
հեստ մը իրեն ընտրէ, և մտադրու-
թեամբ անոր ետեւէն ըլլայ: Ասան զի՛
Ո՛վ որ չեւոք արհեստ մը ունի, սպան
ալ ունի: Այն իսկ հարուստներն ալ

բան մը պէտք է սովորին, որովհետեւ Առին ոտքի վրայ կեցողն ալ կրնայ էյնաւ ըստ առածին. ասկէց դուրս՝ դատարկացորտ և անարուեստ մարդէ մը աւելի մնասակար ու պախարակելի բան չկայ :

Մնմեղ աղքատութիւնն յանցանք մը չէ, մանաւանդ թէ յարգելի է ու օգնութիւն կը գտնէ. իսկ ան որ պղերգութենէ և յախտից առաջ կու գայ՝ անիկայ է յանցանք : Մէկն որ այսօր լաւ մը կ'ուտէ կը խմէ, առանց մտածելու թէ վաղը ինչպէս պիտի կարենայ փորը կշտացընել՝ այնպիսին խենթ է :

Բայց վաստակի ետեւէ ըլլալն ալ չափաւորութեամբ մը պէտք է ըլլայ, և ոչ եթէ ապօրինաւոր միջոցներով, ցած ճամբաներով : Չափազանց չփափաքիլ վասնզի Ո՛րչափ շատ բանի ետեւէ ըլլաս՝ այնչափ ցաւերդ էլ շատցընես, կ'ըսէ առածը. ինչ որ քու պատշաճապէս ապրելուդ համար բաւական է՝ զայն հայթայթէ. թէ որ աւելի վաստրկիս՝ ալ լաւ, կրնաս ուրիշներուն ալ օգտակար ըլլալ. չափազանցը մնասակար է : Հարստութիւնը լաւ ծառայ մըն է, բայց ուրիշ կողմանէ գէշ տէր ալ է :

Ղարտարութեամբ վաստրկածդ խը-

նայու թեամբ պահէ . Առաջին շատաւն
խնայողութիւնն է , կ'ըսէ առակը : Աղքատ
տու թիւնը երկու բանէ կը վախնայ ,
աշխատութենէ և խնայողութենէ . ա-
նոր համար ասոնք ոչ երբէք իրարու
հետ մէկտեղ կրնան կենալ : Ա երմա-
կիդ չափ ոտքերդ երկընցուր . եթէ մե-
տաքսեղէն չես կրնար հագուիլ չափա-
ւոր բան մը հագուէ , ու վաստը կածէդ
գոնէ հինգ բարս մը պակաս ծախքը-
րէ : Տարիքդ կ'առնուս , որդիքներ կ'ու-
նենաս , կրնայ սով հանդիպիլ , կրնայ
առուտուրդ ձախորդ երթալ , կարգէ
դուրս ծախք մը կը ստիպուիս ընել հի-
ւանդութեան պատճառաւ կամ մէկու
մը քով մտնելու համար , բարեկամիդ
մէկուն կամ հայրենեացդ օգնելու հա-
մար . ան ատեն կ'ըմբռնես քանի մը դա-
հեկան մէկդի դնելուդ աղէկու թիւնը :
Բայց զգոյշ եղիւր ագահութիւն , ամենա-
գէշ ախտ մըն է՝ որ թէ՛ իրեն և թէ՛ ու-
րիշներուն պէտք եղածը կը զլանայ՝
միայն ստակ շատցընելու ախորժով :

Առաքինի ու քաղաքակիրթ մարդն
իր գլխոյն ու բազկացը վրայ կը դնէ իր
յոյսը , չէ թէ ուրիշներուն օգնութեա-
նը վրայ . շահուն համեմատ իրեն ծախ-
քը կը կանոնաւորէ . գիտէ որ ծովը կը

ցամբի թէ որ պակսած ջրոյն տեղը ու-
րիշ ջուր չլեցուի . ոչինչ բաներն ալ կը
հաշուէ, վասն զի քիչ քիչ մէկմէկու-
քով դալով մեծ քանակ մը կը ձևացը-
նեն . չափաւոր կ'ուտէ, կարգաւորեալ
կը հագուի, բնակութիւնն ալ վայե-
լուչ բայց առանց շռայլութեան : Վի-
տէ որ առաջին խնայութիւնը ժամա-
նակի խնայութիւնն է . ստակը խաղե-
րով չփճացրնէր, հապա աւելցածը օգ-
տակար բանի մը կը գործածէ, կամ շա-
հու կը դնէ Արիւ խնայողութեան ըսուած
ընկերութեանց քով, մտածելով միշտ
որ ստակը ան ատեն աւելի լաւ գործա-
ծուած կը սեպուի՝ երբ ողորմութիւն
ընելու, կամ որդւոց կրթութեանը հա-
մար կը գործածուի : Աստուծմէ միայն
աս կը խնդրէ ըսելով . Շնորհէ ինձի,
Տէր, անանկ չափաւորութիւն մը որ
հարստութեան ախտերէն ու աղքա-
տութենէ առաջ եկած մեղքերէն ա-
զատ ըլլամ :

ԼԳ

Ուրիշը անհանգիստ ընել էր սեպհանա-
նու-Քեան էրասանցը Ֆէլ: — Ուրիշները
անհանգիստ կ'ընեմ ու կը խռովեմ ոչ
միայն բռնութեամբ ու խարդախու-
թեամբ իրենց ստացուածքն յափշտա-
կելով, այլ նաև արգելք ըլլալով որ չկա-
րենան ուզածնին ընել. ուրիշին բանը
պահելով ու ծածկելով, և կամ ուրիշ
կերպով մը մնասելով. զոր օրինակ ծառ
մը կտրելով, դուռ մը կտրելով, կա-
րասի մը փճացրնելով, ցորենի արտերը
ապականելով անոնց մէջ որս ընելու
համար. ևն: Իսկ ինչ ըսեմ անոր որ
խիղճ չընէր ուրիշի տնէն ստակ ու նաև
ուրիշ բաներ վերցրնելու. մարդասպա-
նէն աւելի անարգ է այնպիսին, որ ա-
նիկայ գոնէ իր կեանքը վտանգի մէջ կը
դնէ, բայց ասիկայ իր վրայ վստահութի
ունեցողին բանը կը գողնայ: Սմանք
մեծ չար մը չեն սեպեր դաշտերէ ու
պարտէզներէ պտուղ գողնալը. բայց
ձեռն է արդեօք առածնիդ. հապա թէ
որ ձեզմէ գողնալու ըլլային: Մէլի ա-
նոր համար յանցաւոր էք, վասն զի

զգուելի ախտ մըն է որ զձեզ առ այս կը
յորդորէ՝ որ է որկորը :

Ըէ , պատանեակք . կ'աղաչեմ ու կը
յանձնեմ ձեզի , եթէ խնդիրքս կրնայ
զօրել , որ ուրիշներուն բանին չդպչիք .
ամենէն չնչին բաներէն ալ զգուշացէք ,
ինչուան գրիչ ու գնդասեղ մը առնելէ :
Թէ որ ցուկանաւները լեզու ունենային
կրնային պատմել , թէ ինչպէս ամէն
իրենց մէջ մեռնողները շիւղ մը վերցը-
նելէն գողնալ սկսան . և դարձեալ մէկ
անգամ մը միայն իբրև գող բռնուած
ըլլանուն ամօթը պէտք էր որ բաւա-
կան ըլլար ամէն փորձութիւն հեռա-
ցրնելու իրենցմէ :

Իսկ թէ որ կորսուած բան մը գրտ-
նաս , քուկդ չէ ու պարտաւորեալ ես
դարձնելու . թէ որ դուն կորսընցու-
ցած ըլլայիր՝ ինչ կը փափաքէիր . կ'ու-
զէիր որ քեզի դարձուի . կորսընցնողին
ցաւը մէյ մը մտածէ . վազէ , որուն ըլ-
լալը փնտռէ ու տուր , և զանիկայ մխի-
թարեալ տեսնելուդ վրայ ուրախացիր ,
և զինքը բարեկամ քեզ ստացիր : Ինչ-
գամ մը դահեկան մը գտայ գետնէն ու
կ'ուզէի պահել , որպէս զի եթէ աղքատ
մը հանդիպի անոր տամ , վասն զի գը-
տածս ոչինչ բան մը երևցաւ ինձի . բայց

մայրս հրամմեց որ երթամ անոր տէրը
փնտռեմ. գտած տեղս դարձայ ու տես-
նեմ որ աղջիկ մը կեցած կու լար ու կը
ցաւէր նոյն դահեկանը կորսընցնելուն
վրայ՝ որ մօրը բոլոր ունեցածն էր և ա-
նով հաց մը պիտի դնէր :

ԼԵ

Իրաստուք և պարտք ազատութեան :

Թէ որ մարդս պարտրկան է ինքզին-
քը պահպանելու և կատարելագործե-
լու, պէտք է որ ազատութիւն ալ ունե-
նայ իրեն պահպանութեանն և կատա-
րելագործուելուն համար հարկաւոր ե-
ղած բաներն ընելու. բայց աղէկ հաս-
կրնանք. ազատութիւն ըսելով ոչ թէ
ամէն խելքերնիս փչածն ընել կ'իմա-
նանք, այլ ինչ որ պէտք է զայն ընել,
անանկ որ ոչ ոք պիտի կարենայ ար-
գելք ըլլալ մեր ունեցած կարողութիւն
ները իրենց վախճանին ծառայեցընել
ուզածնուս պէս : Մէկը ուրիշին գոր-
ծոցը ան ատեն միայն կրնայ արգելք
ըլլալ՝ երբոր հաւասարութեան դէմ
ելան :

Պատանեկութեան միջոցնիս դեռ
չենք ճանչնար թէ ո՞ր բանն օգտակար է
և ո՞րը վնասակար . ասոր համար ծնողք-
նիս և վարժապետները մեզի կը հրա-
մայեն՝ թէ աս ըրէ , ան մի ըներ : Արբ
կը մեծնանք՝ կամքերնիս , կիրքերնիս ,
մեր շահը կամ տգիտութիւնը զմեզ
չար գործքեր ընելու կը յորդորեն և ու-
րիշներուն վնասելու . ասոր համար օ-
րէնքներ կան որ կը հրամայեն մեզի ը-
նելիքնիս , որոնք նաև կը ստիպեն զմեզ
բռնութեամբ և պատժօք . ասիկայ մեր
ազատութիւնը չվերցընէր , այլ մանա-
ւանդ թէ կ'ապահովցընէ :

Անթաղրենք որ ես ամէն ուզածս ու
ախորժածս կարենամ ընել . ուրիշներն
ալ նոյնպէս կարենային ընել . իրենց
ըստ կամս հաճոյքը իմ ազատութեանս
արդեւք կ'ըլլար , որով միշտ կուուոյ և
ուզածնիս պաշտպանելու վիճակի մը
մէջ պիտի ըլլայինք :

Յայտնապէս ուրիշներուն ազատու-
թեանը կը վնասեմ երբ զիրենք կը ստի-
պեմ որ չուզած բաներնին ընեն , երբ
կը պահանջեմ որ ինծի պէս մտածեն ,
երբ կը ծաղրեմ իրենց գործունէու-
թիւնն ու փութաջանութիւնը , երբ ար-
դեւք կ'ըլլամ իրենց կոչմանը , երբ չա-

րասրտու թեամբ կը սլախարակեմ իրենց
ըրածը, երբ իրենց անմեղ գործողու-
թեանցն աչք կը տնկեմ ու կը խափա-
նեմ: Ար ֆնասեմ իմ ազատութեանս՝
երբ առանց լաւ մտածելու պարտքեր
վրաս կ'առնեմ, երբ անհոգ կ'ըլլամ այն-
պիսի վիճակ մը ընտրելու՝ որ կարելի ե-
ղածին չափ անկախ ըլլամ ուրիշներէն,
երբ պարտքի տակ մտնելով իմ ազա-
տութիւնս կը կորսընցնեմ, երբ անիրաւ
գործողութիւններ ընելով՝ ուրիշները
կը ստիպեմ որ զիս սանձեն:

Արկին կրկին մտածէ, ու ինծի պէս
կը տեսնաս որ ազատ ըլլալու միակ մի-
ջոցն է առաքինի ու քաղաքակիրթ ըլ-
լալը. վասն զի առաքինութիւնը ստոյգ
չարիքներէ, փախչիլ կը սորվեցընէ, և
կ'ազատէ յայտնի բռնաւորներու ձեռ-
քէն՝ ինչպէս են ախտերն ու կիրքերը:

ԼԶ

Իրաւունք և պարտք պաշտպանութեան:

Բայց ի՞նչ բանի կու գային իրաւունք-
ներս թէ որ չկարենայի պաշտպանել
ընդդէմ անոնց, որոնք իմ իրաւանցս

դէմ կ'ելլեն . ուրեմն ունիմ կարողու-
թիւն իմ կեանքս , ազատու թիւնս , պա-
տիւս , ստացուածքս , ընտանիքս և ըն-
կերու թիւնը պաշտպանելու :

Ինքզինքդ պաշտպանելու առաջին
հնարքն է՝ փախչիլ այն ամէն բաներէ
որոնք քեզի մնաս մը կը բերեն . թէ որ
նիւթական բան մը կամ կենդանի մը
ինծի մնասէ՝ կրնամ որ և իցէ կերպով
անկէ ազատիլ , ինչուան զինքը փճացը-
նելով . իսկ թէ որ մարդիկ ինծի չարիք
մը ուղենան հասցընել , պէտք է որ բո-
լոր մտաց և մարմնոյ ուժովս իրենց դէմ
կենամ , բայց այնչափ միայն՝ որչափ իմ
ապահովութեանս համար հարկաւոր
է : Թէ որ գող մը վրաս յարձրկի , և
ես թէ որ կռուելով կամ օգնու թիւն
կանչելով կրնամ յաղթել իրեն՝ ու ընդ
հակառակն կը սպաննեմ՝ յանցաւոր եմ :

Արիշէ մը նախատուելով կատղե-
ցար , բայց ինչ շահ եղաւ քեզի . բար-
կու թիւնը զքեզ աւելի կը խռովէ , և
ոչ միայն այն ըրածովդ կրած նախա-
տինքդ չսրբեցաւ՝ այլ թերևս անիրա-
ւեցար բանիւք և գործովք : Չարի չար
հատուցանելը մեղք է . լաւագոյն վրէժ-
խնդրու թիւնը ներեն է : Արիգորը ,
Աերսեսէն նախատուելով ներեց անոր

ու փոխադարձ բարերարութիւն ալ ընելով, Աղէկ հնարքը գրայ, կ'ըսէր. երբ Վրէժիհարրո-Ռի-ն ընել էր Տրածէի՝ էր վախէի որ նոր չարիք ճը գլուխս չգայ. գիշերը քունս չէր պանէր ու ամբողջ օրը անոր դէմ հնարքներ էր Տրածէի. երբոր հաշտութեաց, ամէնքը Վրաս աստիճանի ու քաղաքապետներն Տարդոս ճը համարձակուի ասին. Ներսէսն ալ շատ ճը չհաստաց, եւ ո՛ր գիտէ Ռէ ղիտքը գրգռելովն էնչէր չէր իրնար ընել. վերջապէս իմացաւ որ ամէնեւէն իրասունք չունէր. եւ հասնիմէ Ռոզո-Ռի-ն ինդրէց ու նորէն բարեհասցանք :

Ալ որ ուրիշի զրկանք մը ըրեր է պէտք է որ վնասուն փոխարինէ, անիրաւութեամբ առածը ետ դարձնէ, նախատանաց հատուցումն ընէ եւ տրւած գայթակղութիւններն ուղղէ. բայց հատուցումը պահանջելու համար հարկ չկայ բռնութիւն ձեռք առնել. կռուիով¹ բան մը չշտկուիր. տեսնէր ես արդեօք որ կոտորած դարան մը գաւազանի հարուածով նորոգեն. չէ. պէտք է որ կոտորուանքները մէկմէկու քով դնես, սոսինձով կպցնես ու նորոգես. այսպէս ալ մէկը որ իր իրաւունքը նախատին.

1 ՏՃ. Երանայ :

քով ու կռուով կ'ուզէ պաշտպանել, ի-
րեն աւելի կը մնասէ : Արացիդ քեզի
անիրաւութիւն մը ըրաւ, ջանա քու ի-
րաւունքդ խօսքով անոր հասկըցընես .
ն գիտէ, թերեւս իրարու խօսքը կրնաք
հասկընալ . բայց նայէ որ խօսուածքդ
քաղցր ու պատճառներդ զօրաւոր ըլ-
լան : Թէ որ չկարենաք միաբանիլ, ա-
հաւաստիկ արդարութեան ատեանները
կեցեր են . բայց անոնց միայն յուսահատ
դէպքերու մէջ դիմեցէք, ամենազօրա-
ւոր դեղերու պէս որոնք միայն ամէն
հնարք պարապ ելլելէն վերջը կը դոր-
ծածուին : Ատաստանը երկու կողմին
ալ կործանման պատճառ կ'ըլլայ, և շատ
անգամ յաղթողն ալ անբաւ ծախք ընե-
լէն ետքը բան մը չվաստրկիր :

Անգամ մը երկու ձկնորս խեցի մը
գտնելով ծովեզերքը սկսան կռուիլ թէ
որուն կ'իյնայ խեցին . լաւ մը կռուելէն
ու կանչելէն ետքը ելան դատաւորին
դնացին . դատաւորը ծանրութեամբ մը
ձեռքն առնելով բացաւ ոստրէն ու մէ-
ջինը ուտելէն ետքը պատեանին մէկը
մէկուն, միւսը մէկալին տուաւ : Այս ա-
ռակը մտքերնիդ պահեցէք, և ասով
թերեւս շատ ծախքերու մտմտութենէ
ազատ կ'ըլլաք : Աարձեալ մտքերնիդ

լաւ դրէք որ մարդուս իր իրաւունքնե-
րը յարգել տալու լաւագոյն կերպը,
ուրիշներուն իրաւունքը յարգել ու մե-
ծարեւն է:

ԼԵ

Իրաւունք և պարտք ճշմարտութեան:

Ի՞նչ կ'ըլլար աշխարհք թէ որ մար-
դիկ տարբեր բան մտածէին ու տար-
բեր բան խօսէին, թէ որ այսին տեղ
ուր փոխանակէին, թէ որ իրենց տը-
ւած խոստմունքները չպահէին. բնաւ
մէկը բան մը չէր հասկընար, ոչ ոք ու-
րիշին վրայ կրնար վստահանալ, և մեր
խօսելու զարմանալի գործիքը լեզուն՝
զոր մէկմէկու հետ միաբանելու և մէկ-
մէկու օգնելու համար առած ենք Մ.
տուժմէ, ընդունայն՝ մանաւանդ թէ
փաստակար ալ կ'ըլլար: Բայց ինչպէս
իրաւունք ունինք մեր բարեկեցու թեան
փոյթ ունենալու և զմեզ կատարելա-
գործելու, ասանկ ալ նաև իրաւունք
ունինք ճշմարտութիւնը գիտնալու, և
պարտրկան ենք ճշմարտը զուրցելու:

Արբէք սուտ չխօսիս, ո՛վ պատա-
նեակ. արուեստակեալ բառերով մի

կեղծեր ճշմարիտը, բառերուն տարբեր
խմաստ տալով. և չըլլայ թէ ճշմարտու-
թենէ դուրս տարբեր բան մը երևցը-
նես քու կերպերովդ: Ասկէ աւելի ի՞նչ
լաւ գովեստ կրնայ ըլլալ՝ երբոր մէկու
մը համար ըսեն. Անկեղծ Տարդ է, ու
խօսիչը Բռնող: Աայց ո՞վ որ սուտ կը խօ-
սի՝ յայտնի կը ցուցընէ որ չար միտք մը
ունի, կամ ծածուկ ախտ մը որով կ'ա-
մրչնայ ճշմարիտը ըսելու: Ասոր համար
կ'ըսուի թէ սուտ խօսիչը անխելքնե-
րուն համար աղէկ զէնք մըն է. թէ-
պէտ և շուտ մը կը մատնուին, վասն զի
սուտին սրունքները կարճ են, և ան ա-
տեն ի՞նչ ամօթ է մարդուս ստախօս
գտնուիլը:

Ղարձեալ մի ըսեր ինծի թէ՛ Սոսո
Տը խօսեցայ՝ Բայց Բե՛Լե Բան Տըն էր, և
Բնա-Պէ՛հո-Տը Ժաա չէր Բե՛րէր, Տանա-անդ
Բէ զէս ալ շո-րիշնէրն ալ չարիքէ Տը կ'աղա-
տէր: Ստոյգ չարիք մըն է սուտ խօսիչը,
և անստոյգ անկէ առաջ գալու բարիքը.
բարիք կ'ելլէ ասկէ ըսելով՝ չարիք գոր-
ծել չըլլար. թէ՛թ և սուտ մը աւելի մե-
ծերուն դուռ կը բանայ. թէ՛ որ դուն
լաւ կարծելով սուտ խօսեցար, նոյնպէս
ուրիշներն ալ մտքերնին աս բանս կամ
ան բանը լաւ դնելով, կը սկսին անխիղճ

սուտ խօսիլ . և այսպէս մարդկային ընկերութեան մէջ վստահութիւնը նուազելով, ընկերութիւնն ալ կը նուազի :

Խօսքով եղած սուտերէն դուրս ըզգացման սուտեր ալ կ'ըլլան, երբ սրտերնիս չեղածը արտաքուստ կը կեղծենք : Աեղծաւորը ջերմեւանդութիւն կը ձեւացընէ, մինչդեռ ինքը գէշ մարդ մըն է . խաբեբան առաքինութիւն կը ձեւացընէ ու կը ջանայ զքեզ մոլորեցընել . շողոքորթը բարեկամ կը ձեւանայ և ախտերդ ալ կը գովէ . զգուշացիր շողոքորթներէն . վայրենի գաղաններուն մէջ ամենէն վնասակարը՝ չարախօսն է . իսկ ընտանի գաղաններուն մէջ՝ շողոքորթը :

ԼԸ

Խռէ՛ հոռիւն . — Տայց պէտք է գիտնալ որ անկեղծութիւնը չպարտաւորեր զմեզ ամէն բան զուրցելու . ամէն ճրճմարտութիւն ըսելը աղէկ չէ : Աեղծաւորիլը՝ չեղած բանը ըսել է . իսկ չգիտնալու զարնելը՝ եղածը լռել է . կեղծաւորիլը երբէք օրինաւոր չէ, իսկ չգիտցող ձեւանալը երբեմն պարտք է ու մար-

դավարութիւն : թէ որ շիւ մը կամ
տղեղ ու զազրատեսիլ մարդ մը տես-
նես և երեսին մէկէն զարնես իր պա-
կասութիւնը, ասիկայ չէ թէ անկեղ-
ծութիւն՝ այլ կոպտութիւն ու տմար-
դութիւն է : Մտենք թէ մօր մը միակ
որդին սպաննուեր է . թէ որ դուն մէ-
կէն վազես ու ըսես՝ իրեն ալ մեռնելուն
պատճառ կ'ըլլաս : Ղարձեալ շահաւոր
բան մը մտածեր ես, թէ որ երթաս
դրացիիդ պատմես՝ ինքը քեզմէ առաջ
կը վազէ և քու շահուդ արգելք կ'ըլլայ :

Մնկեղծութիւնը պէտք է որ խոհե-
մութեամբ չափաւորուի, և ասիկայ կը
սորվեցընէ մեզի չըսել այն բանը որ ա-
նօգուտ և կամ մեր գործոցը մնասակար
կրնայ ըլլալ . դարձեալ զգուշանալու է
չըսել այն ճշմարտութիւնը՝ երբ մնա-
սակար կրնայ ըլլալ մեր եղբարցը, ա-
ռանց ընդհանուր ընկերութեան օգուտ
մը բերելու : Մայց թէ որ լուես անանկ
բան մը ուսկից ուրիշին մնաս մը կրնայ
ծաղիլ, գէշ կ'ընես : Աթէ գիտնայիր
որ դրացիիդ շունը կատողեր է, կամ թէ
ծառան գող է, կամ վաճառական մը զին-
քը կը խաբէ, չէիր իմացընէր իրեն . և ս
առաւել երբ գիտնայիր որ գէշ ընկեր-
ներ իր որդիքը կը մոլորեցընեն : Շատ

աւելի պէտք է որ անկեղծ ըլլաս երբ
իբրև վկայ դատաստանի առջև կը կո-
չուիս : Այն անոր որ անմեղը կ'ամբաս-
տանէ . բայց ոչ ինչ նուազ անզգամ է
ով որ կ'ուզէ եղեռնաւոր մը խալըսել .
ինչ յանցանք որ նոյն անձը վերջէն ընէ՝
ամենուն ալ ինքը պարտական է :

Բայց ասով պէտք չէ որ մէկու մը
վրայ տեսած կամ գիտցած գէշութիւնդ
ուրիշներուն պատմես . չարախօսն անի-
րաւութեամբ կը մեղանչէ , երբ ուրիշի
չըրած բաները կը պատմէ , կուուոյ ու
անսիրելութեանց պատճառ կ'ըլլայ .
ուստի ընկերութեան մէջ իբրև ժան-
տախտէ այնպիսիէն պէտք է զգուշա-
նալ : Արբեմն թեթեւութեամբ ըսուած
խօսք մը գիտե՞ս թէ ինչ հետեանքներ
կ'ունենայ . լեռնէն վար գլորտըկուած
քարին կը նմանի որ չես գիտեր թէ ո՞ւր
կրնայ հանգչիլ : Ա՛վ որ շուտ կը խօսի՝
չատ բան կ'ունենայ ցաւելու :

Արժեցուր զքեզ նաև լռելու . շատ
բան գիտէ ով որ լռել գիտէ : Առակն
ալ կ'ըսէ թէ՛ Ա՛վ որ կ'ուզէ խաղաղու-
թեամբ ապրիլ , կը տեսնայ , կը լսէ ու
կը լռէ : Արչափ կասկածելի են միշտ
նոր բաներ պատմողները որ ուրիշնե-
րուն ըրածները կը գիտեն , նամակներ

կը բանան, թղթեր կը կարդան և մէկուն մէկալին կը պատմեն : Մտուած պահէ զմեզ այսպիսի մարդկանցմէ : Եւս առաւել երբ ուրիշ մը իրեն գաղտնիքը քեզի վստահացած է՝ չըլլայ որ բնաւ մէկու մը ըսես :

Բայց մեր նմանեացը պատուոյն ու առաքինու թեանն օգտակար եղող յայտնի դիպուածներու մէջ, առանց մարդկային նկատմանց համարձակու թեամբ պէտք է խօսինք : Իրաւունք ունեցողը վերջապէս իր իրաւունքը ձեռք կը ձգէ : Մտաբեալք և մարգարէք ճշմարտութիւնը կը քարոզէին, թէպէտ և գիտէին որ զիրենք պիտի սպաննեն :

ԼԹ

Դաշինք . — Ճշմարտախօսու թիւնը հիմն է խոստմանց և դաշանց : Աստուծո կ'ըսուի ան՝ երբ կը յայտնեմ որ կ'ուզեմ աս բանս ընել կամ ան բանը տալ . իսկ ինչ կերպով որ այս խոստմունքը կը բացատրուի, կը կոչուի դաշինք, եթէ ըլլայ բանիւ կամ գրով . իսկ ինչ թէու թիւններով որ դաշինքը կը դրուի՝ կ'ըսուի պայման :

Այս կը խոստանամ որ ժամացոյց մը
քեզի տամ. ասիկայ կ'ըսուի պարզե :
Ար խոստանամ դարձեալ որ արցակ մը
գրիչ կու տամ քեզի, թէ որ դուն զմե-
լին մը տաս ինծի. ասիկայ ալ է քոխ-
հակո-Քի-ն : Ար խոստանամ դարձեալ որ
դաշտս քեզի մշակելու թողում, տունս
քեզի բնակու թեան տամ, ձիս կամ
նաւակս ալ ուղածիդ պէս ճամբորդու-
թիւն ընելու քեզի յանձնեմ, այսու
պայմանաւ որ դաշտին պտղոյն կէսը,
կամ այսչափ բան մը ամէն օր կամ տա-
րուան մէջ տաս ինծի. ասիկայ ալ Վարձի
կ'ըսուի : Այս քեզի քսան կանգուն տե-
սակ մը չուխայ կը խոստանամ տալ, թէ
որ 15 Ֆրանգ վճարես ամէն մէկ կան-
գունին. ասիկայ ալ է Վաճառել :

Գիրք մը կու տամ որպէս զի կար-
դալէդ վերջը նորէն ինծի դարձնես.
աս ալ է քոխ : Ետ անգամ փոխ ստակ
կու տանք մէկմէկու. դուն որ կ'առնես՝
վրայ կը դնես ու կը շահիս, և ես որ
փոխ տուած եմ քեզի ան ստակը՝ չեմ
կրնար զայն ուրիշ բանի գործածել. ու-
րեմն իրաւացի է որ դուն վարձք մը տաս
ինծի որ կը կոչուի շահ : Թէ որ ես ու-
րուն որ փոխ կու տամ վրան վստահու-
թիւն չունիմ, ապահովու թեան համար

քան մը գրաս կ'առնում, կամ թէ որ ստացուածք ունի՝ տերութեան արձանագրութեանց մէջ իմ տուած փոխս իրեն ստացուածքներէն մէկուն դիմացը կը նշանեմ որն որ կ'ըսուի գրասահան . կամ երաշխասոր մը կը գտնամ, որ եթէ պարտատէրը խաբէ զիս՝ անիկայ վճարէ :

Արբեմն այլ և այլ տեսակ ծառայութեանց համար ալ դաշինքներ կը դրուին . Վուն ծառայ եղիր ինձի՝ ես քեզի Ռոշակ կու տամ . վարժապետիս փոխարէն մը կու տամ որպէս զի ինձի ամենամեծ բարիք մը ընէ, այսինքն ուսմունք սորվեցրնէ : Վաշտօնեայն ալ թռչակ կ'առնու որպէս զի առանձին ինամօք հասարակաց բարւոյն համար աշխատի . ինչպէս զինուորն ալ հասարակաց խաղաղութիւնն ապահովցրնելու համար :

Խ

Հասարակութեան 'ի խոստումնս . —
Խոստումնք մը տալէն, դաշինք մը հաստատելէն ետքը պէտք չէ անոնցմէ պակսիլ : Այս բանիս հիմակուրնէ զձեզ վարժեցուցէք, ո՛վ պատանեակք, հա-

ւատարիմ ըլլալով ամենէն ճշիւն բանե-
րու մէջ ալ: Արեւի աշկերտ մը իր դաս-
ընկերին խոստացաւ որ եթէ իրեն բու-
կեղ¹ մը տայ, այսօր ինքը խնձոր մը
կու տայ իրեն. բայց այսօր չուզեց տալ.
ուստի կանչեցի զինքը ու՝ Այէ, ըսի,
թեթեւ բան մըն է ըրածդ, բայց մտա-
ծէ մէյ մը թէ ինչ գէշ հետեանքներ
ունի:

Ա. Ստախօս ես ու խօսքիդ վրայ չկե-
ցող, ուստի ուրիշ անգամ ընկերդ քեզի
ասանկ շնորհք մը ամենեւին չըներ:
Բ. Ընկերներուդ մէջ խաբողի անուն
պիտի ունենաս: Գ. Արբոր մեծնաս՝
վրադ գէշ համարմունք ունենալով, ամ-
ենէն կարեւոր բաներու մէջ ալ պիտի
չվստահին վրադ: Դ. Ամէն բան քայլ
առ քայլ առաջ կ'երթայ. այսօր խիղճ
չես ըներ խնձորի մը համար զուրի-
շը խաբել, վաղը կրնաս մեծ գումարի
մը մէջ ուրիշները նենգել և այսպէս
անզգամ մը կը դառնաս: Ե. Ամէն
մեղք իր պատիժն ալ հետը ունի. ե-
թէ այսօր զքեզ իբրև ստախօս մտքեր-
նին դնեն, վաղը եթէ իրաւ ալ խօսիս
նորէն չեն հաւատար. չեմ պատմած

քեզի այն պզտիկ հովուին պատմու-
թիւնը որ Վայլն եկաւ, գայլը եկաւ
պոռալով կը զուարճանար, որպէս զի
ուրիշները իրեն օգնութեան վազեն ու-
ինքն անոնց վրայ ծիծաղի: Անգամ
մըն ալ երբոր իրաւցընէ գայլն եկեր էր,
սկսաւ ուրիշ անգամներուն պէս պոռա-
լով ուրիշները օգնութեան կանչել.
բայց անոնք կարծելով թէ նորէն վրա-
նին խնտալու համար է ըրածը, տեղեր-
նէն չարժեցան և գայլը բոլոր հօտը
աւրեց ու փճացուց:

Աստ կամս դրած դաշինքներդ ալ
պարտրկան ես պահելու. խոստացեր ես
պատկեր մը, գիրք մը, կամ պտուղ մը
ընծայ տալ բարեկամիդ, թէ որ չկա-
տարես, սուտ ըսած կ'ըլլաս: Պաշտօն
մը քեզի տրուեցաւ. կրնայիր հրաժա-
րիլ, բայց յանձն առնելէդ ետքը պար-
տրկան ես ամէն բան տեղն 'ի տեղը կա-
տարելու: Վայց ինչ ըսեմ անոնց որ
դաշինքը չպահելու համար, այլ և այլ
անոտի պատճառներ առաջ կը բերեն.
Գրոսածով չեղաւ. — Տէրութեան կնիով
Լուղը չգործածուեցաւ. — Ահաներ չհայե՞ն:
Անոնք պատճառ չեն. խոստացար, բա-
ւական է. առաքինի ու քաղաքակիրթ
մարդու մը համար թուղթը իր խօսքն է:

Միայն ազատ ես դաշինքդ պահելէն
երբ բռնու թեամբ կամ խաբէու թեամբ
եղած ըլլայ : Թորոսին հինգ հարիւր
դահեկան խոստացար ոսկիէ ժամացոյցի
մը համար . բայց կը տեսնես որ ոսկիի
տեղ զառեկէ է եղեր , ան ատեն պար-
տրկան չես դաշինքդ պահելու : Աիրա-
կոսը բերնէս խօսք առաւ որ ես հօրմէս
ստակ գողնամ . թէպէտ և խօսք տուած
ըլլամ , պարտաւորեալ չեմ աս մեղքը
գործելու : Մարկոսը սուրը վիզս դրած
խօսք առաւ ինծմէ որ այսչափ ստակ
տամ իրեն . հոս ալ դարձեալ պարտա-
կան չեմ տալու , վասն զի խոստմունքը
իմ ազատ կամքովս չեղաւ :

Բայց ես հազարումէ կ'փորձերով տե-
սեր եմ որ կռուոյ ու հակառակու թեանց
գլխաւոր պատճառը դաշինք չպահելն է .
ուստի եթէ կ'ուզէք հանգիստ ու խա-
ղաղ կեանք մը անցընել , խոստմունքը
տալէն առաջ լաւ մտածեցէք , որոշ ու
յայտնի պայմաններ դրէք՝ մտքերնիդ
բերելով այն առակը որ կ'ըսէ .

Պայմանք պարզք և յայտնիք ,
Բարեկամք սիրելիք :

ԽԱ.

Որպէս զի մարդիկ հաստատուն կե-
նան իրենց խոստմանցը մէջ՝ երդումը
դրուած է . որ է ըսել՝ ՉԱստուած Վհայ
կը հանչէ՛մ ըսածիս համ խոստացածիս ճշմար-
տութեանը . Եւ որ չպահէ՛մ ու պահի՛մ, Ինչը
զիս պատուհասէ : Արեմն մէյ մը կրնայ
երդնուլ մարդ ցուցնելու համար որ
պարզ ճշմարտութիւն է ըսածը . եր-
կրորդ բան մը գործելու համար :

Մի վարժեցրնէք զձեզ, ո՛վ պատա-
նեակք, դիւրաւ երդմունք ընելու :

Երդմունք ընողը ինքնիրեն կը խոս-
տովանի որ իրեն պարզ խօսքը ամենևին
զօրութիւն մը չունի . վասն զի առաքի-
նի ու պատիւ ունեցող մարդու մը հա-
մար բաւական է այո և ոչ ըսելը : Իսկ
երբոր երբեմն ծանր նիւթերու մէջ կը
ստիպուիս երդմունք ընելու, նախ մէյ
մը ինչ որ պիտի խոստանաս լաւ մտա-
ծէ . վերջը աչքերդ վեր դէպ 'ի երկինք
բարձրացուր ու մտածէ թէ ո՛վ է Աս-
տուած : Անչեցիր զինքը 'ի վրէժխըն-
դրութիւն և լսեց . թէ որ պակսիս՝ ինքը
զքեզ չմոռնար :

ԽԲ

Քաղաքական ընկերոջքիւն :

Մարդիկ ընկերութեամբ մէկմէկու
հետ կապուած են ապահովութեան և
հասարակաց յաջողութեան համար
(յօդուած ԺԵ) : Ըստ հասնելու համար
բնական ու բարոյական զօրութիւններ
կը բանեցընեն, բայց որպէս զի աս զօ-
րութիւնները մէկ վախճանի մը ծա-
ռայեն՝ առաջնորդութիւն մը հարկա-
ւոր է. աս առաջնորդութիւնը կը կո-
չուի Տէրութիւն կամ Աւարչութիւն :

Մարդկանց մէջ գէշն ալ կայ՝ աղէկն
ալ կայ. տկարն ու զօրաւորը կայ, տը-
գէտն ու խելացին կայ, բարեսիրտն ու
նենգաւորը կայ. պէտք է ուրեմն իմաս-
տունները վարձատրել ու չարերը զսպել
ու խոնարհեցընել, խեղճերը զօրաւոր-
ներուն դէմ պաշտպանել, գիտութիւն-
ներն ու ուսմունքը տարածել, նենգու-
թիւններն ու խաբէութիւնները խա-
փանել և յանցաւորները պատժել : Ըս-
տ աս ամէնը՝ Քաղաքական ընկերու-
թեամբ կ'ըլլայ, որ համախուժմբ մարդ-

կանց ժողովք մըն է փոփոխակի մէկմէկու
օգնելու, և չարիքները խափանելու
համար: Ա՛յ որ աս Վաղաքական
ընկերութեան կը վերաբերի, քաղաքացի
կը կոչուի. յորում մարդիկ միշտ
աւելի զօրաւոր և երջանիկ կ'ըլլան, երբ
տէրութիւնը կ'առաջնորդէ իրենց լաւագոյն
վիճակ մը ունենալու համար:

ԽԳ.

Տէրութիւն կամ Վարչութիւն. — Տէրութիւն
կամ Վարչութիւն կ'ըսուի արժանաւոր և մեծանուն անձանց միութիւնը՝
որոնց իրաւունքն է օրէնք տալ և անոնց պահպանութեանը հսկել:

() օրէնքն է իրաւացի իշխանութենէ մը հրատարակուած հրաման մը որ պարտք կը դնէ քաղաքացւոց աս բանս
ընելու և ուրիշ բանէ մը զգուշանալու՝ որով
ամէնքը պահպանուին ու կատարելագործուին:
Ա՛յ օրինաց գիրքը Մասնական օրինաց
կը կոչուի և Տէրութեան ունեցած իշխանութիւնը
օրինաւոր:

() օրէնք չպահողին պատիժ սպառնացուած է,
որ չարագործաց կը տրուի զիրենք նորանոր
չարագործութիւններէ

արգիլելու համար, և զուրիշները զգուշացնելու որ իրենց չար օրինակին չհետևին: Արպէս զի Ա արչութիւնը կարենայ քաղաքացւոց վրայ հսկել՝ պէտք է որ զօրութիւն մը ունենայ, այսինքն զօրք, բանտեր ու բերդեր, և աս ալ կ'ըսուի սպիտակահասն զօրութիւն:

Արք օրէնք մը ոտքի տակ առնուի պէտք է ետևէ ըլլալ ու յանցաւորը գտնալ ու քննել թէ արդեօք չարութեամբ չէ նէ տգիտութեամբ է ըրածը, և ինչ պատժոյ արժանի ըլլալը որոշել: Աթէ երկու հոգւոյ մէջ կռիւ բացուի, որոնք երկուքն ալ մտքերնին դրած ըլլան որ իրաւունքն իրենցն է, երրորդ մը պէտք է որ անոր դիմեն և առանց կրից և խոհեմութեամբ դատէ: Տէրութիւնն աս կարողութիւնս ալ ունի որ կ'ըսուի դատաստանահասն և կը բանեցնէ դատաստանարաններու մէջ, դատաստարաց ձեռքով որոնք վճիռ կու տան: Յանցանաց վերաբերեալ դատաւորները եղեռնահասն կը կոչուին. իսկ այլ և այլ գործոց վերաբերեալները քաղաքահասն:

Աս ամէն բաներուս համար Ա արչութիւնը պէտք է որ ծախքեր ընէ. և որովհետև ըրած ծախքերը ամենուն օգտին համար են, պէտք է ուրեմն որ

ամենքը փոխարէն վճարեն : Իւրաքանչիւր անձի իրեն կարողութեանը համեմատ Վարչութեան տուած ստակը կ'ըսուի հարկ և Մասն :

ԽԳ

Իրատուէն ազգաց . — Վարչութիւնը ոչ միայն ներքին խաղաղութեան հող կը տանի՝ այլ նաև երկիրը թշնամեացմէ կը պաշտպանէ , և ուրիշ աշխարհաց ու տէրութեանց հետ կը խորհի կը խօսի : Վճեն ժողովուրդ ուրիշ ժողովրդոց համեմատ պէտք է վարուի , ինչպէս որ իւրաքանչիւր մերձաւոր իր մերձաւորին հետ կը վարուի . այսինքն , ինչ որ չուզեր որ ուրիշները իրեն ընեն՝ ինքն ալ ուրիշներուն չընէ , այլ միայն կամքերնին կատարէ . արդար ըլլայ , բարերար և դաշինքները պահէ : Վզգաց իրարու մէջ ունեցած պարտքերէն ու իրաւունքներէն կը բաղկանան Իրատուէն ազգաց :

Վճեն ազգ ուրիշ ազգերու դեսպան կը խաւրէ , որոշմունքներ կ'ընեն մէջերնին ու խաղաղութիւն կը հաստատեն , կամ պատերազմ կը բանան : Վճենաչար պէտք մըն է պատերազմը և միայն

ան ատեն իրաւացի է երբ մեծ վտանգի մը գէմ կենալու կամ անոր առջևն առնելու համար կ'ըլլայ : Այլ որ պարզ իր ախորժը լեցնելու համար կ'ընէ, կամ փառասիրու թեամբ իրեն իշխանու թիւնը տարածելու համար կամ ուրիշին իրաւունքները խափանելու կամ յափըշտակելու համար, եղեռնագործ մըն է այնպիսին : Տիւրաւոր մեռելոց արիւնը, այնչափ այրեաց և որբոց արտասուքը, այնչափ հարց յուսահատու թիւնը իրենց ծերու թեան նեցուկը կորսնցուցած ըլլալովսին, այնչափ խեղճ մարդկանց ոմանց իրենց դաշտերը ապականելով, ոմանց տուններնին այրելով կրած զնասները բոլորն ալ անիծից ձայներ են աշխարհակալին գլխուն :

ԽԵ

Զանազան Վարչութիւնք . — Արբ օրէնք տալու իշխանու թիւնը մէկու մը յանձնուած ըլլայ՝ այն Արչու թիւնը Միապետութիւն կը կոչուի, ու գլխաւորը կայսր, դուքս, իշխան, Ռազմաւոր : Արբ այս իշխանու թիւնը բոլոր քաղաքացւոց ձեռքն ըլլայ և մասնաւոր զիրենք ներ-

կայացնող ընտրուած անձանց յանձնուած՝ կ'ըսուի Ռաճկապետութիւն, Հասարակապետութիւն ։

Իսկ երբ քաղաքացւոցմէ ոմանց կամ առանձնաշնորհ մարդկանց դատերու ձեռք ըլլայ՝ ինչպէս զոր օրինակ, ազնուականաց, վաճառականաց կամ կալուածատեարց, կ'ըսուի Ազնուապետութիւն ։

Կան նաև թագաւորներ ու իշխաններ որ օրէնք տալէն առաջ ատենի մը կամ ժողովուրդը ներկայացնող ժողովքի մը կարծիքը կը նային, որոնք սահմանադրական Ռաճկապետիք կը կոչուին ։

Խ Զ

Աս Ա արչու թիւններէն ամէնքն ալ կրնան աղէկ կամ գէշ ըլլալ, երբ ճշմարտութեամբ և արդարութեամբ պահեն, կամ ընդհակառակն չպահեն Ստուծոյ օրէնքներն, ու երբ իրենց վախճանին ծառայեն կամ չծառայեն ։ Ա արչութեան մը վախճանն է նայիլ որ մարդկանց ընկերութիւնը միշտ լաւագոյն վիճակի մը մէջ հաստատուի և օրրատօրէ կատարելագործուի ։ Արտական է ու-

րեմն հասարակաց բարոյականին ու բա-
րեկեցութեանը վրայ հոգ խնամք ունե-
նալ, մտքերնին բանալով ու ճշմարիտ
զգացմունքներ տնկելով սրտերնուն մէջ,
իրաւունքներն ու օրէնքները սորվեցը-
նել. հրահանգել քաղաքացիները որ
հասարակաց բարւոյն փափաքին ու ա-
նոր օգտակար եղածները գործեն. ճար-
տար արուեստները զարգացնել, գրեթէ
բնաւ չխափանել այն ամէն բաներն ու-
րոնց վախճանն անմեղ է, իրենց աշ-
խարհքը խաղաղութեան մէջ պահել
'ի ներքուստ և մեծարելի ընել արտա-
քուստ :

Թէ որ քու ազգիդ մէջ կը տեսնաս
գործունեայ քաղաքացիներ, բարեհամ-
բաւ ու սրտանց մարդիկներ որ յարգե-
լի են ամենէն, աղքատը բուռն հարուս-
տին դէմ ու հաւատարիմ մը խաբե-
բային դէմ պաշտպանութիւն գտած,
արդիւնաւոր անձինք պաշտօնի հասած,
վաճառականութիւնն անարգել, հա-
սարակաց առողջութիւնը խնամքի տակ
և դաստիարակութիւնը զարգացած,
չնորհակալ եղիր ու օրհնէ զ՚ստուած.
անիկայ լաւ ազգ է : Ա՛հ, ինչչափ պէտք
է որ Ա՛րչութիւնը սիրենք որ մեր հան-
գրատութիւնը կ'ապահովցընէ, արդա-

րու թեամբ կը դատէ, չարերը կը նուա-
ճէ, կարօտելոց կ'օգնէ և զամէնքը ի-
բրև եղբայր կը միացընէ:

Բայց երբ ժողովրդեան մը մեղքերը
Մատուծոյ բարեգթութե չափը կ'անցը-
նեն, ան ատեն Մատուած իրենց ասանկ
կ'ըսէ, Ձեզի գէշ ազգ մը պէտք է խաւ-
րեմ, տկար ու բռնաւոր առաջնորդ մը:
Վաղաքացի մը երբ այսպիսի վիճակի
մը մէջ դտնուի, պէտք է խոհեմու-
թեամբ ու սիրով զուրիշները յառա-
քինութիւն յորդորէ. թէ որ օգուտ
մը չտեսնայ, պէտք չէ բռնութիւն բա-
նեցնէ կամ խռովութիւն հանէ. այլ
կամ համբերութեամբ քաշէ, կամ
քաղաքը փոխէ:

Խ Է

Պատմութի յատուցութեանց. — Չորս դարբին
մէկտեղ դարբնոց մը շինեցին մէջերնին
աշխատութեան ու վաստակին վրայ
միաբանելով: Իրեքը մտադիր ու հաւա-
տարմութեամբ իրենց աշխատութեա-
նը կը զբաղին. բայց չորրորդը իրենցմէ
բոլորովին տարբեր ոճ կը բռնէ: Ե՛ւր
ու գինեմուլ մէկը,

Ա. Իրուած դաշինքները չպահեր:

Բ. Աստուրկածը հասարակաց ջր-
ղներ :

Գ. Պարապ կը կենայ և վերջը կ'ու-
զէ հասարակաց շահուն մասնակից ըլ-
լալ :

Դ. Մէկուն ուրագը կը գողնայ , ու-
րիշ մը կը նախատէ , ուրիշ մըն ալ կը
ծեծէ :

Ե. Փռան բռնկիլը տեսնալով և ի-
մանալով որ գնողներէն մէկը խարդա-
խութիւն կ'ընէր՝ ամենեին ձայն չհա-
նէր :

Զ. Եկէպէտ և կը տեսնայ որ ընկեր-
ները պէտք եղածին պէս խելքով չեն
ըներ իրենց արհեստը ու շատ երկաթ
և կրակ կը փճացնեն , գիտցած դիւրին
ու լաւ կերպը չսորվեցներ իրենց :

Ըայց այս ըրածը աղէկ է :

Մանաւանդ թէ գէշին ալ գէշը :
Ներկայ տհաճութիւն ու մնասէն դուրս՝
ընկերներուն աչքը վախցած կը կասկա-
ծին որ նորէն զիրենք արհամարհելով
նոր մնաս մըն ալ չհասցընէ . իրեն չար
օրինակովը ուրիշներն ալ աշխատութե-
նէ կը թուլցնէ , վասն զի կը տեսնան որ
պարապորդին մէկը իրենց քրտամբը կը
կերակրի . պատճառ կ'ըլլայ աշխատու-
թիւնը դադրեցնելու , վասն զի չորս հո-

գի պէտք է առաջ տանելու համար • ընկերութեան շահը կը պակսեցնէ, և սիրոյ ու միութեան տեղ կուուոյ ու անմիաբանութեանց պատճառ կ'ըլլայ:

Վարբնոցի մը և չորս դարբնաց տեղ քաղաքական ընկերութիւնն ու բոլոր քաղաքացիքը ենթադրեցէք, որով կը հասկընաք թէ որոնք են չարերը • բայց ես որովհետեւ կ'ուզեմ լաւ քաղաքացի մը ըլլալ,

Ա. Սէտք է օրինաց հնազանդիմ • ամենուն բարւոյն համար ջէն որ դրուած են անոնք • և ամենուն բարիքը նաև իմն ջէն արդեօք:

Բ. Սէտք է ջանամ որ ինչ որ ձեռքէս կու գայ ընեմ ընկերութիւնը պահելու և կատարելագործելու համար:

Գ. Հարկերը վճարեմ որոնք հասարակաց ապահովութեան և օգտին համար ամենակարևոր են:

Դ. Նաև անձամբ ալ ծառայու թիւններ ընեմ դժուար և Վարչութեան օգտակար պաշտօններ վրաս առնելով, իմ ձեռքիս տակ եղած ժողովրդեան գործքերը լաւ հոգամ, ու նաև հասարակաց խաղաղութեան համար զինուոր պրուիմ: Նրաւցընէ ծանր բան է զինուորագրու թիւնը • բայց ինչ հնարք կրնայ

ըլլալ դադրեցնելու համար: Սէ որ մարդիկ ամէնքն ալ բարի ըլլային, արդարու թեամբ ճանչնային ու գործէին, ու մէկմէկու բարիքը փափաքէին, զինուորի կարօտութիւն չէր ըլլար: Աւրեմն ձեռքերնէս եկածն ընենք որ կարենանք աս վիճակիս հասնիլ. բայց քաղաքացի մը երբ առանց իրաւացի պատճառի զինուորութի կը փախչի՝ իրեն մէկ պարտքը ոտքի տակ առած կ'ըլլայ, և ուրիշին մնասու պատճառ կ'ըլլայ՝ որ իրեն տեղ կը ստիպուի զինուոր ըլլալ:

Ե. Վնչպէս բարի քաղաքացի մը պէտք է որ նաև եղած չարագործութիւնները յայտնեմ որ հասարակաց կրնան մնասակար ըլլալ: Վիտեմ որ խանութպան մը խարդախած չափ մը կը գործածէ, որ դատաւոր մը իրեն բարեկամին կամ ընծայ մը ընողին իրաւունք կու տայ, որ վարժապետ մը չարահասար կերպերով իր պաշտօնին հասաւ և տղաքը կը թելու ու դաստիարակելու տեղ կը մոլորեցընէ. թէ որ լռեմ՝ բարիները կը կրեն ու չարերը կը յաղթանակեն: Բայց ո՞վ որ ընդհակառակն ուրիշին միտքը՝ ի չարն մեկնէ և անոր ամէն ըրածը դիտէ ոչ բարեւորութեամբ այլ որպէս զի աշկերտ մը իրեն մեծաւորին ու հպատակ

մը վարչութեան կասկածելի ընէ, ու
րով հակառակութեանց և պաղու-
թեանց պատճառ կ'ըլլայ, բամբասող է
այնպիսին ու քսու, վատահամբաւ և
արժանի նախատանաց :

ԽԸ

Ասոնցմէ դուրս ուրիշ պակասու-
թիւն մ'ալ կայ ուսկից առաքինի ու
քաղաքակիրթ մարդ մը պէտք է զգու-
շանայ . Ա'հ, ո՛ր էր Ռէ ուրիշ ազգի մը
ասի ըլլայինք . — Ա'հ, է՛նչ խիստ ու հարբա-
ասհարող օրէնքներ էն . — Ա.ս ո՛րչափ ասորք
է . — Ա'հ, է՛նչ աստուծոյ հասեր էնք . — Ա'հ,
աս է՛նչ աստուծոյ դաստաւորներու յետք էնէր
էնք :

Հանդարտ, հանդարտ, բարեկամ,
իսկ թէ որ ան օրէնքները չըլլային,
ի՛նչպէս կարելի բան էր ճամբաները,
դպրոցներն ու հիւանդանոցները խնա-
մել . իսկ ան դատաւորները քեզի իրա-
ւունք չտուին՝ վասն զի քու հակառա-
կորդիդ էր իրաւունքը . ամէն ժամա-
նակ քիչ մը աւելի, քիչ մը պակաս միշտ
այսպէս եղած են, և ամէն վարչու-
թիւն իրեն աղէկութիւնն ալ, գէշու-

Թիւնն ալ ունի, բայց 'ի Մատուծոյ Թա-
գաւորութենէն որ ամէն օր կ'աղաչես
որ գայ հասնի: Տրտնջէ, անիծէ, պո-
ռա կանչէ, անկից ինչ օգուտ. այնպէ-
սով շաւնար վիճակդ, մանաւանդ Թէ
աւելի կը գէշնայ, ինչպէս Թէ վերքի մը
վրայ ուժով հարուած մը ինջեցնէիր.
որով զքեզ վտանգի մէջ կը ձգես: Հաւ-
տա ինծի, կառավարողը քեզմէ աւելի
լաւ գիտէ, և ոչ երբեք վարչութիւն
մը կրնայ ըլլալ որ միտքը դրած ըլլայ
գիտմամբ ուրիշներուն չարիք հասցընե-
լու: Վաւ տղայու Թեանդ ատեն մայրդ
գէշ կ'երևար քեզի, վասն զի չէր Թո-
ղուր որ կրակին մօտենաս, ծովուն կամ
լճին եզերքը ջրով խաղաս և ոչ բոլոր
օրը ուզածիդ պէս անցընես, և հիմա զին-
քը կ'օրհնես: Արչափ օրէ օր աւելի ա-
ռաքինի ու քաղաքակիրթ ըլլաս ու դա-
տաւորաց, զինուորաց և ուրիշ պաշտօ-
նատեարց քիչ կարօտութիւն ունենաս՝
այնչափ վարչութիւնը քեզի լաւ կ'ե-
րևնայ: Մտքերնիս դնենք որ ծովու մէջ
նաւով ճամբորդութիւն կ'ընենք. զե-
կավարն ըրածը գիտէ, և Թէ որ ամէն
շուտ հասնիլ ուզողներուն խորհրդոցն
ականջ կախէ, նաւը մէյ մը աջ, մէյ մը
ձախ կը խոտորի, անդադար ժայռերու

կը զարնուի և վերջապէս կը խորի . թու-
ղունք ուրեմն ղեկավարին : Նայց նա-
ւուն երթալուն կերպէն կը կախուի մեր
կենաց խաղաղու թիւնն ու որպիսու թիւ-
նը . ուստի բնական է որ նայինք թէ ինչ-
պէս կ'երթայ , նաւապետին հրամա-
նին հնազանդինք և ինչ պէտք որ ու-
նենայ բոլոր ջանքովսիս իրեն օգնենք :

Վուզեմ նաև աս ալ քեզի աւելցը-
նել որ նաւորդները շիտակ ու դէպ ու-
ղիղ երթալու համար երկինք կը նային :

ԽԹ

Ընտանեկան ընկերութիւն :

Հայր և մայր իրենց որդւոց հետ մէկ-
տեղ ընտանիք կը ձևացընեն : Քեսային
և հարսին միանալուն կապը կ'ըսուի Ա-
մուսնութիւն : Նսիկայ քաղաքական դաշ-
նակցութիւն մըն է՝ որ եկեղեցական
սուրբ խորհրդով մը կը վաւերացուի , ու
րով այր և կին կը պարտաւորին մէկմէ-
կու հաւատարիմ ըլլալու , փոխադարձ
մէկմէկու երջանկութեանը ջանալու ,
որդիքներ ունենալու ու զանոնք կրթե-

լու, դաստիարակելու՝ ընկերութեան
բարւոյն և Վստուծոյ փառացը համար:

Դուն որ կ'ուզես կարգուիլ առանց
նախ քու կնկանդ ու ապագայ որդւոցդ
ապրուստն ապահովցընելու, ինչ կ'ը-
նես. վշտացելոց ու կարօտելոց թիւը կը
շատցընես: Վ՛լ լաւ է ինքնիրենդ Ա՛հ,
ի՛նչ Ռշոտաւ ե՛մ ըսելով հառաչես՝ քան
թէ կնոջդ ու որդւոցդ վրայ նայելով
Ի՛նչ Ռշոտաւ ե՛նք գոչես:

Վ՛յսպիսի մեծ քայլ մը ու անլուծա-
նելի կապ մը պէտք չէ առանց ծնողաց
խորհրդին գործել, առանց լաւ մը քըն-
նած ու դիտած ըլլալու թէ արդեօք ու-
զած կինդ զքեզ երջանիկ ընելու համար
պահանջուած կատարելութիւններն ու-
նի՞ թէ չէ: Ամանք հարուստ օժտին
միայն աչքերնին կը տնկեն. ուրիշներն
ալ յախուռն իրենց սիրտը յափշտա-
կողին միայն կը փափաքին, բայց վերջը
վերջը կը զղջան: Վ՛մենակարւոր օժիտը
առաքինութիւնն է, անոր ետեւէն կու
գայ բարուց քաղցրութիւնը. ասոնցմէ
դուրս ուրիշ ինչ որ ըլլայ բոլորն ալ դի-
պուածական են: Վարդուն մէկը փի-
լիսոփայի մը պատմելով իր հարսին օ-
ժիտները սկսաւ կարգաւ շարել՝ գեղեց-
կութիւն, հարստութիւն, հանձար,

աղնուականութիւն, ազգականութիւն
նշանաւոր մարդկանց հետ ու կրթու-
թիւն. իսկ փիլիսոփան առ ամէն մէկ
կատարելութիւններս լսելուն՝ զրոյ մը
կը դնէր առջև ի թղթոյն վրայ. բայց եր-
բոր ամենէն վերջը աւելցուց բարուց
քաղցրութիւնը, ան ատեն փիլիսոփան
զրոններուն առջև մէկ թիւը դրաւ, ու
րով անգին աժէք ունեցան ան զրոները:

Մհ, երանի ան տան ուր այր և կին
մէկ սիրտ մէկ հոգի կ'ապրին. բայց
դժոխք կը դառնայ այն տեղը ուր որ
միութիւն չկայ: Մ. յր և կին հաւասար
են (յօդ. 16). ուրեմն կինը պէտք
չէ իբրև աղախին մը սեպուի ամուս-
նոյն առջև. բայց որովհետև աւելի տը-
կար է ու անփորձ, ինչպէս պզտի եղբայր
մը մեծ եղբօրը՝ այնպէս հարսն ալ ա-
մուսնոյն պէտք է հպատակի: Մէկզմէկ
պէտք է սիրեն, մէկմէկու վրայ պէտք
է կատարեալ վստահութիւն ունենան,
զոհեր ընեն, մէկմէկու կարօտութիւնը
լեցրնեն, հիւանդութեան մէջ զիրար
խնամեն, դժբաղդութեանց մէջ մէկ-
զմէկ մխիթարեն, և այսպէս պէտք է ջա-
նան որ միշտ մէկմէկու ուրախութեան
պատճառ ըլլան ու իրարու վշտերը թե-
թեղրնեն: Սեռան պէտք է սիրէ, յար-

դէ ու խնամէ զհարսը, ու որդւոցն և լծակցին ապրուստը ճարէ: Հարսն ալ իր պարտուցը հաւատարիմ պէտք է ըլլայ, անկեղծ, համբերող ու պարկեշտ. յիշէ որ մարդիկ կը շինեն ու կանայք կը պահեն, և առանձին փութով ու մտադրութեամբ երախտագէտ պէտք է ըլլայ փեսային հոգատարութեանցը:

(Ծնողաց իրենց որդւոց վրայ ունեցած հոգը յօրինաց հաստատեալ իշխանութիւն մը կու տայ իրենց: ()րէնքը կը պահանջէ որ որդիք ինչուան իրենց քսանըջորս տարուան հասակը հրատարակամ պահպանութեան տակ սեպուին, այսինքն՝ չկարենան առանց ծնողաց կամ իրենց խնամակալուաց հաւանութեանը դաշնադրութիւն մը յարմարցընել. իսկ երբ ծնողքը կը մեռնին, որդին թառանգութեամբ իրենց կը յաջորդէ, այսինքն իրենց ունեցածին տէր կ'ըլլայ, ըստ պայմանաց կտակին և ըստ որոշման օրինաց:

Ծ

Դաստիարակութիւն :

Բայց ոչինչ բան մը տուած կ'ըլլայ
ով որ միայն կեանք կու տայ իրեն որդու
ցը : Հայրն՝ ինչպէս նաև մայրը՝ Աստու-
ծոյ պատկերքն են . իսկ Աստուած միայն
աշխարհքս ստեղծելովը գոհ չեղաւ ,
այլ նաև կը պահպանէ զայն ու կը կա-
ռավարէ , այսպէս ալ ծնողք պարտա-
կան են իրենց որդիքը կրթելու , որպէս
զի կայստան , ընկերասէր և ուսեալ ըլլան :

Անորդէս որ կայտառ ըլլան . չարքա-
շուծեան , չափաւոր կրթութեան ու
աշխատութեան վարժեցուր . վտանգա-
ւոր առիթներէ հեռու բռնէ զիրենք՝
բայց առանց շատ վախցընելու , այլ մա-
նաւանդ թէ քաջասիրտ ընել ջանա :

Ընկերասէր ընելու համար կրթէ զի-
րենք որ իրենց նմանեացն օգնեն ու ա-
նոնց վրայ գուծու կարեկցութիւն ու-
նենան . ըսեն ուրիշի այն բանը միայն
ինչ որ կը փափաքին որ այլք իրենց ը-
նեն , ու համբերութիւն սորվին . ջանք
ըրէ գարձեալ որ լաւ վիճակ մը ու ար-

հետ մը ունենան ձեռքերնին : Ասե
ուսմունք ալ սորվեցուր , բայց միշտ յի-
շելով որ աշխարհքս առաքինի ու քա-
ղաքակիրթ մարդկանց աւելի կարօտու-
թիւն ունի՝ քան թէ գիտուններու :
Ղմարիտ ու անհրաժեշտ կարևոր գի-
տութիւնը՝ որ եթէ զանց առնես կը մե-
ղանչես , հաւատոյ սկզբունքները սոր-
վեցրնելն է , ու կարգաւ գրել , հաշիւ
բռնել , ու չթողուլ որ մաքին մէջ նա-
խապաշարմունքներ , աւելորդապաշտու-
թիւններ ու սխալ կարծիքներ տեղիք
գտնան :

Առաջնաւ որ առաքինի ըլլան , իրենց
սկզբնական կիրքերուն վրայ հսկէ և
առ բարին ուղղէ . որ և իցէ ախտ մը
առանց պատժոյ մի՛ թողուր , ու ջանա-
օգտակար և վեհանձն գործոց սէր ձգես
սրտերնուն մէջ՝ առաքինի անձանց գործ-
քերն օրինակ դնելով առջևնին և ա-
նոնց բարի հետեանքները : Եստ պատ-
շաճին գովեստ՝ ըստ պատշաճին յան-
դիմանութիւն . ընկերներուն վրայ աչք
ունենալ . առանց կողմնակցութեան սի-
րել խանդաղատանօք՝ բայց ոչ կուրօ-
րէն . տղէ մը մարդկանց հաւասար բան
չպահանջել՝ այլ յիշել որ մարդ պիտի
ըլլայ , ու խօսքէ աւելի գործքով ու Մ.

տուժոյ վախը սրտին մէջ տպաւորելով
զինքը կրթել :

Որդւոց թողու լաւագոյն ժառանգու
թիւնն , ո՛վ ծնողք , դաստիարա
կութիւնն է : Խոնարհութեան ու հը
պատակութեան վարժեցուցէք ձեր որ
դիքը , սէր ու վստահութիւն ունեցէք
վրանին , և բանի գործքի դրէք : Այս
պէս խիստ շատ վշտերէ ազատ կ'ըլլաք .
վասն զի մարդ մը որչափ աւելի կրթ
ըլլայ՝ այնչափ աւելի առաքինի կ'ըլլայ .
որով կրնաք յուսալ որ երբ հասակնին
առնեն մեծնան՝ փոխադարձաբար սի
րեն զձեզ ու խնամեն :

ԾԱ.

Որդիք :

Ո՛հ , ինչ քաղցր անուն է հայր ա
նունը . նոյն իսկ Աստուած երբ մեզի ա
ղօթք ընելուն կերպը սորվեցուց՝ ուզեց
որ հայր ըսելով սկսինք :

Հայրդ եղաւ քեզի կեանք տուող ,
ո՛վ պատանեակ . հիմա անոր հաւասար
ուրիշ հարկաւոր բան մըն ալ կու տայ՝
որ է դաստիարակութիւնը . և այսպէս

առանց քու աշխատելուդ ինքը քու կա-
րօտութիւնդ կը լեցընէ, քու բաղդդ
շինելու համար կը քրտնի ու կը յոգնի.
քու ընտրելագոյն բարեկամդ է, միշտ
հետդ է, անդադար նորանոր բարիք-
ներով զքեզ կը լեցընէ. վերջապէս, ա-
մէն ունեցածը քեզի պիտի թողու :

Իսկ մայրդ. որչափ քեզի համար ցաւ
քաշեց. երբ տղայ էիր ու չէիր կրնար
շարժիլ, չէիր կրնար խօսիլ, բան չէիր
հասկընար, որչափ նեղութեանց համ-
բերեց քեզի համար, որչափ գիշեր ա-
ռանց քնանալու անցուց, որչափ զուար-
ճութեանց պատճառ եղաւ քեզի. հետդ
խնտաց, հետդ լացաւ. ո՞վ զքեզ հի-
ւանդութեանդ ժամանակ հողաց, ո՞վ
տկարութեանդ օգնական եղաւ, ո՞վ
խօսիլ սորվեցուց քեզի. ո՞վ դարձեալ
հօրդ անուներ և բուն հայրդ որ երկինքն
է պաշտել ու փառաւորել քեզի սորվե-
ցուց :

Հիմա ալ նայէ որչափ սիրով ծնողքդ
զքեզ կը կրթեն : Եւ որ խիստ կ'երե-
նան ստիպելովնին որ ուսման ու ար-
հեստի մը ետեւէ ըլլաս՝ գիտնաս որ լա-
ւութեանդ համար կ'ընեն, որպէս զի
կարենաս արժանապէս առաքինեաց ըն-
կերութեանը մէջ մտնալ. թե թե պակ-

սու թիւն մըն ալ ընես կ'ուղղեն, վասն
զի դիտեն որ երթալով հետզհետէ կը
մեծնան. ան որ հիմա քիչ մը շատ ու
տել սիրող է՝ ատենօք անժուժկալու
թեամբ կրնայ հիւանդանալ ու առող
ջութիւնը կորարնցընել. բարկացողը կա
տաղի բան մը կը դառնայ. անհողը՝
ծոյլ. կատակով ըսուած սուտ մը թէ որ
չուղղուի՝ կատարեալ ստախօսութեան
կը փոխուի: () րհնեալ ըլլան ծնողք որ
պատշաճ պատիժներով մեր սրտին սկըզ
բնական ախտերուն արմատները կը
խլեն:

Մ առաւօտ, ով պատանեակ, ելլե
լուդ պէս, Մ ստուծոյ շնորհակալ ըլլա
լէն ետքը, մէկէն վաղեցիւր հայրդ բա
րևելու. երբոր դպրոցէն դառնաս, «Երե
ւէ հայր ի՞մ ըսելով մօրդ պիտի երթաս.
ա՛հ, միտքդ եկա՞ն կամ պիտի գա՞ն ար
դեօք ան խեղճերը որ ոչ հայր ունին և
ոչ մայր. աղօթք ըրէ որ Մ ստուած զի
րենք պահէ, և վերջը յիշելով որ դուն
ալ որ մը իրենցմէ պիտի զրկուիս՝ կըրկ
նապատկէ քու սէրդ, յարդէ, օգնէ ու
գութ ունեցիւր վրանին:

Մ նասուններն անգամ իրենց ծնողքը
կը սիրեն. իսկ պատուելը՝ բարև տա
լուն ու արտաքին քաղաքավարական

կերպերուն վրայ կեցած չէ, այլ իրենց
հրամանաց խոնարհութեամբ ու հե-
ղութեամբ հպատակելուն վրայ է :
Ծնողացդ օգնելով, իրենց քու օգտիդ
համար ըրած այնչափ աշխատութեանց
փոխարէն, երախտագիտութե պարտքդ
կատարած կ'ըլլաս : Այն որ պակասու-
թիւններ ունին, կ'ըսես, ո՞վ կայ որ
պակասութիւն չունենայ . նայէ, իրենք
քու կիներուդ ինչպէս արգահատեցան :
Վանի ծերանան՝ հիւանդոտ, տրտնջա-
ցող ու նեղսիրտ կ'ըլլան . և միթէ ա-
սոնց համար պիտի անարգէս զիրենք
ու անգթութիւն բանեցրնես . մտածէ
թէ մենք ալ տղայութեան ժամանակ
նիս ինչպէս հիւանդոտ, կանչուրուտող
ու նեղսիրտ էինք :

Պատուէս զհայր քո և զմայր՝ ասիկայ
Մտուծոյ պատուիրանքն է : Վարի որ-
դի մը բարի քաղաքացի կ'ըլլայ . և ինչ-
պէս որ մենք մեր ծնողացը հետ վա-
րուինք՝ մեր որդիքն ալ մեզի հետ նոյն-
պէս պիտի վարուին : Մտեն կու գայ որ
դուն ալ տարիքդ առնելով որդւոց տէր
պիտի ըլլաս . սեպէ թէ անոնք քեզմէ
հեռանան, խորհուրդներուդ մտիկ չը-
նեն ու կարօտութիւնդ չհոգան, անանկ
որ՝ այն միջոցին որ աւելի կարօտ ես՝

քեզի ընկերու թիւն ընող մը չունենաս,
ինչ վիշտ, ինչ ցաւ չէր ըլլար քեզի աս
բանս: Այն, չըլլայ որ ծնողացդ աս
վշտերը պատճառելով նոյները դուն ալ
քաշես:

ԾԲ

Եղբարք:

Ո՛հ, ինչ սիրուն, ինչ լաւ բան է եր-
բոր եղբարք մէկտեղ կը բնակին. հոս,
հոս, եղբարք իմ և քորք, եկէք իմ
չորս կողմս պատեցէք. բնու թեան ինծի
տուած բարեկամներն էք դուք. նոյն ա-
խորժն ունինք, նոյն ցաւերն ու մի և
նոյն յոյսերը. ո՛հ, ուրեմն մէկմէկու բա-
րեացը փափաքինք, իրարու վրայ տե-
սած պակասու թեանցն արգահատինք,
կարօտու թիւն որ ունենանք՝ օգնենք,
բարեգործու թեան յորդորենք մէկըզ-
մէկ. ես մէջերնիս ամենէն մեծն եմ՝
բայց գիտեմ որ ամենէն պղտիկն ալ
ինծի հաւասար է, ու ես որ աւելի
փորձ ունիմ՝ պէտք է ուրիշներուն ի-
բրև խնամակալ ըլլամ, աւելի սիրեմ
զձեզ, բարի օրինակ ըլլամ, ու թէ որ

դժբաղդաբար հայրերնիս մեռնի՛ ես
իրեն տեղը բռնեմ. դուք ալ փոխա-
դարձ պէտք է բոլոր սրտանց ու ձեռ-
քերնէդ եկածին չափ իմ բարիքս ու-
զէք, և իմ ձեր վրայ ցուցըցած խնա-
մոցս դուք ալ ձեր կողմանէ օգնէք:

Մնասանելի է ան տունը որ եղբայ-
րական միաբանութեան վրայ կեցած է .
ու երբոր մարդիկ ուզենան ճանչնալ
քու ինչ տեսակ մարդ ըլլալդ, կը դի-
տեն թէ եղբարցդ հետ ինչպէս կը վա-
րուիս:

Մոյնպէս պարտական ենք մեր ուրիշ
ազգականներուն վրայ վերջի աստիճան
սէր ցուցընել, և ամենայն փութով,
յօժարութեամբ ու սրտանց իրենց ծա-
ռայել:

ԾԳ

Բարեկամք:

Զամէնքն ալ սիրելով հանդերձ կան
անձինք զորոնք ուրիշներէն աւելի կը
սիրենք. և արդէն դուք, ո՛վ պատա-
հեակք, ձեր ընկերակցաց մէջ մէկն ու-
նիք որուն հետ աւելի սիրով կը վարուիք,

որուն ձեր սիրտը կը բանաք ու քաշած
թեթեւ նեղութիւննիդ կը պատմէք .
այն է ահաւասիկ ձեր Բարեկամը :

Յիսուս՝ աղարոսն իրեն բարեկամ
ստացաւ , ու երբոր մեռնիլը լսեց՝ լա-
ցաւ , ու նորէն կենդանացուց : Իրաւ-
ցրնէ բարեկամը գանձ մըն է . բայց չեմ
ըսեր ան բարեկամներուն համար որ
դիւրաւ ամէն տեղ կը գտնուին , որոնց
մէկ խօսքով «բէտ Բարեկամ կ'ըսենք . այլ
անոնց համար կ'ըսեմ , որ իրենց հան-
դիստը զոհելով պատրաստ են ծառայե-
լու , օգնելու , խորհուրդ տալու և պաշտ-
պանելու . անոնց համար , որոնց ծոցը
կրնամ ես արցունքս թափել , ապահով
ըլլալով որ ներումն ու կարեկցութիւն
պիտի գտնեմ :

Մ. յի մանկական բարեկամութիւն-
ները , ո՛վ պատանեակք , որ այսօրուան
օրս դպրոցին մէջը իրարու հետ կը հաս-
տատէք , ո՛ր գիտէ թերեւս բոլոր կեան-
քերնուդ մէջ ձեզի ընկեր ըլլան . բայց
բարեկամութիւնը տեղական ըլլալու
համար՝ փոխադարձ իրարու վրայ սէր
ու մեծարանք պէտք է ունենալ . և այդ
սէրն ու մեծարանքը առանց առաքինու-
թեան չեն ըլլար : Միայն առաքինի
մարդու հետ բարեկամ եղիր , որ միան-

գամայն խոհեմ ըլլայ ու կարենայ չգիտ-
ցածդ սորվեցընել, գաղտնիքդ պահէ ու
խորհուրդ տայ: Անխելք մարդու մը
կարծիքին հետևողը շատ ջանցնիր կը
զղջայ. բայց զգուշացիր անոնցմէ որ ըզ-
քեզ գովել միայն գիտեն ու շողոքոր-
թութեամբ ախտերդ ալ կը բարձրա-
ցընեն: Ո՛վ որ եր Բարեհամբն անհաճոյ ըւ-
լալէն կը զատէ՝ այնպէսին արժանի ալ չէ նաև
հաճոյ ըլլալու: (Ժ) Ե որ յանդիմանուիս՝
սիրով մտիկ ըրէ, յիշելով որ ալ լաւ է
բարեկամին հարուածը՝ քան թէ թըշ-
նամուոյն համբոյրը:

Առած եղած է թէ երեք բանով բա-
րեկամ մը հաստատուն կը մնայ. առ-
ջևէն պատուելով, ետևէն գովելով,
կարօտութեան ատեն օգնելով. միտքդ
պահէ ասոնք:

Ամենքնիս ալ մեր տկարութիւններն
ունինք, ուստի բարեկամ բարեկամի
մէջ պէտք է արգահատող ըլլայ. առա-
քինի ու քաղաքակիրթ մարդ մը եր Բա-
րեհաճը պահասութիւններու հանդերձ կը սի-
րէ. ոչ երբեք կը մատնէ, և կամքին դէմ
գործելէն կը խորշի. կը ջանայ զինքը
ուրախացընել և օգտակար ըլլալ, ին-
չուան նաև իր անձին մնասովն ալ. ու
ընդհերուն առջև պակասութիւնները

կը ծածկէ , բայց նաև կը ջանայ որ ուղ-
ղէ . շատ մեծ բաներ չպահանջեր , սի-
րով իր վշտերը մտիկ կ'ընէ , ու բարեկա-
մին հեռանալէն ալ ետքը՝ ինքը չգաղ-
րիր նոյնպէս անոր բարիքն ուղեւէն . ա-
ւելի ևս իր սէրը հիւանդու թեանցն ու
կարօտու թէցը մէջ կը ցուցընէ , վասն
զի Ռշո-տո-ո-ւ-ւեան մէջ Բարեհաճո-ւ-ի-նը
ցայտնի է' ըլլայ . եթէ գժտու թիւն մը
ծագի՝ կը ջանայ պատճառները վերցը-
նել : Վ'նչ խելք է հաճոյից մը կամ բա-
նի մը յամառելով դանձ մը կորսնցընել :
Վսկ եթէ բարեկամդ չափը անցընէ ,
ուղղէ զինքը , ու բոլոր ջանքդ թափէ
զինքը բարի ճամբուն մէջ հաստատե-
լու . թէ որ չկարենաս յաջողիլ՝ բաժ-
նուէ , բայց միշտ աս ալ գիտնաս որ բա-
րեկամու թիւնը կրնայ քակուիլ . բայց
պէտք չէ կտրուի : Աթէ բարեկամու
թեանդ կը դադրիս՝ մի՛ դադրիր անով
իր բարւոյն փափաքելէն :

ԾԴ

Չարասերք :

Այս անձը ինծի չարիք ընել ու փա-
սել կը ջանայ . բայց ես արդեօք պատ-
ճառ տուեր եմ իրեն՝ թէ չէ . եթէ
տուեր եմ, պէտք չէ ամր չնամ խոնար-
հելու ու իրմէ թողու թիւն խնդրելու .
և այսպէս բարեկամ մըն ալ կը ստա-
նամ և թշնամիէ մը կ'ազատիմ : Մէկ
Բշնամի ճշ միայն ունէնաւը շատ է . իսկ Բա-
րեհամ՝ հարեւր ալ ունէնաս դեռ չիլ է :

Թէ որ նախատիւնք ըրած ըլլայ ին-
ծի . պէտք է միտքս բերեմ որ ինքն ալ
ինծի պէս մարդ է, ու ամէնքնիս ալ
ենթակայ ենք սխալելու . դարձեալ
պէտք է մտածեմ որ պակասու թեանցը
հետ ունի խել մ' ալ կատարելու թիւն-
ներ : Այս ազատու թեամբ պէտք է զին-
քը դատեմ, եղած նախատիւնքը աւելի
մեծ չըմբռնելով, և միտքս պէտք է դը-
նեմ որ կամ տգիտու թեամբ և կամ
սխալմամբ էր ըրածը . գթու թեամբ
պէտք է սանձեմ իմ բարկու թիւնս որ
իրեն դէմ կը զգամ . բարեւրտու թեամբ

պէտք է զինքը փոխադարձ նախատելն
զգուշանամ և վեհանձնութեամբ որ-
չափ կարելի է շուտով հետն հաշտուիլ
ջանամ :

Սէ, չեմ ուզեր սրտիս մէջ ուրիշի
դէմ ատելութիւն ունենալով քուն ըլ-
լալ : Աւրիշի հետ թշնամութիւն ունե-
նալով ինչպէս կրնամ աղաչել զՄատուած
ու ըսել՝ որ ինչպէս էս իմ պարտապաններու
էր Ռոզոմ՝ նոյնպէս դո՛ւ ալ ինձի Ռոզոմ-
բիւն : Սէտք է որ հետը խաղաղութիւն
ընեմ՝ առանց որոյ երջանկութիւն չը-
կայ . իսկ հաշտուելն վերջը՝ պէտք է
ամէն բան մոռնամ :

Չարերէն պէտք է հեռու կենամ .
վասն զի բորոտ ոչխար մը կրնայ բոլոր
հօտն ապականել . պէտք է զգուշանամ
նաև այն ամէն բանէ որ կերպով մը ի-
րենց չարութեանը պատճառ կրնայ ըլ-
լալ : Վայց ինչ որ ալ ըլլան , անոնք ալ
մարդիկ են , իմ եղբայրներս են . Մա-
տուած արևը նաև անոնց համար ալ
կը ծագէ , ուստի պէտք է զգուշանամ
որ իմ բռնած խիստ կերպովս աւելի
չգրգռեմ ու չզայրացընեմ կրքերնին :

ԾԵ

Հարուստն ոչ աղքատ, իշխանաւորք և
հպատակք :

Դու հարուստ ես. շնորհակալ եղիր
Մատուծոյ, բայց Ա. յիշէ որ հարըս-
տութիւն տուողն Մատուած է. Բ. որ
ի բարին գործածելու համար տուեր է
քեզի, և Գ. որ մէկ օրուան մէջ կրնաս
ամէն ունեցածդ կորսնցընել. նայէ ու-
րեմն որ չափաւոր ըլլաս, քաղցր ու մար-
դասէր. դատարկակեցութեամբ ու շը-
ռայլութեամբ ուրիշներէն վեր ըլլալու
փոյթ մի ունենար, այլ նայէ որ առա-
քինութեամբ ու գթութեամբ ցուցը-
նես քու անձիդ վրայ որ նախախնամու-
թեան գործիք մըն ես իր շնորհքները
բաշխելու, աղքատաց օգնելու, սրամիտ
անձանց վրայ ձեռք դնելու, որպէս զի
ուրիշներուն բարերարութիւն ընելով
զքեզ կատարելագործես :

Իսկ դու որ բարձր աստիճանի ու
պաշտօնի մէջ ես, կը յարդեմ զքեզ
վասն զի ամէն իշխանութիւն Մատուծ-
մէ է. բայց գիտեմ նաև որ այն աստի-

ճանր ուրիշներուն բարեացը համար
տրուած է քեզի, որպէս զի քեզմով
միշտ արդարութիւնն յաղթող ըլլայ :
Ղարձեալ գիտեմ որ դու ալ մարդ ես,
գիտեմ որ աստիճանն ու պատուանունն
ըսածդ ուրիշ բանի չնմանիր՝ եթէ ոչ
գրքի մը հարուստ կազմին որ գրքին ա-
մենեւին յարգը չաւելցրնէր . բայց թէ
որ ձեռք տաս ստորնագունից, թէ որ
անոնց դանգատներն ու տրտունջը ար-
դարութեամբ դատես, թէ որ սուտ
խոստամունքներով չես խաբեր ու խաղ-
ցրնէր զիրենք, թէ որ նախ դու իրենց
բարի օրինակ կ'ըլլաս, ան ատենը կը
սիրեմ ես զքեզ, կը յարգեմ ու կ'աղօ-
թեմ Մտուծոյ որ կեանքդ երկընցրնէ :

Ընդհակառակն ես աղքատ եմ . պզտի
տնակի մը մէջ ծնած եմ . հարուստ ազ-
գականներ չունիմ, բարեկամներս ալ
աննշան մարդիկ են . բայց ինչ կ'ըլլայ
եղեր . Յիսուս ալ աղքատ էր, աղքատ
էին առաքեալներն ալ և գրուած է թէ
աղքատաց է արքայութիւնը : Ա՛հ, հա-
րրստութիւն չունենալս զիս ճնուաստա-
ցրնէր, կրնամ ամենէն հարուստ մար-
դուն հետ հաւասար ըլլալ . Մտուծոյ
կամքը կը կատարեմ՝ վասն զի իմ ճակ-
տի քրտինքովս կ'ապրիմ . և թէ որ իմ

սլարտքերս կ'ընեմ, թէ որ առաքինի ու
քաղաքակիրթ եմ, շատ աւելի յարգ
ունիմ քան զնենգաւոր հարուստ մը և
քան զչարասիրտ իշխան մը: Մոյ՛ մեծ
ու ընդարձակ գետ մըն է ու վտանգա-
ւոր, որով ամէնքը անունը գիտեն և
թագաւոր կը կոչեն զինքը. բայց այդե-
զործը անոր աւերմունքներէն կը վախե-
ու նաւավարը ալէկոծութենէն կը սար-
սափի և իրեն եղերքներուն մօտ բնա-
կողները ողողմունքէն կը դողան: Մակ
այն առուակը որ իմ դաշտս կ'ուռգէ,
իրաւ պղտիկ է ու անծանօթ՝ անանկ որ
և ոչ անուն մը ունի, բայց երկիրները
կը բեղնաւորէ և հողը կը կենդանա-
ցընէ չորութեան ժամանակ: Մոյին
և իմ առուակիս ջուրը երկուքն ալ հա-
ւասարապէս երկնքէն կու գան և եր-
կուքն ալ կ'երթան նոյնպէս ծովուն մէջ
կը կորսուին:

Այն ումանք որ զմարդ իր զգեստէն
կը չափեն ու կը դատեն, բայց այսպի-
սիները չեն գիտեր թէ զգեստը զմարդ
կրօնաւոր չընէր, և թէ երբեմն կոտորած
պատենի մէջ ալ ընտիր պողպատէ դա-
նակ մը կը դրուի. և թէ ընդհակա-
ռակն կապիկը թէպէտ մետաքսէ ըզ-
գեստներ ալ հագուի՝ նորէն միշտ կա-

պիկ է : Աւրիշի՝ օրչափ ստրկի հարրս-
տու թիւն ունենալը մի հարցըներ, հա-
պա թէ ինչ մարդ է :

Բայց տես, աս աղքատը կ'ուռի ու
կը սոնքանայ, վասն զի հարուստներու
հետ սկսեր է վերաբերութիւն ունե-
նալ. ուրիշ մ'ալ հարուստը կ'ատէ ու
անկէ կը փախչի և կը կարծէ որ անի-
կայ առաքինական զգացմունք չկրնար
ունենալ : Ա՛հ, չէ, եղբարք. լաւ հա-
րուստներ ալ շատ կան, ինչպէս որ գէշ
աղքատներ ալ չեն պակսիր. բայց աւե-
լի լաւ է հարուստներու խիստ շատ չմօ-
տենալ, վասն զի կրնանք ստէպ մահա-
ցուցման առիթներ ունենալ. հաւասար
ընկերութեան մէջ աւելի դիւրաւ ու
հանգստեամբ կրնանք ապրիլ : Ա՛եր
գլխաւորները անհանգիստ չընենք ան-
դադար բանի մը ետեւէ ըլլալով ու թա-
խանձելով, և ամէն յոյսերնիս իրենց
խոստմանցը կամ օգնութեանը վրայ
չդնենք : Խեղճ արուեստաւորներ, խեղճ
գեղացիներ, խեղճ բոլոր իմ եղբայր-
ներս, նորէն կ'ըսեմ, զմեզ ամենէն ա-
ւելի լաւ պաշտպանողները մեր թւերն
ու մեր գլուխն է :

Մաքինի ու քաղաքակիրթ աղքատը
հարուստներն ու վերնագոյնները կը սի-

րէ՛ բայց անոնց աչքը մտնելու համար
զինքը ջնուաստացրնէր, իրենց ախտերը
չբարձրացրնէր շողովելով, և թէպէտ
փայփայէ ալ՝ բայց միշտ ճշմարիտը կը
խօսի, միտքը դնելով որ իր ազատ և ի-
րաւացի վարմունքովը նուաստանալու
տեղ՝ աւելի սիրելի և մեծարոյ կ'ըլլայ :
Ար յանձնեմ ուրեմն իբրև յիշելիք մը
որ միշտ ազնու-ութեամբ հպատակի՜ր ու վե-
հանջնութեամբ հրաճայէ՜ :

ԾԶ

Տեր և ծառայ :

Ծառան խեղճ վիճակի տէր մարդ
մըն է, որ ուրիշ լաւագոյն արուեստ մը
չունենալով ձեռքը, ինչ որ հարուստը
չուզէր ընել՝ ինքը յանձն կ'առնու իրեն
տեղ ընելու : Վաշնադրու թիւն մըն է՝
որով երկուստեք պայմաններ կը դրուին
(յօդ. 39). ու միշտ լռելեայն աս պայ-
մանս ալ կ'իմացուի որ ծառան ձեռքէն
եկածին չափ առաքինի ու քաղաքա-
կիրթ մարդու մը պարտուց համեմատ
պիտի ծառայէ իր տիրոջը, և թէ տէրն

ալ զինքը պիտի պահպանէ և իրեն վի-
ճակը պիտի լաւցընէ :

Բարի տէր մը գիտէ որ ծառան բը-
նութեամբ իրեն հաւասար է (յօդ .
16) . ուստի հետը մարդասիրութեամբ
կը վարուի , իբրև ընտանեաց մէջէն մէ-
կը այնպէս վրան կը նայի . ստէպ ստէպ
չփոխեր , միայն պարկեշտ ու արդար
բաներ իրեն կը հրամայէ , չգիտցածը
կը սորվեցընէ , և բնաւ իրեն հարկա-
ւոր եղածէն բան մը պակաս չընէր և
աշխատութեանցը մէջ բաւական ժա-
մանակ հանգիստ կը թողու : Ըստիա-
զանց ընտանութիւն չբանեցընէր՝ օրպէս
զի իրեն պատիւը չկորսնցընէ . վրան կը
վստահի՝ բայց իր ընթացքը կը գիտէ .
չար օրինակ ամենեւին չտար . և թէ որ
հիւանդանայ ու ծերանայ՝ երեսէ չթո-
ղուր , և խիստ լաւ գիտէ որ ծառան իր
տուած կըթութեանը համեմատ բարի
կամ չար կ'ըլլայ :

Բռաբիւնի ու քաղաքակիրթ ծառան
գիտէ որ պէտք չէ հնազանդի տիրոջը
երբ բարոյականի դէմ , և կամ իր կե-
նացը դէմ վնաս բերող բաներ կը հրա-
մայէ . ասկէ դուրս յամենայնի հլու ,
ակնածող և ամենէն ոչինչ բաներու մէջ
ալ հաւատարիմ է , լեզուն կը զսպէ ,

և միանգամայն իր տիրոջը կեանքը, ունեցածը ու պատիւը կը պաշտպանէ: Ազաճ են շատ ծառաներ որ իրենց տիրոջը աղքատնալէն ետև ոչ միայն չեն ուզած զիրենք թողուլ հեռանալ, այլ իրենց աշխատութեամբը զիրենք դարմաներ են հաւատարմութեամբ:

Այս ըսածներս նաև անոնց ալ կը վերաբերին որ խանութ մը մտած են, կամ ուրիշի դաշտերը կը մշակեն: Տարի ծերուկի մը հետ ճանչուորեցայ որ կ'ըսէր. Պէտք է բանի գործի վրայ բռնել զանիկայ որուն վրայ ճարդ կը հասկածի, ե ոչ ալ պէտք է հասկածել անոր վրայ որ ծառայութեան ճը բրեր էս. իսկ ծառայից ալ ասանկ կ'ըսէր.

Ա՛մ մարդու պէս ծառայ,

Ա՛մ չէ նէ փախիր գնա:

ԾԷ

Բարերարք և բարերարեալք:

Հարստութեան, վիճակի և կարողութեան աս տարբերութիւնները մարդկանց մէջ կապ մը կը ձևացընեն մէկ-

մէկու բարին ուզելու և մէկմէկու բարիք ընելու :

Հարուստն առատաձեռնելու կարողութիւն ունենալով՝ չունեցողին կ'օգնէ : Մայց առատաձեռնութիւնն ալ պէտք է որ չափով ու խոհեմութեամբ ըլլայ . նախ քու ունեցածդ մտածէ , վերջը անոր արդիւնքը որուն որ կ'ուզես բարերարութիւն մը ընել . ուստի աւելի ազգականներուդ պարգևէ քան թէ անծանօթ մարդկանց . արդիւնք ունեցողներու , խոհեմներու , որ քեզի շատ անգամ ծառայութիւններ ըրած ըլլան , կամ այնպիսւոյ մը որ գէշի չգործածեր : Արբոր կ'ուզես տալ , նայէ մէկէն տաս . ուրախութեամբ տուր , առանց դիմացինդ մահացընելու , առանց երեսը զարնելու , առանց փոխադարձ յուսոյ , և ոչ իսկ երախտագէտ ըլլալուն սպասելով : Անտարակոյս փոխարէնը կ'առնես անկէ որ իրեն սիրոյն համար տրուած ինչուն կաթիլ մը ջրոյն հաշիւը կը բռնէ :

Բարերարեալը գոհ սրտով և ուրախութեամբ պէտք է ընդունի՝ առանց սոժոհալու , առանց իմաստակութեան : Տեսեր եմ զոմանս որ բարերարութիւն մը ընդունելէն ետև կ'ըսէին . Հը՛մ , է՛նչ ձե՛ծ բան է . իրեն համար բան մը ըսել չէ .

արդէն պարտական էր : Ապերախտներ .
Թող անանկ ըլլայ . բայց մտածեցէք
մէյ մը ձեզի եղած օգուտը . ուրեմն
պարտական էք ոչ միայն բերնով շնոր-
հակալ ըլլալու , հապա նաև նոյնը մըտ-
քերնիդ միշտ պահելու էք , որպէս զի
երբ առիթը գայ՝ փոխարէնը հատուցա-
նէք : Ապերախտը թէ՛ անձին և թէ՛ ու-
րիշներուն կը մնասէ . վասն զի ապերախ-
տու թեամբը տհաճեցընելով բարեսէր
անձինքը բարերարելէն ետ կը կեցընէ :

Այց բարերարու թիւնը միայն տա-
լով չըլլար : Մնչ բարերարու թիւն չեն
ըներ քեզի վարժապետներդ ու տէ-
րերդ որոնք գիտու թիւն կամ արուեստ
մը քեզի կը սորվեցընեն . ուստի պէտք
է երախտագէտ ըլլաս իրենց : Ասև
հիմա աս պզտի հասակիդ մէջ ալ կըր-
նաս բարերարու թիւն ընել քու չորս
կողմդ եղողներուն . զոր օրինակ՝ իրենց
տհաճու թեան , ձանձրու թեան և աշ-
խատու թեանց պատճառ չըլլալով . ընդ
հակառակն ջանալով մխիթարել զու-
րիշները , խաղաղացընել , բարի բաներ
խօսելով ու քաջալերելով : Մեծնալէդ
վերջը , թէ որ լաւ մշակես քու երկիր-
ներդ , թէ որ քու քաղքիդ մէջ լաւ ա-
րուեստ մը մտցընես կամ կատարելա-

գործես, թէ որ աղքատ ժողովուրդն
աշխատցրնես ու անոնց ապրուստը ճա-
րես, բարերարութիւն ըրած կ'ըլլաս :
Թէ որ ուսման ետեւէ ըլլալով ճշմար-
տութիւն մը դուրս հանես՝ որ ամենուն
օգտակար ըլլայ, թէ որ լաւ խորհուրդ
մը տաս, թէ որ մէկու մը արդարու-
թեամբ ստակ վաստրկելու ճամբայ բա-
նաս, թէ որ ուրիշներուն պատիւը
պաշտպանես, թէ որ տղայ մը կամ աղ-
ջիկ մը ազատես մոլորութեան ճամբէն՝
բարերարութիւն ըրած կ'ըլլաս :

Ո՛վ պատանեակք, տեղեկացէք թէ
ձեր քաղքին մէջ եղած անկեւանօցը ո՞վ
հաստատեց. ո՞վ տուաւ ան ողորմու-
թիւնը. ո՞վ ան օժիտները, օգնութիւն-
ները, վարժատուններն ու ապաստա-
նարանները շինել տուաւ. բոլորն ալ
բարերարք, և դուք պէտք է որ անոնց
երախտագէտ ըլլաք :

ԾԸ

Ծերք :

Թէ որ ես ուղենամ ճամբորդու-
թիւն մը ընել, անոնց խորհուրդ կը հար-

ցընեմ՝ որոնք որ մէյ մը նոյն ճամբան
ըրեր են . անանկ չէ : Ներերն ալ մարդ-
կանց մէջ ան ուղեորներն են որ մեր
նոր սկսելու ճամբան արդէն իրենք ը-
րած են . չարն ու բարին տեսած , վը-
տանգները , դժուարուտ անցքերն և
հանգչելու յարմար տեղուանքը սորված
են : Արեմն իրենց խորհուրդ հարցը-
նենք որ իրենց փորձովը մեզի առաջնոր-
դեն . վասն զի ո՛վ որ կ'ուզէ իր անձին
տուժիւքը փորձառու ըլլալ , կը տեսնայ
թէ որչափ սուղի կը նստի :

Ներերն արդէն խել մը զուարճու-
թիւններէ զուրկ են . գոնէ երիտասար-
դաց իրենց վրայ ունեցած սէրն ու յար-
գութիւնը տեսնելով մխիթարուին :
Վմիթէատրոնի մը աստիճաններուն
վրայ նստած էին հին Յունաստանի
այլ և այլ ժողովուրդներ ու եղած խա-
ղարկու թիւնները կը դիտէին . հոն ծեր
մը եկաւ և սկսաւ այլ և այլ ազգաց առ-
ջէն անցնիլ , բայց չեղաւ ժողովուրդ
մը որ իրեն նստելու տեղ տայ . երբոր
Սպարտացւոց առջևը հասաւ՝ բոլոր ե-
րիտասարդները ամէնքը մէկէն ոտք ե-
լան , որպէս զի զինքը նստեցընեն . ան
ատեն ամբողջ հանդիսարանը սկսաւ
ծափահարու թիւն ընել , և ծերն ալ գո-

չեց. Բոլոր Յոյնի առաքիհո-ւ-թի-ւնը էր ճանչ
նան, Բայց միայն Սպարապոյի էր Գործարբէն :
Մենք ալ գոհ չըլլանք միայն ծափ զար-
նելով գովել բարիք ընողը, այլ նաև
հետևող ըլլանք :

Ներերը ուրիշ այնչափ նեղութիւն
ներ կը քաշեն՝ թող մտիթարութիւն
մըն ալ ունենան, տեսնալով երիտա-
սարդաց իրենց վրայ ունեցած խնամքը :
Նայէ Վրիգորիկը, ինչ ազնիւ տղայ
է. ստէպ ստէպ Մինաս ծերուկին այ-
ցելութիւն կ'ընէ, որ խեղճը որդիքը
կորսընցնելով չոր գլուխ մնացած է. ի-
րեն անցած գացած պատմութիւններ
պատմել կու տայ, խորհուրդ կը հար-
ցընէ, քալելու որ ելլայ իրեն ընկերու-
թիւն կ'ընէ, թեթև ծառայութիւն-
ներ կ'ընէ, կը ջանայ որ ամենեւին նե-
ղութիւն չտայ և իրեն ճանճրանալի
կեանքը իր երիտասարդական աշխու-
ժովը կը կենդանացընէ : Մինասն ալ
բոլորովին ոգի կ'առնու, ինչպէս թէ որ
ծերացած ծառի մը բունին վրայ նոր
պատուաստ մը ընես. իսկ Վրիգորիկը
անտարակոյս ատենօք առաքիհի ու քա-
ղաքակիրթ մարդ մը կ'ըլլայ :

Վ՛լ պատանեակք, դուք հիմա ար-
գելք մը չունիք ու աշխոյժ էք. բնու-

Թիւնը զձեզ կը զուարթացնէ, արտօ-
րէից կենդանու թիւնը զձեզ կը մխիթա-
րէ, մարդաց ծաղկազարդ կանաչու-
թիւնը, անտառաց քաղցր ստուերները,
վերջապէս ամէն բան այս հասակներ-
նուդ մէջ ձեզի զուարթ կ'երևայ, և
բիւր ապագայ ուրախարար յոյսեր ձեր
միտքը կը գրաւեն. բայց ատենը կու
գայ որ տարիներուն շատու թեանը հետ
մտածու թիւններ, հոգեր, տկարու-
թիւններ կը սկսին վրանիդ տիրել. վեր-
ջը եթէ լաւ ապրիք՝ կը ծերանաք. ինչ-
պէս կը փափաքիք ուրեմն որ ան ատեն
ձեր հետը վարուին:

ԾԹ

Եկեղեցականք:

Քահանայք Նստուծոյ կամաց թարգ-
մանքն են և միջնորդք արարչին և մեր
մէջը, որոնք առաքինու թեամբ ու գի-
տու թեամբ լցեալ, խոհեմական եռան-
դեամբ ճշմարտու թիւնը կը տարածեն,
ստու թիւնը կը խափանեն և զմարդիկ
իրենց ախտերէն կը զգուշացնեն: Նս-
տանեաց քաղցրութենէն կը հրաժա-

ըին, որ Վրիստոսի որդիքը իրենց ըն-
տանիք ընեն. աղքատներն իրենց օգ-
նութեանը կը դիմեն, տարակուսեալ-
ները խորհուրդ կը հարցընեն, հիւանդ-
ները իրենցմէ մխիթարութիւն կը խըն-
դրեն: Իրենք են որ յանուն Մատուծոյ՝
հօգորագունից ճշմարտութիւնը կը քա-
րողեն, տգէտները կը կրթեն, հարրս-
տահարեալները կը պաշտպանեն, թըշ-
նամիները կը հաշտեցընեն. ամպիօնէն
ընդհանրական պարտքերնիս մեզի կը
քարողեն, և խոստովանարանէն ալ՝
նոյն ընդհանուր պարտքերը առանձին
խրաքանչիւրին թերութեանը համե-
մատ կը սորվեցընեն. քահանայք զմեզ
մկրտելովնիս եղբայրակից ըրին քրիս-
տոնէից, և քահանայք պիտի ըլլան մեր
մահուան անկողնոյն քով կեցողները,
և նաև մեռնելնէս վերջն ալ իրենք պի-
տի օրհնեն ու օգնեն մեզի: Ի՞նչ մե-
ծարեւի մարդիկ, ի՞նչ երկնային պաշ-
տօն է իրենցը:

Կ

Կանայք :

Կանանց պարտական ենք մեր կեանքը , մեր առաջին սնունդը , և ընդունած առաջին գորովալիւր խնամքը . պէտք չէ ուրեմն որ իրենց հետ ամենայն ակնածութեամբ վարուինք :

Իրենք կազմուածքով և վարժութեամբ մեզմէ աւելի փափուկ են . աւելի ծանր հիւանդութիւններ կը քաշեն , և կենաց փոփոխութիւննին քիչ է . մարդս իրենց բնական պաշտպանն է . ինչպէս վատ է ան մարդը որ զիրենք կը հարստահարէ , կը տրտմեցընէ և պէտք եղած ակնածութիւնն ու խնամքը չընէր :

Կանայք իրենց զգայուն սրտովը ամէն խեղճութեանց վրայ կը գթան ու կը կարեկցին . զիրենք միշտ հիւանդներու քով կը տեսնանք , և խեղճ հիւանդը գրեթէ ամենեւին չարչարուիլ երբ կին մը ըլլայ քովը : Այն ան անզգամին որ կանանց փափուկ սրտովը զեղծանելով իրենց խղճմտանաց ծան-

րու թեանն և անպատու ու թեանց պատ-
ճառ կ'ըլլայ :

Ո՛վ կայ որ իր մօրը և քոյրերուն վը-
րայ մտածէ ու սիրտը չշարժի . ուրիշ
կանանց հետ ալ վարուելու ժամանակ
զիրենք դարձեալ մտքերնիդ բերէք և
յիշեցէք՝ որ եթէ մէկը իրենց առաքի-
նու թեանը դէմ անիրաւած ըլլար և
կամ զիրենք թշնամանէր, ի՞նչ զգաց-
մունք կ'ունենայիք :

Մտքերնիդ պահեցէք ուրեմն, ո՛վ
պատանեակք, որ կանանց հետ վարուե-
լու կերպերնէդ կը կախուի ձեր երջան-
կու թեան և ամենադառն թշուառու
թեան վայրկեանները և ամբողջ ձեր
կենաց սաստիկ տանջանքները : Ո՛վ պա-
տանեակք, որ կու գայ որ աւելի լաւ ու
պայծառ կ'ըմբռնէք ըսածս և ինձի երա-
ւանք ունի եղեր կ'ըսէք :

ԿԱ.

Նախորդք և յաջորդք :

Ազնուական ցեղէ իջնալուդ համար
կ'ուռիս կը հպարտանաս . անմիտ, մի-
թէ հարցդ առաքինու թիւնը քուկդ է .

և ինչպէս կրնաս ուրիշին բանին վրայ
պարծիլ. քու նախորդներդ պատերազմ
ներու մէջ արիացան, խոհեմ գտնուե-
ցան իրենց խորհրդոցը մէջ, իրենց պաշ-
տօններովը հասարակաց բարեաց պատ-
ճառ եղան և ամէնքը զիրենք կը մեծա-
րէին. պատուէ ուրեմն անոնց յիշատա-
կը և մի պահանջեր որ յարգեն ու մե-
ծարեն՝ ի քեզ քու պապերուդ ունեցած
առաքինութիւնները՝ յորոց դու զուրկ
ես: Առաքինութիւնը արեան հետ վե-
րաբերութիւն չունի. երևելի տնէ՞ ես,
ուրեմն մարդիկ քեզմէ աւելի գիտու-
թիւն և աւելի բարեսրտութիւն կը պա-
հանջեն. թէ որ չունենաս՝ իրաւամբ
կ'արհամարհեն. Մարդս ե՞տը զե՞տը կը
պատուէ:

Եւ այց երախտագէտ պէտք է ըլլանք
աս կենաց ճամբուն մէջ մեզմէ առաջ
գացողներուն, իրենց մեզի ըրած այն-
չափ բարեացը համար, և ոչ թէ քանի
մը մնասուց համար անիծենք. և իրաւ-
ցրնէ, պատմութեանց մէջ մեր նա-
խորդներուն զեղծմունքները, ամօթա-
լի գործքերն ու յանցանքները կը տես-
նենք. շատ մը նախապաշարմունքներ
ունէին իրենք՝ որ մենք չունինք, իրենց
մէ աւելի տեղեկութիւն ու գիտութիւն

ստացած ենք, և շատ աւելի հանգիստ
ենք: Փառք Նստուծոյ և փառք իրեն
Նախախնամութեանը որ հետզհետե
կը զօրացնէ զմարդիկ արդարութեամբ
և ճշմարտութեամբ յառաջագիմելու.
Քայց ասով պէտք չէ որ մեր նախորդնե
րը արհամարհենք: Ի՞նչ պիտի ընէինք
մենք՝ թէ որ իրենք այնչափ լաւ գիւ
տեր ու արուեստներ գտած՝ և իրենց
աշխատութեամբը զանոնք մեզի սորվե
ցուցած չըլլային. այնչափ մեծաշէն քա
ղաքներ, այնչափ գետերուն ըրած վնաս
սը խափանելու համար եղած աշխատու
թիւններ, այնչափ ճամբաներ, զուար
ճութեան համար թէատրոններ, պաշտ
պանութեան համար բերդեր, եկեղե
ցիներ, վարժարաններ, օրէնքներ, վար
դապետութիւններ՝ բոլորն ալ իրենցմէ
ունեցեր ենք, ուրեմն միշտ պէտք է
չնորհակալ ըլլանք:

Շնորհակալ ըլլանք և գործքով ալ
նոյնը մեր յաջորդներուն սորվեցրնենք,
որչափ կրնանք մեր կողմանէ գովելով
ու մեծարելով մեր ծերերուն մեզի ը
րած բարերարութիւնները. և իրաւցը
նէ, վասն զի մարդիկ ամէնքը մէկէն
որ և իցէ ժամանակ ալ ապրած ըլլան՝
բոլորը մէկ ընտանիք մը կը կազմեն.

ուրեմն երբ բանի գործքի մը ձեռք կը
զարնենք, պտուղը մենք պիտի չքաղենք
ըսելով՝ պէտք չէ լքանինք. մեր յա-
ջորդները պտուղը կը վայելեն կ'օգ-
տուին ու զմեզ կ'օրհնեն: Այ տնկած
ձիթենիս իմ մեռնելէս վերջը պիտի
սկսի պտուղ տալ, հոգ չէ. ես ալ իմ
չտնկած ծառերէս շատին պտուղը կը
վայելեմ. տղոց դաստիարակութիւնը
նելով իրենց սորվեցուցած բաներս գի-
տեմ որ ապագայից օգտին համար է,
մնաս չունի. բաւական է որ իրենք օգ-
տուին, ու անոր համար սիրով յանձն
կ'առնեմ զիրենք կրթել. ապագայք ալ
իմ եղբարքս են:

Միշտ ապագային վրայ յուսալնիս
մարդկանց ներկայ ապերախտութեանը
մէջ՝ մեծ մխիթարութիւն է մեզի. մա-
նաւանդ երբ կը տեսնենք որ մեր բարի
խորհուրդները չեն յաջողիր և մեր գո-
վելի գիտաւորութիւնները չարախօսու-
թեան նիւթ կ'ըլլան: Նարի գործք մը
ոչ երբէք կը կորսուի. թէ որ այսօր մե-
զի շահ մը չբերեր, ժամանակով կըր-
նայ օգտակար ըլլալ ուրիշներուն որք
են մեր որդիքն ու մեր եղբարքը:

ԿԲ

Սևաստոպոլսի :

Ի՞նչ, անասնոց համար ալ պարտքեր
պիտի ունենանք : Վայց ի՞նչպէս . միթէ
զիրենք ալ Վստուած չստեղծե՞ց, և Վս-
տուածաշնչին մէջ չե՞նք կարդար թէ
Արդարը իր անասուններուն վրայ գո-
հանե՞նայ : Վստուած մարդուս անասնոց
վրայ իշխանութի տալուն միջոց, յայտ-
նի է թէ զանոնք ՚ի զուր չարչարելու
հրաման չտուաւ . ուրեմն գէշ կ'ընես
երբ քեզի ծառայող կենդանիները չես
խնամեր, երբ չափէն աւելի զիրենք կը
բեռնաւորես, և չար ևս՝ երբ կը տան-
ջես . և որովհետև որ և իցէ մեղք իրեն
պատիժն հետը ունի, անոր համար ո՛վ
որ անգթութեամբ կը վարուի իր անա-
սուններուն հետ՝ սիրտը կը խստացընէ
և մարդկանց հետ ալ անգութ կ'ըլլայ :
Ո՛վ պատանեակ, թերևս դեռ քու ա-
տենդ հասած չէ նմանեացդ օգտակար
ըլլալու . գոնէ կենդանեաց ու անասնոց
օգտակար եղիր, և ասով սկըսէ բարե-
գործութեան ախորժին համն առնել :

Մատոնիկը գառն մը տեսաւ որ մօլորեր
էր, առաւ փարախը տարաւ. կաղացած
չուն մը տեսաւ ու բժշկեց. տեսաւ դար-
ձեալ որ անգու թին մէկը կ'ուզէր իր
տանը կամարակապին մէջ դրուած ծի-
ծառնիկի մը բոյնը աւրել՝ ու արգիլեց.
Եւ ձմեռը հաց կը փշրէր քաղցած ճընձ-
ղուկներու: Մ'անաւանդ թէ Մատոնի-
կը չուզէր ինչուան անչունչ բաներու
ալ մնաս մը ընել. հոգով խնամքով կը
պահպանէ գեղեցիկ բոյսերը, սիրուն
նկարներն՝ և չուզէր որ բնաւ մէկը զա-
նոնք խանգարէ. թողնեալ մեխակ մը
տեսաւ՝ մէկէն վազեց ջուր տուաւ. մե-
խակը ոգի առաւ կենդանացաւ ու Մա-
տոնիկը ուրախու թեամբ լեցուեցաւ՝ մը
տածելով որ ամէն տեսնող պիտի հաւ-
նէր ու շնորհակալ պիտի ըլլար Մատո-
նիկի:

ԿԳ

Սևիակիսն յիշակ:

Ինչուան հիմա, ո՛վ պատանեակք,
ունէիք ձեր վրայ մտածողներ ու զձեզ
հոգացողներ. բայց քիչ ատենէն պէտք

է որ դուք ալ ձեզի առանձին վիճակ մը
ընտրէք, որ օգտակար ըլլայ թէ ձեզի
և թէ ընկերութեան: Աս ընտրութե-
նէս կը կախուի մեծաւ մասամբ ձեր ա-
պագայ երջանկութիւնը, ուստի պէտք
է խոհեմութեամբ շարժիլ ու չչտապել:
Վասն ամէն բանէ առաջ յանձնեցէք
զձեզ Աստուծոյ որ է պատճառ ամենայն
լուսաւորութեան մտաց, որպէս զի ինքն
իր կամօքը ինչ որ ձեր բարին է՝ յայտնէ
ձեզի: Աստուծմէ վերջը ձեր ծնողացն
ու իննամակալուացը խորհուրդ հարցու-
ցէք, որ փորձով աշխարհքիս ինչ ըլլա-
լը գիտեն. գիտեն դարձեալ ձեր կա-
տարելութիւններն ու յարմարութիւն-
ները, ձեր բնաւորութիւնն ու բերմուն-
քը. բարեսրտութեամբ և զձեզ սիրել-
նուն պատճառաւ չեն ուզեր զձեզ բռ-
նադատել, այլ միայն ձեր սրտին յօժա-
րութիւնները կ'ուզեն ուղղել. կրնան
խորհուրդ մը տալ, ձեր առջևը կը դնեն
այլ և այլ վիճակաց օգուտներն ու վնաս-
ները: Արբեմն կրնայ ձեզի անանկ մը
երևնալ որ ըսածնին ծուռ է, վասն զի
տուած խորհուրդնին ձեր ուզածը չէ.
բայց պէտք է հաւտաք որ պատանեկու-
թիւնն ու երիտասարդութիւնը ամէն
բան հասունացեալ հասակի մարդկանց

տեսածէն տարբեր կը տեսնէ . երիտա-
սարդու թիւնը աչքի երեւցած վարդերը
միայն կը տեսնէ , և չտեսներ ծածկուած
փուշերը :

ԿԴ

Չափաւորութիւն յընտրութեան : — Կա-
րողութենէդ վեր բանի ձեռք մի զար-
ներ , կ'ըսէ առակը . ոմանք կը ջանան
ամենայն ոգւով որ իրենց ծնողացը վի-
ճակէն աւելի վեր բարձրանան , և ա-
սով կը կարծեն որ կատարելութեան
կը դիմեն . բայց սուտ է ու խաբէական .
վասն զի՝ ինչ կ'ըսես ան տղուն որ կ'ու-
զէ բեռնակրի մը բեռը իր վրայ առնել .
արդեօք ուժովսա՞յ կ'ուզէ . չէ , ինչու
որ բեռան ծանրութեանը տակ կը ճըզ-
մուի . այսպէս է նաև անիկայ որ իր կա-
րողութենէն վեր վիճակի մը կը փա-
փաքի :

Ո՛վ պատանեակք , մի ամրջնաք ձեր
հօրը արհեստին ետեւէն ըլլալու . լաւ
է բարի կօշկակար մը՝ քան թէ գէշ բը-
ժիշկ մը : Ոմանք որ կրնային գեղի լաւ
վարձուոր մը ըլլալ , կ'ուզեն քահանայ
ըլլալ : Ո՛վ որ իր հօրը արուեստէն կ'ա-

մը չնայ՝ այնպիսին բարի մարդ չէ : Անարգահան արուեստը ճշն է, կ'ըսեն ոմանք, կ'ուսուցնան անհանձն Վիճակ ճշ ընտրել : Որն է անարգական արուեստը . անզգամիներ : Որն է ազնուական արուեստը . առաքինի ու քաղաքակիրթ մարդուներ : Մեղի կը յարգեմ իմ դրացի հիւսս, քան թէ միլիոններու տէր եղող անհարուստը՝ որ ուտելէն, խմելէն ու յօրանջելէն դուրս ուրիշ բան չգիտեր . պատուաւոր վիճակը ան է՝ որով մէկը կրնայ ինքզինքը լաւ պահպանել, կատարելագործել և անով նաև ուրիշներուն ալ օգտակար ըլլալ . մարդուս անարգանք ու նախատինք եղող արուեստները՝ միայն անօգուտ ու անվայել արուեստներն են :

Ըն իմ տանս մօտը բնակող միջակ վաճառական Սարգիսը որ գրեթէ միշտ առածներով ու օրինակներով կը խօսի, քովը կանչեց անցեալ իրիկուն իր 20-22 տարուան տղան՝ թէ որ չեմ սխալիր, ու ըսաւ . « Մերեւի Յակօբիկս, երբոր ես քու տարիքդ էի, հայրս պզտի կրպակ մը ինձի յանձնեց, Գնահ ու Աստուած հեղի ըլլայ ըսելով . ես ան ատեն սկսայ Գեղեցիկ Ժապաւէնէր ու ասիւնի Գասուսանէնէնէր ունիմ պոռալով ասդին անդին

քալել. քիչ բայց ստէպ ստէպ ըրած
վաստրկովս գոհ կ'ըլլայի, վասն զի ալ
լաւ է քիչ՝ քան թէ բնաւ, և անով
միայն մարդուս քսակը կրնայ լեցուիլ.
և որչափ որ աժան կը ծախսէի, այնչափ
գնողները կը շատնային, և կը ջանայի
միանգամայն որ ծախսած բաներս լաւ
ու ազնիւ ըլլան. այսպէս ահա առջի
ոսկին վաստրկեցայ որ ամենէն դժուար
բանն է. վասն զի բանը սկսիլն է, սկը-
սելէն ետքը ամէն բան աւելի դիւրաւ
առաջ կ'երթայ. և իրաւցընէ, կամաց
կամաց ոսկիներս շատցան, բամբակի
գործարան մը բացի՝ որ ան ալ յաջող
գնաց, բայց դժբաղդաբար՝ ինչպէս գի-
տես՝ երկու տարի է որ կրակը ամէն
բաներնիս այրեց. ահաւասիկ ուրեմն,
որդեակ, դու հիմա ստիպուած ես որ
նորէն դու քեզմէ բաղդդ շինել նայիս.
զքեզ կամաւ փորձ ու առաքինի մարդու
մը քով դրի. արդէն աչքդ ու ձեռքդ
վարժած է ամէն բան լաւ ու շուտ ը-
նելու, սորված ես հնազանդիլ որպէս
զի գիտնաս լաւ ալ հրամայել. թէ որ
իմ արուեստս շարունակես, արդէն խա-
նու թիւն ամէն գործիքներն ունիս, ինչ-
պէս դարձեալ ինձմէ գնողներն ու գոր-
ծակիցներս, և անոնց հետ մէկտեղ

քու հօրդ վրայ եղած համարմունքը •
հիմա ուրեմն որ ծերու թեանս նշաննե-
րէն կ'իմանամ որ մահուան պէտք է
պատրաստուիմ՝ և դու իմ տեղս պիտի
յաջորդես, ահաւասիկ իմ անձիս փոր-
ձովը աս խրատներս քեզի կու տամ :

Ս'իշտ գիտցիր որ ասն ճշ խոհանէրոցը
որչա՛տ պղտիէ ըլլայ՝ այնչա՛տ աւելի ասնը
ձե՛ծ է՝ ըլլայ : Նանի մը վրայ անհող չըլ-
լալ ոչինչ է ըսելով . ո՛վ որ ձէն դահէհանը
էքրե՛ս ոչինչ Բան է՝ արհամարհէ՛ ինչը այնչա՛տ
ալ չա՛ծեր . դահէհան դահէհանի քով գալով
ասի՛ ճշ էր ճեանայ, ասոնք իմ հօրս առած-
ներն են որ ստէպ ստէպ ինձի կը կըրկ-
նէր : Ն'րուեստ մը չփոխել առանց մե՛ծ
հարկեցուցիչ պատճառի մը . երբ որ քար
ճշ էր շարժի է՛նայ՝ քարահոյսն ալ էր թլլէ
է՛րբայ . և առած է դարձեալ, թէ՛
Որչա՛տ քո՛րիսմանս՝ այնչա՛տ անհմանս : Ն'յ-
սօր ոստայնանկ, վաղը դարբին, միւս
օր ալ անարուեստ թափառական մը կը
դառնաս : Վարձեալ նաև որչափ կրնաս
զգուշանաս ստէպ ստէպ տուն փոխե-
լէն . վասն զի երեք անգամ տուն փո-
խելով, մէկ տարուան մը տանգ վարձքը
հատուցած կ'ըլլաս :

Ն'նկատար գիտու թեամբ բնաւ բանի
գործքի ձեռք չդարնես . և թէ որ բանի

մը ձեռք զարնել ուզենաս, նայէ մեծէն
չսկըսիս՝ այլ պզտիկէն, թէ որ չես ուզեր
որ ետքը նեղը մտնես. ասոր համար
միշտ ծախքդ աւելի բարձր սեպէ ու
ծախածդ աւելի ցած. և մաս մ' ալ
դժբաղդու թեանց համար պահէ: Այտք
չէ կրակին վրայ շատ միս դնել, վասն
զի գիտես որ ո՛վ որ երէտ նապաստակ մէ-
տեղ կ'ուզէ որսալ՝ երէտ քն ալ կը քակցընէ.
չափդ գիտցիր, և սկսածդ շարունակէ:
Ա՛խ խաբեր ինքզինքդ մեծամեծ շահե-
րու յուսով, և գիտցիր որ եթէ անունդ
կոտրելով բան մը վաստըկիս, անիկայ
շահ չէ՝ այլ կորուստ է. ընդհակառակն
ով որ համբաւ կը ստանայ՝ անգին հա-
րրատութիւն կը ստանայ. տեսեր եմ
միշտ որ ինչ որ սատանան կու տայ, սա-
տանան կ'առնէ: Ա՛ աճառականութեան
մէջ պէտք չէ վտանգի մէջ դնել ապրե-
լու համար անհրաժեշտ հարկաւոր ե-
ղածը: Այնչայնպիսի ամենակարեւոր
բաներու վրայ պառկեցընես քու ըս-
տակդ, որոնց գործածութիւնը ոչ եր-
բէք պակաս. նիւթն ընտրէ ու նայէ որ
առաջին կարգի ըլլայ. ժամանակին մը-
տածէ ինչ որ քեզի ատենօք հարկաւոր
կրնայ ըլլալ. վասն զի բան մը նախապե-
սանելով ընելը՝ գործողութիւնը կէս ընել

ըսել է : Սէ որ ատենին գնես՝ շահա-
ւոր կ'ելլես . նոյնպէս թէ որ ստակը
ձեռքդ գնելու ըլլաս , տարակոյս չկայ որ
աժան կը գնես . զգոյշ եղիր պարտքով
բան ծախելէն . ալ լաւ է որ քիչ վաստը-
կիս՝ բայց վաստը կաժդ մէկէն գրպանդ
մտնայ : Անելի զգոյշ կեցիր պարտք ը-
նելէն , միտքդ բերելով որ պարտատէր-
ներուն յիշողութիւնը սուր է , և ան
միջոցին որ դուն բոլորովին մոռցած ես ,
կը տեսնես որ իրենք պարտքդ միտքդ
կը ձգեն . մի նմանիր այնպիսեաց որ երբ
վճարելուն ձայնը կը լսեն՝ ձեռքերնին
գրպաննուն մէջ կը գօսանայ . մենք վա-
ճառականքս առած մը ունինք մէջեր-
նիս , թէ՛ վաստընդ կ'ելլէ , ո՛վ որ շահ
կը վճարէ :

Ա՛յ ճառակիցներուդ և անոնց որ սո-
վորութիւն ունին միշտ քեզմէ գնելու՝
յարգը լաւ ճանչցիր . անանկ որ եթէ
հարկ ըլլայ իրենց համար զո՛հ մը ընե-
լու՝ սիրով յանձն առ , ջանալով միշտ
բանը յարմարցընել :

Անձամբ ըրած գործողութիւնդ միշտ
լաւ կ'ըլլայ : Անճամբ եղած բան ճշ երեւ-
կոգոյ ըրածին քեզ կը բռնէ . ջանա մարդ-
կային նկատմունքի համար բան մը չը-
նել : Սէ որ մէկու մը աշխատութիւն

մը յանձներ ես՝ աչքդ միշտ վրան ըլլայ •
վարձուորներուդ ու գործաւորներուդ
վրայ միշտ հսկէ, բայց կասկածոտ չըլ-
լաս • ամէն բան մէկ անձի մը վրայ մի
ծանրաբեռներ, վասն զի ամէնն ալ ան-
կատար կ'ըլլան : Մուտքդ, ելքդ և
տուածներդ ճշգիւ ամէն անգամ նշա-
նակէ • և դարձեալ կը յանձնեմ որ բա-
նայի տակ պահես ունեցածդ • բանա-
լին խաղաղութեան մեծ բարեկամն է •
վասն զի Ո՛վ որ լաւ էր գոցէ, լաւ ալ էր
գոցէ : Ամէն օր հաշիւդ ըրէ • թէ որ
շաբթուն վերջը բան մը աւելնայ՝ մէկդի
դիր, մտածելով որ ամէն օր նոյնպէս
յաջող չերթար :

Վերջապէս աս ալ քեզի կ'ուզեմ ը-
սել, որ գրքի մը մէջ կարդացեր եմ • թէ՛
Տարդս երջանիչ ըլլալու համար պէտք է շէշ
Ռեյնի Ռէլ կենայ, և շատ քիչ չէրիս :

ԿԵ

Գոհ ըլլալ իր սեփական միջակիս վրայ :

Վիճակ մը ընտրելէդ վերջը ջանա
որ գոհ ըլլաս, որն որ Ա • Գագագիւնէրդ և
Բ • Երեւակայութեանդ չափաւորելով կ'ըլ-
լայ :

Գինով մը որչափ խմէ այնչափ աւելի
կը ծարուի . այսպէս ալ մեր փափաք-
ները : Այսօր հաճոյք մը կը կատարես ,
վաղը երկու նոր հաճոյք ալ վրան կ'ա-
ւելնան , վերջը չորս . բայց մեր հաճոյք-
ները կատարելու համար ուզելը միայն
բաւական չէ՝ այլ միջոցներ ալ սկստք է :
Աւելին անք ապրիլ թէ որ մեր իղձերն
ու հաճոյքները կատարելու մէջ չափա-
ւոր ըլլանք . մեր իղձերը կատարելու
միջոցները մեր ձեռքը չեն , բայց կամ-
քերնիս չափաւորելը մեր ձեռքն է :
Ո՛վ որ շատ կտաս գնելու կարողութիւն
նի՛ ըող կարճ շապիկ հագնի . իսկ ո՛վ որ
ուզածը չկրնար ընել , թող կրցածին
միայն փափաքի : Արչափ քիչ փափաք
ունենաս , այնչափ աւելի քիչ բան պա-
կաս կ'ըլլայ քեզի : Ս . Քրանկիսկոս
Սալեզեան Գիւ Բանի կը գագագի՛մ , կ'ը-
սէր , եւ ան Գիւնի ալ Գիւ կը գագագի՛մ :

Աոյնը ես ալ քեզի ուզեցի կրկնել .
վասն զի քններ տեսեր եմ որ մարդուս
նեղու թեանցն ու անհանգստու թեանը
և ուրիշներուն հետ զժտելու գլխաւոր
արմատը՝ իր սեպհական վիճակին մէջ
գոհ չըլլալն ու աւելին ստանալու փա-
փաքն է :

Ոմանք՝ Բասազան եղածին չափ չունի՛մ ,

կ'ըսեն . իրան է արդեօք . բայց գիտէք
թէ որչափ քիչ բանով գոհ կ'ըլլայ քիչ
բանի փափաքողը : Վեղացին՝ պատառ
մը ե գիտատացորենով , լեւրնցին՝ քանի մը
կտոր գետնախնձորով , կամ բուռն մը
շաղանակով կը կշտանայ ու երկիրը կը
մշակէ . այսպիսեաց համար օրը քանի
մը փող բաւական է , ուր ընդհակա
ռակն փափկակեաց հարուստի մը հա
մար հարիւր , երկուհարիւր դահեկանն
ալ քիչ է :

Որչափ քիչ կարօտութիւն ունենաք՝
այնչափ աւելի աղատ կ'ըլլաք . ասով
չեմ ուզեր ըսել որ զրկէք զձեզ որ և ի
ցէ անմեղ զուարճութիւններէ , և հան
գրստութիւննիդ չմտածէք . այլ թէ՛
աղքատ ծներ էք կամ ետքէն աղքա
տացեր էք , ասոր վրայ չտրտմիք . և ՚ի
վեր քան զամենայն , մի նմանիք անոնց
որ ուրիշներուն գթութիւնը շարժելու
համար , զիրենք կը նուաստացրնեն ու
խեղճ ողորմելի կը ձեւացրնեն : Եւ աս
աւելի անոյշ է մարդուս իրեն քրտամբը
վաստրկած կտոր մը հացը ընտանեացը
հետ մէկտեղ ուտելով , քան մեծահա
րուստ խնջոյք մը երբ ցածութեամբ ,
երեսպաշտութեամբ կամ ստելով մաս
նակից կ'ըլլուի սեղանին :

49

Աղէկ ապրելու գլխաւոր արդելքը
լաւագոյն ապրելու փափաքն է . ասիկայ
միտքդ պահէ , և վիճակիդ մէջ գոհ ըլ-
լալու համար երեւակայու թիւնդ սան-
ձէ . այսինքն , օդուն մէջ բերդեր մի շի-
ներ , և ուրիշին վիճակը միշտ մի լաւա-
գոյն կարծեր քան զքուկինդ :

Մըուետաւորը՝ Ա՛հ , երանի՛ թէ ես
չէնոր եղած ըլլայի ըսելով՝ կը հառաչէ .
սաւանց աշխատելու լաւ ճը կը հագուէի կը
զարդարուէի , ճամբորդութիւններ կ'ընէի և
պատուոյ կը հասնէի : Մնդ հակառակն զի-
նուորն ալ՝ երանի՛ արուեստատերներուն ,
կ'ըսէ , որոնք արուեստներն կէցած՝ երէնց բա-
նին գործքին կը նային , վասարչած հայերնին
երէնց արդը հետ նստած կ'ուսեն , սաւանց
Թճուհի կամ հրացանի վախ քաշելու :

Մյսպէս նաև աշխարհականը երջա-
նիկ կը սեպէ քահանային վիճակը , վա-
ճառականը՝ փաստաբանինը իրմէ աւել-
լի բախտաւոր կը կարծէ , և գեղացին՝
հիւսանը :

Մայց թէ որ յանկարծ մէկը առա-
ջարկելու ըլլայ որ իրենց համար նա-

խանձելի եղած ուրիշ վիճակի մը հետ
փոխեն ունեցած վիճակնին, այնչափ
Բայց, այնչափ Բէ որներ կը ծամծրմեն՝
որ վերջապէս նորէն իրենց վիճակին
մէջ կ'ուզեն մնալ. իսկ թէ որ փոխեն
ալ, քիչ կը տուէ. վասն զի գոհ չըլլա-
լով իրենց նոր ընտրած վիճակին վրայ՝
նորէն առջինին կը փափաքին :

Ո՛հ, Բայց Բէ որ հարուստը ըլլայի. ա-
զէկ է. բայց հարստութիւն ու երջան-
կութիւն ըսելը արդեօք մէկ կը կար-
ծես. ինչպէս ինքզինքդ կը խաբես. ինչ
վիշտեր, ինչ գլխու ցաւեր չեն քաշեր
հարուստները : Իրաւ է, համեղ ու ազ-
նիւ բաներ կ'ուտեն, բայց աշխատաւոր
մը շատ աւելի ախորժ կը զգայ՝ քան թէ
իրենք. կակուղ անկողիններու վրայ կը
պառկին, բայց քուններնին անհանգիստ
քուն մըն է. շատ մարդիկ իրենցմէ կախ-
մունք ունին, բայց իրենք ալ ուրիշնե-
րէն, վասն զի ամէն տանեաց վրայ ալ
պատուհան կայ. պատշաճը նայինք ը-
սելով և տեսակ տեսակ այնգագլխու-
թիւններ ընել ուզելով ինչ տհաճու-
թիւններ չեն կրեր՝ որոնցմէ աղքատք
ազատ են բոլորովին. և որովհետեւ վրա-
նին նայող շատ աչք կայ, անոր համար
ազատութիւննին ալ աւելի քիչ է. և

վերջապէս, որովհետեւ շատ փափաքներ
սրտերնուն մէջ կը սնուցանեն, ուստի
երջանկութիւննին ալ այնչափ աւելի
նուազ է: Անչ համեմատութիւն ու
նին իրենց անուշահոտ սենեակները,
չքեղ գորգերը և այն մեծագնի կահ-
կարասիքը՝ երկնքին պայծառութեանը,
ծիծաղախիտ դաշտերուն, ծաղկանց
պերճութեանը հետ, որ հասարակաց
մարդկութեան համար պատրաստած է
Ղստուած: Այն արդեօք իրենց թան-
գարանին մէջ նկար մը որ զուարթ ա-
ռաւօտու մը, աստեղազարդ գիշերոյ մը
հետ, ծովափանց մօտ կամ բլուրներու
ետեէն եղած արեւմուտքի մը տեսարա-
նին հետ կարենայ բաղդատուիլ:

Ղստնք են ան դանձերն ու հաճոյք-
ները որ Ղստուած աշխատասէր մարդ-
կանց տուաւ որ յարգեն: Ղայց պալատ-
ներու մէջ բունեալ սարսափելի հրէշ
մըն ալ կայ՝ որ է ձանձրութիւնը, զոր
աղքատը չգիտեր: Ասէր էք երբէք քաղ-
քի մը խղղուկ փողոցներուն մէջ անանկ
ուրախութեան երգերու ձայներ, ինչ-
պէս որ կը լսուին լճերու վրայ, դաշտե-
րու մէջ, այգեկութի և հունձքի ժա-
մանակ, հիւսան կամ ասուեգործի մը
խանութին մէջ: Տեսէր էք երբէք հա-

րուսաներուն վրայ՝ արուեստաւորաց ունեցած ճշմարիտ ուրախութիւնն ու անկեղծ զուարթութիւնը. իսկ երբ իրիկունը օրուան ինչպէս անցուցած ըլլալնին կը մտածեն, ինչ կարծէք, որուն սիրտը աւելի գոհ կ'ըլլայ. արդեօք գեղացիինը, որ թէ իրեն և թէ ուրիշներուն բարեացը համար աշխատած ըլլալը կը ճանչնայ, թէ արդեօք հարուստինը՝ որ բոլոր ժամանակը դատարկութեամբ անցուց. և կենաց վերջին վայրկենին որէն արդեօք աւելի ծանր հաշիւ մը պիտի պահանջուի :

Վերջապէս, ամէն փայտ իրեն որդնունի, ամէն դուռն իրեն հարկանելիքը, ամէն կշռորդ իրեն հակաքարշը. ամէն վիճակ ալ իրեն թշուառութիւնները : Բայց առած է թէ Ամէն Տարդ իրեն որդնունի ¹ դիւրաւ կը զգայ, իսկ որիշներուն որնառաւիճանն անգամ չզգար : Իմ առաքինի և քաղաքակիրթ բարեկամներէս մէկը (Մղեքսանդր Մանցօնի) կ'ըսէ. «Մարդս, քանի որ այս աշխարհքիս վրայ է, հիւանդ մըն է՝ որ աւելի կամ նուազ անհանգիստ անկողնի մը վրայ կ'ընկողմանի, և չորս կողմը ուրիշ անկողիններ ալ կը տեսնէ՝ բարեյարդար

1 ՏՃ. ՆՄԱԸԸ :

և արտաքուստ ուղղեալ, և կը կարծէ որ հոն աւելի հանգիստ կ'ընկողմանուի. բայց անկողինը փոխել տալէն ետեւ, հազիւ թէ նոր անկողնոյն վրայ կը պառկեցընեն, կը սկսի նեղուիլ ու փուշեր խոթելու պէս մարմինը կը տանջուի. վերջապէս, գրեթէ առջի ջուրը կը դառնայ. ասոր համար աւելի պէտք է բարիք ընել մտածենք՝ քան թէ բարեպէս ապրիլ, որով միայն կրնանք նաև լաւագոյն ապրիլ. ։

Մտքերնիդ որոշ դրէք որ ճշմարիտ երջանկութիւն այս աշխարհքիս մէջ չկայ. լաւագոյն կ'ապրի ո՛վ որ քիչ մեղք կը գործէ, և որչափ բարիքներ երազենք, այնչափ ալ չենք գտնար բան մը որ մեր սիրտը գոհ ընէ. և աս բնական բան է, վասն զի աշխարհքս մեր տունը չէ: ()տար երկիրներու մէջ թափառող ճանապարհորդ մը որչափ ալ հանգիստ ըլլայ՝ միշտ իրեն տան վառարանին կը փափաքի, և այն սենեկին ուր որ աւելի հաստատուն խաղաղութիւն մը կրնայ գտնել. մենք ալ այս հաստատուն հանգիստը պիտի վայելենք երբ մեր հայրենիքը հասնինք, որ միայն առաքինի ու քաղաքակիրթ մարդու պէս ապրելով ձեռք կը ձգուի: ։

ԿԷ

Կատարելոյ զպարտու սեփական վիճակի :

Չէ, ես ինծմէ աւելի հարուստին վրայ չեմ նախանձիր, մանաւանդ երբ կը տեսնեմ քան զիս աղքատ եղողներն և աւելի խեղճութեամբ ապրողները . ես ճարտարութեամբս ու ջանքովս իմ գործողութիւններս անանկ վիճակի մը մէջ դրեր եմ, որ առանց մտամտութի հանգիստ կարենամ ապրիլ . լաւագոյն վիճակի մը փափաքելէս առաջ պէտք է ես ինծի հարցընեմ . Այդ վիճակը արդեօք ի՞մ հարողովբեհէս վեր չէ : — Արդեօք հրեանմ տեսնու աւելի երջանիչ և աւելի առաջնիւ ըլլալ : || Իճակ մը ընտրելէն առաջ պէտք է ասոնք մտածել . իսկ ընտրելէն վերջը նոյն վիճակին պարտքերը լաւ կերպով ու հաստատութեամբ կատարելու է : Թող երթան կորսուին մեզմէ այն գարշելի երկու ախտերը ծոռութիւնն ու Անհոգութիւնը . Կուլութիւնը՝ որ կ'ուզէ միշտ բամբակներու մէջ պլլուիլ և երբէք բանի մը ձեռք չղարներ . և Լ'նհոգութիւնն՝ որ ամէն

բան ձգձրդելով կ'ընէ : Ման մը որ պի-
տի ընենք՝ ուզելով ընենք . այն ձին որ
առանց մտրակի չվազեր՝ չկրնար ալ աս-
պարիզին մէջ յաղթել . և թէ որ շունը
դանդաղ շարժի՝ եղջերուն կը փախչի :

Համոզուինք ուրեմն որ ամէն վիճա-
կի մէջ ալ կրնանք բարիք գործել : Հա-
րուստ ես . գնա՛ առատաձեռնու թեամբ
արուեստաւորներու նպաստէ , առաքի-
նիները վարձատրէ , կարօտելոց օգնէ :
Վաճառակա՛ն ես . դաշնադրու թեանցդ
մէջ կարգաւորեալ եղիր , վճարքիդ մէջ
հաւատարիմ , ընկերակիցներուդ հետ
առատաձեռնու թեամբ վարուէ , գոր-
ծաւորներուդ ճիշդ վճարէ , վաճառա-
կացոյդ օգնէ , և մի խորշիւր այնպիսի աշ-
խատու թեանց ձեռք զարնելէն՝ որոնց
կատարմանը համար շատ մարդիկ գոր-
ծածել հարկ կ'ըլլայ : Արուեստաւոր
ես . ջանա որ արուեստակցացդ մէջ ըն-
տիրներէն մէկն ըլլաս . ձեռքէդ եկա-
ծին չափ արուեստդ կատարելագործէ ,
առանց ականջ կախելու այնպիսեաց որ
յառաջադիմել չուզենուն պատճառաւ՝
Մենք այսպէս տեսեր ենք , կ'ըսեն :
Օհնու՛ր ես . ամենեին բռնութիւն
մի բանեցրներ , հասարակաց հանգըս-
տութիւնն ու ապահովութիւնը պաշտ-

պանէ, առանց քու և ուրիշներուն բարքն
ապականելու : Վիտնական էս . օգտա-
կար ճշմարտութիւնները տարածէ, վի-
ճակակիցներդ սիրէ, շատերու օգնու-
թեան հասիր, միանգամայն սորվեցը-
նելով ամենուն միաբանութեան քաղ-
ցրութիւնը և արդարութեան զօրու-
թիւնը . վերջապէս, ամէնքնիս ալ, որ
և իցէ վիճակի, սեռի և արուեստի մէջ
գտնուինք, կրնանք ուրիշներուն սիրելի
ըլլալ, մեզմէ կախումն ունեցողներուն
օգնելու քաղաքակիրթ և առաքինի ըլ-
լալ :

ԿԸ

Քաղաքակրթութիւն :

Մարտիրոսը արդար և պարկեշտ
մարդ մըն է որ բնաւ մէկու մը մազի
չափ ալ մնաս ջրներ . եկեղեցին կ'եր-
թայ, օրինաց կը հնազանդի, խօսքը կը
պահէ, ողորմութիւն կ'ընէ . բայց հան-
դերձ այսու ամենայնիւ մէկն ալ զինքը
բանի մը տեղ չդնէր :

Նայեցէք, ո՞վ պատանեակք . Մար-
տիրոսը աղտոտ ու ցնցոտի զգեստ մը

կը հագնի հին ատենի ոճով, որ ան-
վայել է իր վիճակին. սուտ չգրուցեր,
այլ անկեղծութեամբ ամէն բան պարզ
պարզ քեզի կը բացատրէ. զոր օրի-
նակ. Ան ի՞նչ փոփոխ դէժն ունիս. կամ
թէ, թուր-ի ճը փեսայ, կ'ըսէ, որ քե-
զի չափ էր. կամ թէ՛ Ո՛րչափ նոսալ
պիտի փեսնես դո՛ւ, որ աչքիդ մէջը նոյր է :
()ը ունի որ զուարթ ու կանչուրուտող
կ'ըլլայ. երբեմն ալ կը մաղձօտի, ու
կատղած շուն մը կը դառնայ, անանկ
որ զինքը բարկացած կը կարծես : Թէ
որ տեսնէ երկու հոգի մը որ պատճա-
ռաբանութեամբ իրարու հետ կը խօ-
սին՝ իրեն հոգն ալ չըլլար. մղոն մը հե-
ռուն կեցած հետդ կը խօսի. բան մը
ըսես, լաւ մը յօրանջեւէն ետքը՝ Ի՞նչ.
Ի՞նչպէս ըսիր կը հարցունէ. և կամ ամե-
նէն հարկաւոր կ'իտին խօսքդ բերնէդ
կ'առնու : Իսկ ընդ հակառակն թէ որ
ինքը բան մը պատմէ՝ վերջը չբերեր.
հարկաւոր բառերը միտքը չեն գար՝ ու
Ան ճարդը . . . կ'ըսէ. անոսնը ի՞նչ է . . .
աս փեղէն . . . : Խօսելուն ժամանակ ու-
րիշին երեսն ՚ի վեր կը փչէ, կը յօրան-
ջէ, կը զռնչէ. հազարուն ու փռնգալուն
ժամանակ չորս կողմն եղողները կը լը-
ւայ. թէ որ յանկարծ ոտքդ կոխէ,

կամ մէկ տեղդ ցաւցընէ, կարծես թէ
մեղք կը սեպէ Թողութիւնն ըրէ մը ըսե-
լու. թէ որ իրեն ծառայութիւն մ'ը-
նես՝ Ասորհաւալ է՛մ մ' ալ չգիտեր ըսել.
Երբ քեզի կը հանդիպի, ոչ Բարի լոյս
և ոչ Ասորհաւոր նոր ասորի կը բարեմաղ-
թէ. թէ որ Մէհր չեզի Բարի ըրաւ ըսես՝
կարող է ըսելու. Ի՞նչ ընէ՛մ էր Բարի.
տանը մէջ ամէն տեսակ աղաղակ ու
չչնկոց կը փրցընէ, և եթէ մէկը իրեն
իմացընէ որ դրացիներն անհանգիստ
կ'ըլլան, Տանս Դէ՛լ է՛մ, կ'ըսէ: Վարձեալ
բազմամարդ սեղանի վրայ կը սկսի մե-
ռելներու, վերքերու, իր արտերուն աղ-
բանոցին և կամ աւելի զզուելի բանե-
րու վրայ խօսիլ. խուց մը մտնալու ժա-
մանակ դռնէն առաջ չգար. գիրք մը
կամ լրագիր մը կը կարդաս՝ կ'ուզէ ձեռ-
քէդ առնել որպէս զի ինքն առաջ թող-
թատէ. նամակ մը կը կարդաս, մէկէն
աչքը վրան կը տնկէ. թէ որ կառք պի-
տի նստիս, ամենէն աղէկ տեղը ինքը
կ'առնու. տաքնալու միջոց բոլոր կրա-
կարանը կը գոցէ. եկեղեցին կամ հա-
սարակաց զուարճութեան տեղ եթէ
նստած ըլլայ ու քովը մէկը գայ, քիչ
մը անդին չերթար որպէս զի տեղ տայ:
Նսցեալ որ անձրևի ժամանակ երբ իր

հովանոցը ձեռքը կ'երթար՝ դիմացը ելաւ պաշտօնատարի մը խաթուհը, որ բարի և մեծարոյ տիկին մըն էր. գլուխը ծռելով բարեւ մը տուաւ, բայց ոչ պատէն հեռացաւ, և ոչ հովանոցը հրամացուց որ խեղճը չթրջի: Սէ որ խոհակերոցը գաւաթ մը կոտրի՝ սարսափելի շփոթութիւն մը կը հանէ. թէ որ բազմութեան մէջ մտնէ՝ մէկը մէկալը կը հրմըշտըկէ, որպէս զի ամենէն առաջ անցնի. գալ կը խոստանայ ու ժամերով կը սպասեցնէ. գիրք մը փոխ կու տաս՝ ոչ երբէք կը դարձնէ. թէ որ դուն աջ կողմը կ'ուզես երթալ, ինքը ձախ կողմը կ'երթայ. եթէ դուն գետը անցնինք կ'ըսես, ինքը լեռը ելլենք կ'ըսէ: Ինչուան բարիք ընելու մէջն ալ ոչ կերպը գիտէ և ոչ ալ շնորհք ունի: Սէպէտ և աղէկ աղէկ կոչուեցնէր ընէ ու ընտիր գինիներ հրամցընէ՝ բարեկամները ահամայ կ'երթան, վասն զի սեղանին ամենէն ընտիր կերակուրը կը պակսի, որ է տանտիրոջ քաղցր երեսը: Սէ որ աղքատի մը ողորմութիւն տայ, կը սկսի քթին տակէն մրմնալ ու ծոյլ և ձանձրացուցիչ կանչել: Ազգականներուն բարիքը կ'ուզէ և ամէն ունեցածին ժառանգ կը թողու զիրենք,

բայց թեթև մարդավարական խօսք
մ' ալ՝ որ բան մը չաժեր ու այնչափ ա-
խորժելի է, չըսեր. ոչ երբէք շնորհա-
լի խօսք մը բերնէն կը լսուի, և ոչ մէկ
պզտիկ ընծայիկ մը կ'ընէ: Առդկալից
սիրուն պարտէզ մը ունի. բայց արդեօք
աղգականներէն մէկուն, կամ Ս. Մ.
տուածածնայ խորանին բնաւ փունջ մը
խաւրած ունի. արդեօք ուրիշներուն իր
հունտերէն կամ մեխակէն ու նունու-
Փարի սոխերէն, և կամ ծառոց պա-
տուաստներէն տուած ունի:

Ազնիւ ու կանխահաս դեղձի ծառեր
ունի՝ որ եթէ զոյգ մը անոնցմէ ընծայ
խաւրէ մէկուն՝ բաւական է ինքզինքը
սիրցընել տալու համար. բայց չմտածեր
ու դեղձերը կը փճացընէ: Անգամ մը
եղբօրորդւոյն պզտի կողով մը տուաւ
այն դեղձէն, բայց տալու ժամանակ փո-
խանակ շնորհալի խօսք մը զուրցելու,
ինչպէս՝ Ուսման Հանդէսը. էհեղեցոյ մէջ
ամէրո՞ր ու լուս կեցեր. Տօրդ հնապանդ է-
ղեր. ըսաւ. Ա՛ն սը-եհայ, վասն զի չե՞մ
Քիտեր է՞նչ ընէմ:

ԿԹ

Քաղաքաւերնուներն : — Մարտիրոսին
համար ասոնք յանցանք են . չէ . այլ կը
ցուցնեն թէ բաւական չէ միայն արդար
ու բարերար ըլլալը , այլ պէտք է նաև
ճարդաւար ալ ըլլանք , այսինքն է սերելի
և ընկերահան : Մ'վ որ Մարտիրոսին այս-
պիսի անկիրթ վարմունքը կը տեսնէ՝ կը
տհաճի , և մենք չենք ուզեր բնաւ մե-
կու մը տհաճութիւն պատճառել : Ար-
բեմն ահամայ պէտք կ'ըլլայ զուրիշները
տհաճեցնել . բայց պէտք է ուրիշ ա-
տեն քաղցր վարմունքով մը անոնց տուած
տհաճութիւններնուս փոխարէն մը ը-
նենք . այսպէս ահա քաղաքաւերնուներն ,
այսինքն է բարեսրտութեամբ ու մե-
ծարանքով վարուիլը և հակառակէն
զգուշանալը պարտք մը կը դառնայ :
Աոյն իսկ մեր շահն ալ աս կը պահան-
ջէ որ ճարդաւար ըլլանք , վասն զի ամե-
նէն ընտրելագոյն կերպն է որով ուրի-
շին սիրտը դիւրաւ մեզի հետ կը կա-
պուի : Մեզըր կը լզենք՝ վասն զի քաղ-
ցըր է :

Ա երջապէս , մարդավարութիւնն ու

բարեկրթութիւնը նման են կահկարա-
սեաց փայլունութեանը : Փայտէ շի-
նուած հասարականհարթ դարան մ'ալ
նոյնպէս կը ծառայէ . չուացուած անօ-
թի մը մէջ դրուած ապուրն ալ նոյնպէս
համով է . բայց ինչո՞ւ է որ տարբերու-
թիւն մը կը դնենք :

Խել մը մանր մուկը պատշաճողու-
թիւններ կան , որ ըստ գաւառաց և
ըստ ժամանակաց կը փոփոխին , և ա-
տուք բարեկրթութիւն սորվեցընող գը-
րոց մէջ գրուած են , որոնց ՄԱՐԴԱ-
ՎԱՐՈՒԹԻՒՆ կ'ըսենք : Եւս պատշա-
ճողութիւնները զանց ընողները կը
ցուցընեն թէ լաւ կրթութիւն առած
չեն , լաւ համարման արժանի չեն ըլլար ,
և ուրիշներուն ահանջը կը խայթ են ու
աչքի գէշ կ'երևնան . ուրեմն պէտք է
այս պատշաճողութիւնները պահել :
Ձեր տղայութենէն սկսեալ մայրեր-
նիդ ձեզի կը սորվեցընէր որ անշնորհք
խօսքեր բերաննիդ չառնէք , գետինը
փռուած չկենաք , թւերնիդ շատ չշար-
ժէք , երկար ժամանակ աչքերնիդ տեղ
մը տնկած չնայիք , ոչ շատ շուտ և ոչ
ալ շատ ծանր քալէք , բարձր ձայնով
չծիծաղիք , և թէ չե՞տէ հասակը եղ-
հասակ է . և ընդհակառակն այնպէս պէտք

է շարժիլ՝ որ ուրիշներուն ճանճրու-
թիւն, արգելք կամ աշխատութի չըլ-
լանք • ասոնք միտքերնիդ պահեցէք, և
երբ ընկերութեան մէջ կը մտնէք, նայ-
եցէք թէ կըթեալ անձինք թնչպէս կը
վարուին, ու անոնց նմանեցէք : Աս հոս
Մարդաստեղծութիւն գրել չեմ ուզեր, այլ
Արդարութեան և Բարեբարութեան պարտ-
քերուն վրայ համառօտիւ մը խօսելէս
վերջը, կ'ուզեմ քանի մը խօսք ալ Կաղա-
Կահրութեան պարտքերուն վրայ զրու-
ցել, որ ուրիշներուն հետ մեծարանքով
վարուիլ կը սորվեցընէ, և մեզի ալ ա-
խորժելի բան է, և որով միայն հաճոյ
և շնորհալի կ'ըլլայ ընկերական վիճակը :

Հ

Կէնցաղաւարտութեան մէջ : — Կ'ուզե՞ս
ուրիշներուն հետ յարմարիլ • նախ և ա-
ռաջ մէկզի ձգէ անտէրութիւնը, որ ըզ-
քեզ ուրիշներէն վեր կ'երեցընէ : Հա-
րուստ ես • գեղեցիկ ես • ազնուական
ես • գիպուած մըն է • գիտուն ես • ան
ալ Աստուծոյ պարգևն է : Բայց ճշմա-
րիտ արդիւնքը համեատ է • ջանար փա-
ռաւորուիլ • ուրիշները գոհ ընելու հա-

մար ամենայն մեծարանք կը բանեցրնէ :
Քաղաքակրթութեան սքանչելի պատուէր մը տուաւ մեզի Յիսուս, երբ ըսաւ . Մէջ ջանաս առաջին պատուաւոր քեզը նապիչ . աւելի լաւ է որ զայ քանքերը և ինչո՞ւ ասանկ զար նապեր էս, ըսէ՛ քան ընկապուի, Դու ինչ ունիս հոս, զար քաշուի, ըսելու :

Երբ պատրուած ու ամէն տեսակ գունով աղտոտ զգեստներ հագած մարդ մը կը տեսնենք, անլուայ ու հոտած ձեռքերով, կը գանինք . բայց նոյնպէս զգուանք մը կը պատճառեն մեզի անոնք որ մաքուր հագուած սգուած ու վզերնին տնկած կը քալեն . վայ թէ որ քիչ մը զգեստունն դպչիս կամ մազերնին աւրես . խեղճ մարդիկ . տերւենին շատ, խաղողնին քիչ :

Պարկեշտ մարդը իր վիճակէն վեր փառաւոր զգեստներ հագուիր . մեծութեամբն, հարստութեամբն ու գիտութեամբը չպարծիր . իր արդեանցը վրայ չխօսիր, և ոչ իսկ ուրիշներուն գովելովը կ'ուռի . բնաւ զոք չծաղրեր, այլ որչափ կարելի է կը գովէ . ոչ երբէք նամակ մը, բարև մը առանց պատասխանի կը թողու . ամենևին չպահանջեր որ ամէնքը երկայն բարակ իր և իրեն սի-

ընդ եղած նիւթերուն վրայ խօսին ,
մանաւանդ թէ ուրիշներուն խօսելու
նիւթ կու տայ . խօսակցութեան մէջ
լրբութեամբ դէմ չխօսիր , և ոչ իր կար-
ծիքին վրայ կը յամառի . բարեբարոյ է
ու կը դիտէ միշտ թէ որ բանն արդեօք
հաճոյ է ուրիշին . փափաքնին կը գու-
շակէ և կը ջանայ նեղութիւն չտալ . նե-
րողամիտ է՝ բայց ախտաւորներուն ու
անզգամներուն երես չտար , զիրենք
չփայփայեր՝ այլ պակասութեանց կ'ար-
գահատի , որոնցմէ ոչ ոք ազատ է . կը
ջանայ անմեղադիր ընել երբ կարելի է .
բարեսրտութեամբ կը մեկնէ ուրիշնե-
րուն ըրածը , և առանց ներքինը դատե-
լու արտաքնոյն միայն ուշ կը դնէ :

Վարձեալ պարկեշտը ինքզինքը նը-
ւաստ ու արհամարհելի չըներ . ընդու-
նայն ամօթով ուրիշներուն առջև չգող-
դրղար , գիտէ որ ուրիշներն ալ վերջա-
պէս իրեն նման մարդիկ են . խօսակցու-
թեան մէջ թէ իրեն և թէ ուրիշին օ-
րինաւոր մեծարանքը կը պահէ , և կը
ջանայ իր կողմանէ հաճոյական կերպ
մը բանեցընել . վասն զի իւրաքանչիւր
ոք այնչափ կ'աժէ՝ որչափ ինքզինքը գի-
տէ աժեցընել :

Սմանք իրենցմէ աւելի խեղճերու ըն-

կերութեան մէջ միայն կ'ուզեն մտնալ,
որպէս զի անոնց մէջ առաջին ըլլան .
այսպիսիները հետզհետէ աւելի սնա-
փառ կ'ըլլան և բնաւ չեն օգտուիր : Ս'վ
որ ընդհակառակն մեծամեծ և հարուստ
մարդկանց հետ միայն կ'ուզէ միշտ վա-
րուիլ՝ շատ մահացուցումն ու տհաճու-
թիւններ կը կրէ : Իմ խորհրդիս մը-
տիկ ըրէ, ո'վ պատանեակ . սիրէ գիտ-
նոց՝ ևս առաւել առաքինի ու քաղաքա-
կիրթ մարդկանց ընկերութիւնը . ա-
նոնցմէ միշտ նոր բան կը սորվիս, իրենց
օրինակը զքեզ 'ի բարին կը յորդորէ,
իրենց բարեկամութիւնը զքեզ մեծա-
րոյ կ'ընէ :

ՀԱ.

Խօսակցութեան մէջ : — Ուրիշներուն
հետ խօսելու ժամանակ տհաճութեանց
մեծ պատճառ լեզուն է : Կանուխ վար-
ժեցուր զքեզ իմաստութեամբ կառա-
վարելու զլեզուդ, որոշ ու չափաւոր խօ-
սէ, շուտ՝ բայց ոչ գահավիժաբար, մա-
քուր՝ բայց ոչ արուեստակեալ : Իւրիշ
պատիւը շատ օգտակարութիւններ ունի ու-
րիշ կ'աժէ, և շատ անգամ լաւ խօսքով

մը գէշ գործք մը կը մոռցուի : Ա իճա-
բանելու առթի մէջ քաղցրութեամբ
ու չափաւորութեամբ քու պատճառ-
ներդ ըսես , ու նայէ որ չտաքնաս . վասն
զի խօսիլը խօսել կու տայ , ու կրնաս
անանկ բաներ բերնէդ հանել՝ որոնց
վրայ ետքէն ցաւիս . ուր մնաց որ միշտ
հակաճառութենէ վերջը դարձեալ ա-
մէնքը իրենց կարծիքին վրայ կեցած
կ'ըլլան . ասոր համար քեզի խորհուրդ
կու տամ որ քանի մը չափազանց որոշո-
ղական կերպեր շատ չբանեցնես . Աճե-
նաստոյժ է . — կը խաբուիս . — կ'երաշխա-
տորէ՛մ . և ընդհակառակն ուրիշ այնպի-
սի կերպեր բանեցուր՝ որ ուրիշին ան-
ձնասիրութեանը չդպչին . Ինձի կ'երե-
նայ . . . Իճ ահար կարծիքովս . . . Թերեւս
չաւ չհասկըցայ :

Անկեղծ ես՝ բայց չափը կ'անցնիս .
այն դառն ճշմարտութիւնը կրնայիր
ծածկել . բարեկամ մը չկորսնցընելու
համար երբեմն հարկ կ'ըլլայ անուշ
թքնել ու լեղի կլլել : Արբոր ուրիշը կը
խօսի՝ մտիկ ըրէ , իրեն խօսքը մի՛ ընդ-
հատեր ու անուշադիր մի՛ երևար . քիչ
անգամ քու վրադ խօսէ , և զուրիշները
գոհ ըրէ իրենց վրայ խօսելով : Թէ որ
միշտ լռես , Վայտ մը ուրիշ փայտի մը

վրայ նստեր է, կ'ըսեն. թէ որ շատ
խօսիս, ինչպէս ըսի, անանկ բաներ
բերնէդ կը հանես՝ որ վերջը կը զղջաս:

Տեսա՞ր Աիրակոսն. ինչ որ կ'ուզես
հարցուր, բան չկայ որ չգիտնայ. ամէն
բանի վրայ կը խօսի ու կ'ուզէ դատաս-
տան ընել. առանց լաւ մը խօսակցու-
թեան ինչ բանի վրայ ըլլան իմանալու՝
վճիռներ կու տայ, և իրմէ իմաստուն-
ներուն բերնին խօսքը կը կտրէ. այս-
պէս ըրած այլանդակ սխալներովն ամե-
նուն ծիծաղելի կ'ըլլայ, ու բան չսորվիր:

Իսկ շատախօս Յովսէփը, որ միշտ անու-
տի բաներ կը պատմէ, զարհուրելի լու-
րեր կու տայ, կամ խոշորկէկ սուտ մը
կը գլորտրկէ ու ինքզինքը մեծ զուար-
ճախօսի տեղ դրած է. անհամին մէկն է:

Ո՞վ կրնայ Թորոսին հետ կենալ, ու-
րուն ամէն խօսակցութիւնն արուես-
տակեալ է, և թեթեւ բանի մը հա-
մար երեսը կը թթուեցընէ. կամ միւս
իմաստակին հետ, որ ամէն բանի դէմ
կը խօսի:

Հանճարաբանութիւնն ու զուարճա-
խօսութիւնը խօսակցութեան համեմքն
են. բայց վայ թէ որ սաստիկ ըլլան,
թէ որ սիրոյ, պատուոյ ու առաքինու-
թեան դպչին. անբժշկելի վէրքեր կը

բանան : Միով բանիւ զուարճաստու
թիւնը ախորժելի բան է , բայց պէտք
է որ յաճախ ըլլայ :

Ինչո՞ւ ուրիշներուն բանին կը խառ
նուիս . քուկիներդ բաւական չե՞ն :
Ի՞նչ որ տան մը մէջ լսածդ՝ ուրիշ տուն
մը երթաս պատմես , քիչ ատենէն եր
կուքին ալ ատելի կ'ըլլաս : Այսպէս ա
հա եղաւ Մարկոսին՝ իր սուր ու կծու
լեզուին համար : Միշտ խօսակցութեա
նը մէջ չարասրտութիւն մը կայ . երբ
չարաստութիւն կը լսէ՝ կ'ուրախանայ .
իսկ գովեստի ժամանակ՝ կամ ահամայ
կը լռէ , կամ իր բայերը մէջ կը խառնէ :
Ի՞նչնէն մեղը կը կաթէ ու զգեստին
տակ դաշոյն ծածկած է . արտաքուստ
հազարումէկ շողոքորթութիւն կ'ընէ ,
բայց հազիւ թէ մէկը խուցէն դուրս
կ'ելլէ՝ խօսքը վրան կը դարձնէ ու չա
րիք չմնար որ չըսէ : Ի՞նչ և իցէ գէշ
կամ անվայել դէպք մը լսէ՝ մէկէն նոյն
վայրկենին կը սկսի մէկուն մէկալին վա
զել քարոզել . ինչուան բարի գործոց
մէջ ալ միշտ երկրորդական վախճան մը
կ'ենթադրէ՝ պարզ չգովելու համար :
Աստուած պահէ զիս չարասրտին լե
զուէն ու մարդասպանին սրէն :

Ի՞նչ ըսեմ այն ողորմելիներուն որ ըն

կերութեանց միմօսը կը դառնան և ամէն տեսակ խեղկատակութիւն կ'ընեն՝ որպէս զի ուրիշները խնտացընեն . ինչ ըսեմ այն անառակներուն ու ամբարիշտներուն՝ որոնք անպարկեշտ ու պիղծ բաներ կը խօսին , և կ'ուզեն սրբոց ու սրբազան բաներու վրայ ծիծաղիլ :

Վստայիսեաց հետ , ո՛վ պատանեակ , մասնակցութիւն չունենաս : Վայց ընկերութեան հաճոյ ու սիրելի ըլլալու համար՝ միշտ նոյնպէս զուարթ եղիր , խռովեալները հաշտեցուր , երախտագէտ եղիր՝ նաև ամենէն ոչինչ բաներու , և որուն որ կրնաս՝ սրտանց ու շուտով ծառայէ : Վսած խրատներդ պահէ . երբ կը տարակուսիս թէ ինչպէս պէտք է վարուիս՝ խմաստուն և բարետէր անձանց խորհուրդ հարցուր ու շնորհակալ եղիր . եթէ գիտես որ մէկը վիշտ մը ունի՝ վազէ մխիթարէ , եթէ մէկը մահացած կը տեսնես՝ անուշ խօսքով մը սփոփէ : Վորօրինակ զգեստներ ու շարժմունքներ չունենաս . ոչ տրտնջացող և ոչ պարծենկոտ ըլլաս : Վոսակցութեանց մէջ՝ խելացի բարեսրտութենէ մը աւելի ախորժելի բան չկայ :

Վերջապէս , կը փափաքիմ որ քաղցրաբարոյ ըլլաս՝ բայց ոչ թեթևամիտ .

ծանրաբարոյ՝ բայց ոչ պահանջող . ճիշդ՝
բայց ոչ սնուտի ու ձանձրացուցիչ . խո-
հական՝ ոչ յամառ . անպաճոյճ՝ ոչ
կծծի . մեծերը յարգող , հաւասարնե-
րու հետ պարկեշտ , ստորնագունից հա-
ճոյ : Ար փափաքիմ դարձեալ որ խօսա-
կցութիւնդ ալ գործողութեցդ ու սրբ-
տիդ պէս պայծառ , ազատ , համարձակ
ըլլայ , և քեզի հետ խօսողը ժամանա-
կը պարապ անցուցած չկարծէ :

ՀԲ

Բայց զգոյշ կեցիր . քաղաքակրթու-
թիւնը քաղցր խօսքերու և շնորհակա-
լութեանց շատութեանը վրայ կայա-
ցած չէ , որոնք մեր զգացմունքը չեն
յայտներ՝ այլ կը կեղծեն : Ստեփանը
միշտ սպրկիկ ու հագուած սգուած կը
տեսնես . բերնէն մարդավարական խօս-
քեր ու ցուրտ շնորհակալութեան կեր-
պեր ջրի պէս կը վազեն . ամէն վայր-
կեան շնորհակալ կ'ըլլայ , ամէն վայր-
կեան ներումն կը խնդրէ , կարծես թէ
առանց քեզի չկրնար հանգիստ ըլլալ .
թեթեւ մէկ տկարութիւն մը ունենաս՝
կարծես թէ քունն աչքէն կը կտրի . ա-

մէն ըրածիդ վրայ կը զարմանայ, կը
զմայլի, անանկ որ թէ որ դեղձը յու-
նուարի մէջ կը հասնի՝ ըսես, չհամար-
ձակիր դէմ դնելու: Ստեփանէն իրեն
նմաններն համ կ'առնուն, բայց քիչ մը
խելք ունեցողներն ամէնքն ալ կը խոր-
շին:

Վաղաքակրթութիւնն ուրիշ բան
ըսել չէ, եթէ ոչ մարդավարութեան,
ներողամտութե՛ն ու բարեսրտութեան
զգացմունքնիս յայտնել ուրիշներուն.
Թէ որ սրտիդ մէջ այսպիսի զգացմունք-
ներ ունիս՝ առանց նեղութեան կը յայտ-
նես, և բարի ու ազնուասիրտ կը հա-
մարուիս. բայց թէ որ չունիս ու կ'ու-
զես ձեւացընել՝ կեղծաւոր ես ու խա-
բեբայ:

Մարդասէր, ներողամիտ, բարեսիրտ ե-
ղիր, ասոնք են ծաղիկք մարդավարու-
թեան: Մարդասէր. ուրիշին յաջողու-
թեանը վրայ ուրախացիր և թշուառու-
թեանը վրայ տրտմէ. որչափ ձեռքէդ
կու գայ նայէ ուրիշին չարիք չհասցընես
ու տհաճութեան պատճառ չըլլաս, այլ
ջանա մանաւանդ ընկերութեան ուրա-
խութիւնները շատցընել: Ներողամիտ.
Թեթև նախատանաց ներէ, ուրիշին
գործքերը՝ ի բարին մեկնէ, պակասու-

Թեանց արդասատէ, յիշելով որ մարդկանց մէջ կատարեալը քիչ պակասութիւն ունեցողն է. մի պահանջեր որ ուրիշները քեզի պէս հագուին, ուտեն, մտածեն ու խօսին, այսպիսի անմեղ բաներու մէջ ուրիշներուն ազատութիւնը մի բռնադատեր: Նարեհի ք. մարդկանց միշտ աղէկութիւնները տես. աւելի անոնց առաքինութեանցը հաւատք ընծայէ քան ախտերուն. որով սիրէ, յարգէ ու կարեկից եղիր՝ պատրաստ ըլլալով ամենայն բարիք ընելու:

ՀԳ

Համարում եկարագիր առաքիւնի ոչ քաղաքակիրք մարդու մը:

Գեղեցիկ մտածութիւն մըն է գերեզմանատունները հասարակաց ճամբաներու վրայ շինելը. մարդս ճամբէն անցնելու ժամանակ վայրկեան մը այն փակարանին առջև կանկ կ'առնու և ուրիշ ճամբորդութեան և նպատակի մը վրայ կը մտածէ. և ինչպէս որ երեկոյեան մթուն յառաջելը տեսնելով ընթացքը կ'երագէ, այսպէս նաև մահը

յիշելով՝ կը փութայ, քանի որ ժամանակ ունի, բարիք գործելու :

Ընցեալ ամսուան մէջ օր մը գեղի մը գերեզմանատան առջևէն կ'անցնէի, որուն վրայ կմտխք մը նկարուած էր՝ այս սովորական տողերով .

ԵՍ ԱԼ ԷՒ ՔԵՋԻ ՊԷՍ .

ԴՈՒՆ ԱԼ Կ'ԸԼԼԱՍ ԻՆՄԻ ՊԷՍ .

ՄԸՏԱԾԷ ԶԱՅՍ, ՏԷՐ ԸՆԴ ՔԵՋ :

Ահայ աս տողերուն վրայ մտածել ու ինքնիրենս Մ՛Տ ունայնութեան մարդկային գործոց ըսելով, հառաչեցի . հոս է ամենուն վախճանը, մուրացկանին ու թագաւորին . հոս մարդկութեան ամենայն փառասիրութիւնքը կը փշրին . հոս ամենայն ինչ կը թողուի՝ բաց 'ի գործոց : Մ. յաչափ սակաւատե է կեանքերնիս, և ի՞նչ շահ չարութեամբ ապրելնէս . հոս պիտի ժողովինք ամէնքնիս, ի՞նչ շահ ուրեմն թշնամութենէ, ռիսութենէ, մեր եղբարքը չարչարելէն : Մ. սոնք մտածելով ծունկի վրայ եկայ ու ի խորոյ մը ըսի այն խեղճ հոգւոց համար, օրհնելով միանգամայն իմ կրօնքս՝ որ և ոչ մահուամբ կը քակէ այն բարեգործելու և սիրոյ կապերը՝ որ բարեսրտութեամբ զմեզ մեր եղբարցը հետ

կը լծորդէ . և ահա խաչի մը վրայ աչքս
դարձընելով՝ այսպէս կարդացի .

ԱՂՕԹԵՑԷՔ

ԽԵՂՃ ՍԵՐՈՎԲԷԻՆ ՆԱՄԱՐ .

ԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ

ՊԱՐԿԵՇՏ, ԱՌԱՔԻՆԻ, ԱՆՍՏԳԻԻՏ .

Ինձի այնպէս մը երևցաւ որ այս բա-
ռերս ճշմարիտ առաքինի ու քաղաքա-
կիրթ անձի մը նկարագիրն էին . ուստի
գեղին մեծը գտնելով՝ ինչ մարդ ըլլալն
հարցուցի :

« Իրաւցընէ առաքինի ու քաղաքա-
կիրթ մարդ մըն էր Սերովբէն , պա-
տասխանեց գեղին մեծը : Աչներքուստ
միայն կը պաշտէր զՍտուած , այլ նաև
արտաքին բարեգործութիւններով . գիտ-
նալով միանգամայն որ ամենէն աւելի
ջերմեռանդն ու կրօնասէր այն է՝ որ ա-
ւելի կ'օգնէ իր մերձաւորին : Վարեմոյն
կերպով , կարեկցութեամբ և մարդա-
սիրութեամբ կը վարուէր ամենուն հետ ,
ինչպէս իշխանին՝ նոյնպէս մուրացկա-
նին հետ . ոչ հազուստին՝ այլ արդեան-
ցը միայն կը նայէր : Վարիները կը սի-
րէր , տկարաց ցաւակից կ'ըլլար , չարաց
կը կարեկցէր և կը ջանար ուղղել : Խիստ
շատ ծանօթ ունէր , բայց բարեկամ
խիստ քիչ . բարեկամ կը համարէր ի-

րեն ամէն բարեբարոյ ու առաքինի ան-
ձինքը, թէպէտ և հեռաւոր ու անծա-
նօթ ըլլային իրմէ : Աղքատները կը յար-
գէր, հարուստներու վրայ չարախօսու-
թիւն չէր ընէր . խոնարհաց հետ կը կե-
նակցէր և զօրաւորաց կը հնազանդէր .
զամէնքը հաճեցընել կը փափաքէր, և
գոհ էր թէ իր և թէ այլոց վրայ . կը
ջանար զուրիշը իրեն երախտապարտ ը-
նել, քան թէ ինքը ուրիշի պարտըկան
ըլլալ . գոհ ընել զուրիշը, քան եթէ
ինքզինքը :

Այս ու ատելու թեան ինչ ըլլալը չէր
գիտէր . կռիւներէ կը զգուշանար . հը-
պարտութիւն չունէր՝ վասն զի կը հա-
ւատար Աստուծոյ, և ոչ նախանձ՝ որով
հետև ընկերակիցները կը սիրէր : Աջ
միայն կը ներէր նախատանաց՝ այլ և ոչ
կը նեղանար . եթէ խօսքով կամ գործ-
քով մէկու մը անիրաւութիւն ըրած
ըլլար՝ յանցանքը կը խոստովանէր, ու
կարելի եղածին չափ շուտով կը հաշ-
տուէր :

Արեւէն յայտնի կը տեսնուէր պարզ,
հանդարտ, անկեղծ ու բարեսիրտ մարդ
մ' ըլլալը . ոչ դաժան էր և ոչ ալ հը-
պարտ . ոչ բիրտ և ոչ երկչոտ . իր ան-
ձին վրայ ունեցած բնական վստահու-

Թեամբը ուրիշներուն ալ վստահու-
թեանը ու մեծարանացն արժանի է-
ղած էր : Մնփոփոխ բնաւորութեամբ
որ և իցէ դիպուածի մէջ , ոչ մէկէն կ'ու-
րախանար և ոչ մէկ բանով մը կը տրրտ-
մէր . վասն զի Ո՛վ հրնայ , կ'ըսէր , աճէն
դիպուածոց հեփեանիք գիտնալ . շատ ան-
գամ շարն 'ի Բարի էր խնայ , և ինչ որ է-
րէն ուրախացոյց՝ այսօր էր արածեցընէ . Աս-
տուած էր բրածը գիտէ : Ա՛րսէր դարձեալ .
Ո՛վ որ էր ճախորդու-Լեանցը պատճառս զու-
րիշները էր դնէ՝ արգէտ է . Եսկ ո՛վ որ յան-
ցանիք էրէն էր սեպհասէանէ , այնպիսին ուղ-
ղու-Լեան հո- գայ . Բայց աստիճինն ոչ զու-
րիշը և ոչ զինիք յանցաւոր էր սեպէ , այլ է-
ղածին ճար ընէլ էր ճարածէ :

Մտանեաց մէջ ունեցած տհաճու-
թիւնները կը ջանար որ տնէն դուրս
չելլեն : Արտի զուարթութիւնը մայիսի
արևուն կը նմանցընէր , որ փշոց մէջէն
վարդեր կը բողբոջէ . աս պատճառաւ
տօն օրեր իր որդիքն ու գեղացւոց տը-
ղաքները հետն առած կը շրջագայէր .
վերջը , եթէ ժամանակ ունենար , կը
սկսէր երկրիս ու երկնքին վսեմ գեղեց-
կութեանը վրայ մտածել , և կը փա-
փաքէր որ ամէն հանդիսի ու զուար-
թութեան օրերն Մտուածոց փառք տա-

լով և իրեն գործոց հրաշալեացը վրայ
զարմանալով անցրնեն մարդիկ : Դուք
ժամիս է՛րնէք Ռեապրոն Տը Էրնալու համ նոր
սեասրան Տը սեանէլու համար, կ'ըսէր մե-
զի . և սկսե միշտ աչքերնուդ առջևն էն այն-
պիսի նկարներ՝ որ շատ աւելի է՛արժէն ու-
նի էն . զոչափն ու վարդափայն արշալոյսը,
Ռրնուան և ոսկեզօծ արեմուսիքը, սասորդա-
շարդ փիշերոյ Տը զմայլեցուցիչ հանդարարու-
թիւնը, ծաղկալից փարնան ծիծաղը և պրո-
դարու աշնան զուարթութիւնը : Արխոր-
հրդաժէր թէ ոչ երբէք պէտք է սուտ
ըսել և ոչ միշտ ճշմարիտը . և երբ հար-
ցուցին իրեն թէ՛ Ալեքի ո՞ր առաքինու-
թեան պէտք է վարժեցրնել զպատա-
նիս, պատասխանեց . համբերու թեան :

Թէ որ մէկը վրան գէշ խօսէր, փո-
խանակ չարիք մաղթելու շնորհակալ
կ'ըլլար՝ իր պակասութիւններն յայտ-
նելով այնպէս զինքն ուղղելուն համար :

Աթէ գիտնար որ մէկը կարօտու-
թիւն մը կամ վիշտ մը ունի՝ աղաչանքի
չէր սպասէր, այլ կ'օգնէր, կը մխիթա-
րէր եռանդեամբ, սիրով, վեհանձնու-
թեամբ և ՚ի ծածուկ, գիտնալով որ
Շուր փոռոզը կրկն փոռած է՛լլայ :

Աարողութիւնը շատ չափաւոր էր :
Արխտասարդութեանը ժամանակ ճար-

պիկու թեամբ ու խնայողու թեամբ բա-
ւական հարստութիւն ամբարեր էր ,
բայց իր ընկերակիցներէն մէկուն ըրած
սխալովը վաճառականութենէ ինկաւ :
Սերովբէն այս դժբաղդութեանս ան-
խառով ոգւով համբերեց , մտածելով որ
դժբաղդութիւներն Վստուած կը խաւ-
րէ , և Վստուած բարի է , ուրեմն մեր
բարւոյն համար կը խաւրէ : Վստուած
նեղոյն նման որ մէկ թւը կոտրած ժա-
մանակ՝ միւսը երկինք բարձրացուցած
չնորհակալ եղաւ Վստուածոյ որ վիզը
չխորտակեցաւ , և կորսնցուցածին վրայ
լալու տեղ՝ մնացածովը ինքզինքը մխի-
թարեց : Ար ուրեմն ըստ առածին թէ
խոնարհէ որ հանգչիս՝ աս գեղս քաշուե-
ցաւ . ծախքերը չափաւորեց , խաղաղ
ու քիչ բանի փափաքելով իրեններուն
ապրուստին համար բաւական եղածն
հոգաց , առանց պարտքեր դիզելու :
Միայն պարտքէն սաստիկ կը վախնար ,
որուն համար կ'ըսէր . Եթէ պարտք չու-
նիս՝ ունեցած երկուսը հեղեղանովը ալ հա-
րուստ էս :

Վնձամբ իր դաշտերը կը մշակէր :
Տես սա այգիները . իրաւցընէ պղտիկ
են , բայց որչափ թթենիներ ու որթեր
ունին , գեղեցիկ կարգաւ . բոլորն ալ

իրենն են . և բարեգործութիւն մը կը
համարէր իր ստակովը գեղացւոց վիճա-
կը լաւցընել :

Գեղացւոց հետ կենցաղավարելով
կը ջանար իրենց սխալներն արմատաքի-
խել . կ'ուզէր որ ծերոց սովորութիւն-
քը մեծարեն՝ բայց նորերն ալ փորձեն ,
'ի բաց թողլով այս խօսքը թէ՛ Մէշ^ր
այսպէս փեսած են : **Ը** երամի որդերը լաւ
կերպով պահելու , պտուղներն աղէկ
պատուաստելու և որթերն յօտելու լաւ
կերպեր կը սորվեցընէր իրենց . ինքը
սորվեցուց մեղու պահել , գետնախրն-
ձոր մշակել , եղիճէ գերձան շինել , կեն-
դանեաց աղբն օգտակար կերպով գոր-
ծածել , և ձմեռուան պարսպ օրերուն
մէջ ըմպանակ , շերեփ , աթուիկ և կո-
ղով շինել . աղէկ երկրագործ մը պէտք
է իր երկրէն ամէն հարկաւոր եղած բա-
նը ժողովէ , կ'ըսէր :

Ա՛ր և իցէ բան կ'ուզէր որ իր տեղը
գրուի , և իւրաքանչիւր կահկարասեաց
համար առանձին տեղ որոշուած ըլլայ :
Ըսդիս անդին թողլով , արևու , անձրևի
տակ մնալով կը փճանան՝ կ'ըսէր , զա-
նոնք փնտռելու համար ժամանակ կը
կորսուի , և անոնց խառնափնդորու թիւ-
նը մտաց անկանոնու թեան նշան է : Ա՛-

մենէն ճնչին բաներու վրայ ալ խնամք
ունենալու կը վարժեցընէր, վասն զի Ե-
րեսի վրայ Ռոդոսած Բաները հորսոսած էն :

Ա՛ր գեղը կամ աւանն որ շատ գինե-
տուն կը տեսնէր՝ Նշան է, կ'ըսէր, Բէ
հացի հարօտ Տարդ շատ հայ : Բնկերական
խօսակցութեանց մէջ թէ որ տեսնէր
որ չարախօսութիւն կ'ընէին, Անշուշտ
չէին ընէր, կ'ըսէր, Բէ որ հարդալ գիտնային
ու ըստի գրէր հարդացած ըլլային : Բնաւ
չէր ուզէր որ յանցանքը կամ արդիւնքը
բաղդին տրուի, և բաղդ ըսելը՝ գործո-
ղութեան մը պատճառները չգիտնալ-
նիս է, կ'ըսէր : Բնդունայն ժամավա-
ճառութեամբ վաճառանոցները յաճա-
խողի մը ըսաւ . Դո՛ւրս ելլելովք Բան Տը
չլահեցար . ա-եւորդ ծախէր ըրեր, Բանդ
գործք էր քնային . պէսած Բաներդ քոր-
չո-Բի-նն էղան քեզի ու առանց հարօտո-
Բի-նն Տ'ո-նէնալու գնեցիր :

Նարուստ գիւղաղբօսասիրի մը բեր-
նէն՝ Ա՛հ, առ Ի՛նչողէս կը ճանչրանամ Տառա-
չանքը լսելով՝ Զարճանք չէ, ըսաւ . հրա-
ճանքիդ հասար մշտ կերակէ է :

Աւրիշ մ' ալ երբ շատ բան կարդա-
ցած ըլլալուն վրայ կը պարծենար, Ա-ե-
լի լաւ է՛ ըլլար, ըսաւ, որ շատ Բան մտքդ
պահած ըլլալուդ վրայ պարծենայիր :

Վարձեալ երբ մէկը՝ Վերագոյն բարին մեր ամէն փափաքածներն ունենալնուս վրայ է՝ կ'ըսէր, Չէ, Գերագոյն բարին միայն հարօգուելին ունեցած բաներնուս քափաքելն է, ըսաւ ։

Մշխարհքս ճանչնալու համար հարկ չկայ, կ'ըսէր, շատ ճամբորդութիւն ընել, այլ լաւ կերպով ընել. ամէն բանի պատճառն ու ինչ բանի ծառայելը հարցընել. առանց ասոնց ընդունայն է ճամբորդութիւնը. վասն զի ամէն տեղերկինքը նոյնպէս կապոյտ է, ջուրը կը վազէ և ծոյլերն աղքատ ու վատանուն են ։

Հրամանքդ ալ կը հասկընաս, վրայ բերաւ գեղին մեծը, որ Սերովբէն առածներ ու բարոյական խօսքեր շատ կը սիրէր. աս առածներէն շատ բան հաւաքած է պզտի գրքոյկի մը մէջ, որ իր որդւոցը թողուց ։ Վուզէս մէկ քանին լսել ։

Արքերը մարդուս երջանկութեան կորստեամբը միայն կը յագին ։

Վաւագոյն է Մստուծոյ խաւրածը, քան թէ մարդուս ուղածը ։

Պէտք չէ ուրիշներուն ըրածին նմանիլ, այլ որոնք որ աղէկ կ'ընեն ։

Աւր որ չարախօս մը կայ՝ շուտ մը երկու թշնամիք կը ծնանին :

Մեծութիւնք և փառաւորութիւնք ծովու նման են . որչափ բացուիս , այնչափ աւելի վտանգաւոր է :

Վաւագոյն ստացուածքը՝ ընտիր արուեստ մը ունենալն է : Վաւագոյն է բարի բան մը գիտնալը , քան երեսուն չարիք :

Վնչպէս որ կ'ուզես ուրիշներն զքեզ համարին , ջանա այնպէս ըլլալ :

Չեռք յաշխատութիւն , սիրտ՝ ի հանգիստ :

Մշտարհքիս վրայ հանգիստ ապրելու համար բնաւ բանի մը պէտք չէ փափաքիլ :

Երբ մարդիկ քեզի չարիք մը կը հասցընեն՝ զ՛ստուած միտքդ բեր :

Արիշի մը սահած տեղւոյն վրայ ոտքդ չդնես :

Մէն գովելու բան գովէ . բայց ամէն պախարակելու արժանի տեսած բաներդ մի պախարակեր :

Չունեցած իդ վրայ մի մտածեր, այլ
ինչ բանի որ կարօտութիւն ունիս :

Իստուած խաղաղութիւնն անմեղու-
թեան հետ, առատութիւնը ճարտա-
րութեան հետ, ապահովութիւնն ալ
արժէքին հետ միացուցած է :

Շուտ հարցմունքին՝ ծանր պատաս-
խան :

Ինչ որ բանի մը փորձ չընէր, բան
մ' ալ չկրնար յաջողցընել :

Նայէ աւելի թէ որով հետ կ'ուտես,
քան թէ ինչ կ'ուտես :

Ս'վ որ շատ ատեն ուրիշի տունը կը
կենայ՝ իր տանը մէջ օտարական կ'ըլ-
լայ : Ս'էկն որ չափազանց զուրիշները
կը դիտէ՝ ինքզինքը կը մոռնայ :

Իմէն պանդոկապետ իր գինին կը գո-
վէ . ամէն մարդ ալ Պարկեշտ եմ կ'ը-
սէ . դուն ըսածին մի վստահիր, այլ ար-
դեանցը նայէ . վասն զի շատերը կան որ
կրկուան հաւի պէս կը պոռան, բայց հաւ-
կիթ չեն ածեր :

Համակամութեամբ համբերէ, համ-
բերութեամբ սպասէ, յարատեութիւն

աշխատէ ու նայէ որ ծախքդ չափաւոր
ըլլայ, ան ատեն դժբաղդութեան չես
հանդիպիր :

Մարդս իրեք բարեկամ ունի . ստակ,
որ հիւանդանալուն պէս քովէն կը հե-
ռանայ . դրացիներն ու ազգականները՝
որ մեռնելէն ետքը քովէն կը բաժնուին .
բարիք՝ որոնք միայն նաև ինչուան գե-
րեզման մարդուս կ'ընկերանան :

Գիտէր Սերովբէն որ կեանքը պար-
գև մըն է . ուստի շնորհակալ կ'ըլլար
Մստուծոյ տուած կենացը ու անոր պահ-
պանութեանը համար . գիտէր որ ամէն
վայրկեան կրնար մեռնիլ, անոր համար
պատրաստ կը կենար . Սէպտ է, կ'ըսէր,
սիրենք ապրիլը, վասն զի պատճառ է մեր
բարեք գործելուն . պէտք է մահուընէ ալ
վախենանք, որ ախտրանքէ՝ զմեզ բռն մեր հայ-
րենիքը չը փանի :

Եւ ահա երբոր մահը վրան հասաւ՝
հանդարտութեամբ և համակամութե-
ողջագուրեց : Մահուընէն քանի մը օր
առաջ արև ժամանակ քալելու ելեր էր .
այն վերջի անգամուն տեսածները, զո-
րոնք քիչ ատենէն բոլորովին պիտի թու-
ղուր, աւելի սիրուն կ'երևնային իրեն :
Մտորէից վրայ նայեցաւ և ըրած բա-

րիքները միտքը գալով՝ մէկէն զուար-
թացաւ : Վանի մը ծաղիկ փնտուեց
գտաւ , զարմացաւ , հոտուըտաց , և օր-
հնեց զՆստուած որ այն ծաղկանց այն-
պիսի հրաշալի գեղեցկութիւն մը տը-
ւած էր : Աղջուկնեց իր ծանօթները ,
ուրախութեամբ սրտի՝ որ մարդկանց
վրայ ոչ մեծ անվստահութիւն մը ու-
նեցեր էր և ոչ ալ չափազանց յուսացեր
էր , որով իրենցմէ ալ չարիք մը չէր տե-
սած : Ստէպ կը հառաչէր ըսելով . Ո՛հ ,
Ի՞նչպէս քաղցր է Տահուան վայրէնէն շտեշել
որ Ռէհու- Տը քնաս հաստացած ըլլանք : Յե-
տին անգամ մ՝ ալ եկաւ աս գերեզմա-
նատունս՝ իրեն ծնողացը հոգւոյն հա-
մար աղօթելու , իրենց հետ հոն հանգ-
չելէն քիչ առաջ :

Ատքը վերջին օրը , իր հոգևորական
պատրաստութիւնները վրնցնելէն ե-
տեւ , որդիքը օրհնեց ու ասանկ խօսե-
ցաւ . Մ՛նայ Բարով . Յեղի հարստութիւն
չէ՞ Ռոզուր՝ այլ լաւ դաստիարակութիւն ու
արհեստ Տը , աստե՛ք ունեցողը որք չըստիք :
Ինչո՞ւ հու լաւ . Տահը քաղցր գիշերուան Տը
կը նճանի , որուն զուարթ աստուած Տը կը յա-
ջորդէ : Մ՛նայ Բարով . Ես Ռէհ գաստ Տը
կ'երթամ՝ որ որ դուք ալ շտապով ի՞մ Էպիէս
պիտի հասնիք : ՄէկՌէհու- Բարուցն քա՛մքե-

ցէր, որոնն որ հրնատ' օգնէցէր, Աստուծոյ
վախը միշտ սրբերնիդ ըլլայ եւ ժողովրդապէ-
տին խօսքին ճարիչ ըրէր :

Աւ մեռաւ . աւելի բարիք ըրաւ քան
շնկոց, անոր համար ալ աշխարհք շու-
տով պիտի մոռնայ զինքը . բայց հոս ա-
մէնքնիս լացինք զինքը, և մեր աս զե-
ղին իշխաններուն գլխաւորը այս խօս-
քերս գրել տուաւ խաչին վրայ՝ որպէս
զի ոչ միայն Սերովբէն յիշուի, այլ նաև
ուրիշներն ալ սորվին թէ ինչպէս սկստք
է առաքինի ու քաղաքակիրթ ըլլալ :
Վասն զի ո՛վ որ զ՝ստուած կը պաշտէ
ու սրտանց կը մեծարէ՝ աստուածասէր է .
ո՛վ որ բարւոյն բարի կը հատուցանէ՝
պարէնէր է . ո՛վ որ ուրիշին բարիք կ'ընէ
առանց շահասիրութեան՝ աստուածասէր է .
ո՛վ որ ուրիշներուն շատ և անմեղ հա-
ճոյքներ կ'ընէ՝ անաստուած է . և ասոնց
վրայ կայացած է առաքինի ու քաղա-
քակիրթ ըլլալը , :

ՀԳ

Ի՛նչ պատճառներո՞ւ համար աղեկոքիւն
պէտք է ընենք :

Իմացայ ուրեմն որ երջանիկ ըլլալու
համար հարկ է առաքինի ու քաղաքա-
կիրթ ըլլամ. ի՛նչ որ չեմ ուզեր որ ու-
րիշները ինձի ընեն՝ ես ալ իրենց չընեմ:
Ի՛մ շահս ալ աս կը սորվեցընէ. եթէ
գէշ ըլլամ՝ ատելի ու արհամարհելի
կ'ըլլամ. եթէ ուրիշները նախատեմ՝
վրէժխնդրութիւննին կը գրգռեմ. ե-
թէ միայն իմ հանգիստս մտածեմ՝ կա-
րօտութեանս ժամանակ բնաւ մէկը ե-
րեսս չնայիր : Ի՛նչ հակառակն՝ եթէ
ուրիշներուն ծառայեմ, օգնեմ՝ փոխա-
րէնը կ'ընդունիմ. արդարութեամբ վա-
րուելով՝ զուրիշները չեմ նախատեր,
որով նաև վախս կընուազի ու խաղա-
ղութիւնս և յոյսս կ'առաւելու : Ի՛նչ
քաղցր հաճոյքներ, որչափ իրական օ-
գուտներ չեմ ունենար՝ իմ նմաններէս
սիրելի ու մեծարոյ ըլլալովս :

Վարձեալ անձ մ'ալ կայ զոր ես ա-
մէն բանէ աւելի պէտք է յարգեմ. մէկ

մը որ իմ ամենէն մանր ու գաղտնի բաներս, ինչուան իմ մտածութիւններս ալ գիտէ. որ զիս կը խայտառակէ երբ ախտերս առաքինութեան քողով կ'ուզեմ ծածկել. որ ոչ երբէք կը մոռնայ ախտերս՝ այլ անդադար միտքս կը ձգէ. ասիկայ ես եմ, կամ իմ խղճմտանքս է: Արբ քարիք մը կը գործեմ, ո՛հ, ի՛նչ քաղցր ախորժ մը կը զգամ, ի՛նչ համակամ զուարթութիւն մը նեղութեանց ժամանակ. օր ունեցեր եմ որ վրաս ճանճրութիւն ու մաղձոտութիւն մը պատեր է, և ուրիշ կերպով չեմ կրցած զիս հանգստացընել՝ եթէ ոչ քարիք գործելով:

Ինդհակառակն, ո՛վ որ իր պարտքերն ոտքի տակ կ'առնու, ունեցած իրաւունքներովը կը զեղծանի. թէպէտ և առջի վայրկենին ախորժ մ'ալ զգայ, բայց շատ չանցնիր՝ ներսէն յանդիմանութե ու տրտմութեան ձայն մը կը լսէ որ ոչ երբէք կը լռէ. կը խօսի իրեն ընկերութեան մէջ եղած ատեն և աւելի ևս միայնութեան ժամանակ. օրուան մէջ և գիշերուան ահաւոր ժամերուն. կը խռովէ զինքը իր գործոցը ժամանակ ու զուարճութիւնները կը դառնացընէ: Աւելի խաղաղ ու զուարթ է արդար մը

բանտին մէջ քան չարագործ մը պա-
լատներու ճոխութեանցը մէջ :

Իմ փափաքս այն չէ՞ արդեօք որ եր-
ջանիկ ըլլամ. ուրեմն ինձի աւելի շա-
հաւոր է որ բարի ըլլամ :

Ի այց շատ անգամ աս ալ կը պատա-
հի, որ՝ Աղէի ըրի ու ճակարդ Գնայ խօսքն
ալ ըսեմ : Մարդիկ իմ արդարութիւնս
չեն գիտեր, դիտաւորութիւններս կը
զրպարտեն, կրնան ըսել որ միայն իմ
շահուս համար էս բարիք կը գործեմ.
չարերը՝ իրենց շնկոցովը զիս կը վատա-
համբաւեն, կեղծաւորն ու շողոքորթը
կը յափշտակեն ինձմէ այն պաշտօններս
որոնց էս արդեամբ ու բարիք գործե-
լով արժանի եղեր էի. ապերախտը՝ ը-
րած բարեգործութիւններովս եղծա-
նելով՝ կ'ուզէ ինձի մնասել. տեսնեմ
պիտի նաև անզգամը յաջողութե մէջ,
և առաքինին ընկճուած. պիտի տես-
նեմ դարձեալ որ զօրաւորը իր ամէն
կամքը կը կատարէ և ուրիշները զինքը
կը պատուեն. իսկ անզին խեղճ արդա-
րը՝ որ միայն համբերութեամբ կրնայ
իրմէ զօրաւորին դէմն առնուլ, ինչուան
առօրեայ հացին կարօտ մնացած իր ըն-
տանիքը պահելու համար :

Ի այց թափանցեր էմ արդեօք իրենց

սրտին խորը • տեսեր եմ մէկուն քաշած
նեղու թիւնն ու մէկալին վայելքը : Արբ-
նամ ենթադրել անզգամին տանջան-
քը՝ նոյն իսկ իր անօրէնութիւնները՝ ի
գործ դնելու միջոց՝ երբոր գոհ կ'երևայ :
Ա՛ռ զէի՛ ես իմ վիճակս չարագործին
հետ փոխել :

Ալ վերջը՝ օրը իրիկուն չեղած պէտք
չէ գովել • շատ անգամ չարին յաղ-
թանակը սգոյ կը փոխուի : Տեսայ ամ-
պարիշտը կաղնիի մը պէս կանգուն ու
հաստատուն • քիչ մը ետքը անցայ՝ ու
կայծակը մոխիր դարձուցեր էր : Ա եր-
ջապէս, ամէն բանին ետքը կը հասնի •
հասակդ կ'առնուս, կրքերդ կը պա-
ղին, մահուան կէտը կը հասնի, և ան
ատեն :

Անթադրենք նաև թէ արդարը բո-
լոր իր կենացը մէջ զրպարտուի ու ար-
համարհուի, թշուառութեան մէջ ըլ-
լայ ու չարչարուի • բայց ինչ են կենաց
այս քանի մը օրերը : Այ կեանքէս ետև
ուրիշ անվախճան կեանք մը կու գայ,
ան ատեն վարձքն ու պատիժը չեն սխա-
լիր • վասն զի Աստուած է տուողը՝ որ
ամէն բան կը տեսնէ, և չխտրեր ան-
ձինքը, ինքը որ էութեամբ արդար է :
Արեմն պիտի իյնամ ես ալ իր ձեռ-

քր • այն ատեն ինչպէս կ'ուզէի որ ըլ-
լամ :

Եստուած մեզի առաջին պատուիրանն
աս տուաւ որ զինքը սիրենք • և այս առ-
ջի պատուիրանին նման ուրիշ մ' ալ որ
մեր ընկերն ալ մեզի պէս սիրենք :

Սիրեմ ուրեմն զամէնքը , բնաւ մէ-
կու մը չփնասեմ և ձեռքէս եկածին չափ
բարեգործութիւն ընեմ ուրիշներուն •
Վերջապէս , ԸԼԼԱՄ ԱՌԱՔԻՆԻ ՈՒ
ՔԱՂԱՔԱԿԻՐԹ՝ ՎԱՍՆ ԶԻ ԵՐԶԱՆԻԿ
Կ՝ՈՒԶԵՄ ԸԼԼԱԼ :



Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց

ՅԱՌԱԶԱԲԱՆ	5
Ա. Գրուածքին վախճանը	7
Բ. Աստուած	10
Գ. Պարտք առ Աստուած	14
Դ. Յայտնութիւն	19
Ե. Յիսուս Քրիստոս	27
Զ. Մարդ	30
Է. Հոգի	31
Ը. Ազատ կամք	32
Թ. Մարմին	34
Ժ. Խօսք	38
ԺԱ. Մարդս ենթակայ է կատարելութեան	39
ԺԲ. Մարդս կը խորհի	41
ԺԳ. Բարոյական զգացմունք ու խղճմտանք	43
ԺԴ. Մարդս կ' ուզէ միշտ աւելի երջանիկ լլալ	45
ԺԵ. Մարդս ընկերական է	48
ԺԶ. Մարդիկ հաւասար են	50
ԺԷ. Իրաւունք և պարտք	53
ԺԸ. Իրաւունք և պարտք պահպանութեան	54
ԺԹ. Իրաւունք և պարտք կատարելագործ ծութեան	60
Ի. Կատարելագործել զմարմին	61

ԻԱ.	Կատարելագործել զմիտս	67
ԻԲ.	Կատարելագործել զկամս	73
ԻԳ.	78
ԻԴ.	Իրաւունք և պարտք սեպհականութե	79
ԻԵ.	80
ԻԶ.	81
ԻԷ.	83
ԻԸ.	84
ԻԹ.	86
Լ.	87
ԼԱ.	89
ԼԲ.	90
ԼԳ.	92
ԼԴ.	96
ԼԵ.	Իրաւունք և պարտք ազատութեան .	98
ԼԶ.	Իրաւունք և պարտք պաշտպանութե .	100
ԼԷ.	Իրաւունք և պարտք ճշմարտութեան	104
ԼԸ.	106
ԼԹ.	109
Խ.	111
ԽԱ.	115
ԽԲ.	Քաղաքական ընկերութիւն	116
ԽԳ.	117
ԽԴ.	119
ԽԵ.	120
ԽԶ.	121
ԽԷ.	123
ԽԸ.	127
ԽԹ.	Ընտանեկան ընկերութիւն	129
Ծ.	Դաստիարակութիւն	133
ԾԱ.	Որդիք	135
ԾԲ.	Եղբարք	139
ԾԳ.	Բարեկամք	140

ԾԴ. Չարասէրք	144
ԾԵ. Հարուստն ու աղքատ , իշխանաւորք և հպատակք	146
ԾԶ. Տէր և ծառայ	150
ԾԷ. Բարերարք և բարերարեալք	152
ԾԸ. Ծերք	155
ԾԹ. Եկեղեցականք	158
Կ . Կանայք	160
ԿԱ. Նախորդք և յաջորդք	161
ԿԲ. Անասունք	165
ԿԳ. Սեփական վիճակ	166
ԿԴ.	168
ԿԵ. Գոհ ըլլալ իր սեփական վիճակին վրայ	174
ԿԶ.	177
ԿԷ. Կատարել զպարտս սեփական վիճակի	182
ԿԸ. Քաղաքակրթութիւն	184
ԿԹ.	189
Հ	191
ՀԱ.	194
ՀԲ.	199
ՀԳ. Համառօտ նկարագիր առաքինի ու քաղաքակրթ մարդու մը	201
ՀԴ. Ի՞նչ պատճառներու համար աղէկու թիւն պէտք է ընենք	216



141	101	Die Geschichte der Stadt...
142	102	Die Geschichte der Stadt...
143	103	Die Geschichte der Stadt...
144	104	Die Geschichte der Stadt...
145	105	Die Geschichte der Stadt...
146	106	Die Geschichte der Stadt...
147	107	Die Geschichte der Stadt...
148	108	Die Geschichte der Stadt...
149	109	Die Geschichte der Stadt...
150	110	Die Geschichte der Stadt...
151	111	Die Geschichte der Stadt...
152	112	Die Geschichte der Stadt...
153	113	Die Geschichte der Stadt...
154	114	Die Geschichte der Stadt...
155	115	Die Geschichte der Stadt...
156	116	Die Geschichte der Stadt...
157	117	Die Geschichte der Stadt...
158	118	Die Geschichte der Stadt...
159	119	Die Geschichte der Stadt...
160	120	Die Geschichte der Stadt...
161	121	Die Geschichte der Stadt...
162	122	Die Geschichte der Stadt...
163	123	Die Geschichte der Stadt...
164	124	Die Geschichte der Stadt...
165	125	Die Geschichte der Stadt...
166	126	Die Geschichte der Stadt...
167	127	Die Geschichte der Stadt...
168	128	Die Geschichte der Stadt...
169	129	Die Geschichte der Stadt...
170	130	Die Geschichte der Stadt...
171	131	Die Geschichte der Stadt...
172	132	Die Geschichte der Stadt...
173	133	Die Geschichte der Stadt...
174	134	Die Geschichte der Stadt...
175	135	Die Geschichte der Stadt...
176	136	Die Geschichte der Stadt...
177	137	Die Geschichte der Stadt...
178	138	Die Geschichte der Stadt...
179	139	Die Geschichte der Stadt...
180	140	Die Geschichte der Stadt...
181	141	Die Geschichte der Stadt...
182	142	Die Geschichte der Stadt...
183	143	Die Geschichte der Stadt...
184	144	Die Geschichte der Stadt...
185	145	Die Geschichte der Stadt...
186	146	Die Geschichte der Stadt...
187	147	Die Geschichte der Stadt...
188	148	Die Geschichte der Stadt...
189	149	Die Geschichte der Stadt...
190	150	Die Geschichte der Stadt...
191	151	Die Geschichte der Stadt...
192	152	Die Geschichte der Stadt...
193	153	Die Geschichte der Stadt...
194	154	Die Geschichte der Stadt...
195	155	Die Geschichte der Stadt...
196	156	Die Geschichte der Stadt...
197	157	Die Geschichte der Stadt...
198	158	Die Geschichte der Stadt...
199	159	Die Geschichte der Stadt...
200	160	Die Geschichte der Stadt...

62



893

0027638

893

